

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (17)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՓԻԼՈԼՈԳԻԱ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOLOGY»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ասատրյան Գ. Ս., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Գաբրիելյան Յու. Ս., Գասպարյան Ս. Բ.,
Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Դիրբարյան Ն. Հ., Հովակիմյան Ա. Է.
(*պատասխ. քարտուղար*), Հովսեփյան Լ. Ս. (*պատասխ. խմբագիր*), Պետրոսյան Դ. Վ.,
Սաֆարյան Վ. Հ., Մինոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Аветисян Ю. С.**, **Асатрян Г. С.**,
Брутян Л. Г., **Габриелян Ю. М.**, **Гаспарян С. Х.**, **Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Дилбарян Н. А.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Овсепян Л. С.**
(*ответ. редактор*), **Петросян Д. В.**, **Сафарян В. А.**, **Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Asatryan G. S., **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Avetisyan Y. S.**, **Brutyan L. G.**,
Dilbaryan N. H., **Gabrielyan Y. M.**, **Gasparyan S. Q.**, **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Hovsepyan L. S.** (*Managing Editor*), **Petrosyan D. V.**, **Safaryan V. H.**, **Simonyan A. H.**

ՆԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԵԼՈՒԴԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՐԿՈՒ ԲԵՎԵՌՆԵՐԸ

ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՍՅԱՆ

Արդ, ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և
գաղտնի բան չի եղել, որ ի հայտ չգա:

Մարկոս ավետարանիչ

Բառեր, բառեր, բառեր:

Վիլյամ Շեքսպիր

*Ներակայություն*¹-ը, ինչպես տրամաբանությունից վերցված շատ ուրիշ տերմիններ, լեզվաբանության մեջ յուրահատուկ բեկում է ստացել: Լեզվաբանները ներակա են անվանում այն իմաստները, որոնք լեզվական ուղղակի, բացահայտ արտահայտություն չեն ստանում, բայց հասկացվում են արտահայտվածի հիման վրա:

Ներակայությունը քննող բոլոր ուսումնասիրողները ներական հակադրում են արտակային, այսինքն՝ չարտահայտվածը՝ արտահայտվածին, ոչ բացահայտը՝ բացահայտին: Մա միանգամայն բնական և տրամաբանական մոտեցում է, եթե դիտարկվում է ամբողջ իմաստային համակցության մեկ բաղադրիչը. այն կա՝ մ արտահայտված է, կա՝ մ ոչ: Բայց եթե տեսադաշտում ոչ թե առանձին բաղադրիչն է, այլ այն ամբողջը, որի մեջ այդ բաղադրիչը մտնում է, պարզվում է, որ *ներակայություն* - *արտակայություն* գույգում խախտված է համաչափությունը. բացասական նշանով տարրը հակադրվում է ոչ թե դրական նշանով տարրին, այլ զրոյականին, այսինքն՝ ըստ էության դիտարկվում է եռանդամ հարաբերության մի կեսը: Ներակայությունը բովանդակության ոչ ամբողջական արտահայտությունն է, այլ կերպ ասած՝ թերարտահայտումը: Դրա հակառակը՝ պիտի լինի ոչ թե պարզապես արտահայտումը, այլ գերարտահայտումը՝ արտահայտության ուռճացումը, իմաստային բաղադրիչների համեմատ արտահայտության բաղադրիչների քանակային գերակշռությունը, որ նշանակում է ոչ անհրաժեշտ և այդ առումով ավելորդ բաղադրիչների առկայություն, այսինքն՝ հա-

¹ Հայերեն գիտական գրականության մեջ և բառարաններում *ներակա* են թարգմանվել երեք տարբեր տերմիններ՝ *իմպլիցիտ*-ը, *իմանենտ*-ը և *ինհերենտ*-ը: Ընդ որում, եթե վերջին երկուսը հոմանիշներ են, ապա առաջինը միանգամայն տարբեր է նրանցից: Հենց առաջինի *ներակա* թարգմանությունն ենք նախընտրելի համարում՝ հաշվի առնելով նաև *ներակա* - *արտակա* (*իմպլիցիտ* - *էքսպլիցիտ*) տերմինազույգը կազմելու հնարավորությունը, իսկ *իմանենտ*-ի իմաստը արտահայտում է *ներհատուկ* տերմինը:

վելուրդայնություն: Այսպիսով՝ իրար բառիս բուն իմաստով հակադիր են ներակայությունը՝ թերարտահայտումը, և հավելուրդայնությունը՝ գերարտահայտումը, իսկ արտակայությունը՝ համարժեք արտահայտումը՝ որպես ոսկե միջին, այս երկուսի միջև է: Ներակայության և հավելուրդայնության գուգակից հաշվառումը լրացնում է Կարցևսկու դրույթը լեզվական նշանի անհամաչափ երկակիության մասին²։ փաստորեն հավելուրդայնությունը շեղում է համաչափությունից դեպի արտահայտության գերակշռում, իսկ ներակայությունը՝ դեպի բովանդակության գերակշռում:

Լեզվի էությունը, նրա գոյության իմաստը և նպատակը գիտակցական բովանդակության արտահայտումն են: Սրանից կարելի պիտի լիներ եզրակացնել, որ լեզվական հաղորդակցումը ձգտում է հասնելու բովանդակության միանշանակ, հստակ և, ամենակարևորը, ամբողջական արտահայտմանը: Մակայն ոչ միայն այդ նպատակը միշտ չէ, որ գոնե հարաբերականորեն իրագործվում է, այլև ձգտումն ինքը ոչ միշտ է բացարձակ նույնիսկ անկեղծ հաղորդակցման դեպքում: Ներակայությունը լեզվում չափազանց մեծ տարածում և բազմատեսակ դրսևորումներ ունի: Այդ դրսևորումների մի մասը դիտարկվել է տարբեր ուսումնասիրություններում՝ տարբեր չափերով ուշադրության արժանանալով³: Համեմատաբար հաճախ գուգադրվում են ներակայման լեզվաբանական և տրամաբանական ըմբռնումները, խոսվում է լեզվական և խոսքային ներակայությունների տարբերության մասին (երբեմն, հատկապես գրականագիտական ուղղվածություն ունեցող ուսումնասիրություններում, *լեզու - խոսք* գույգը փոխարինվում է *լեզու - տեքստ* գույգով), տարբերակվում են նշյալի ներակայությունը և նշանակյալի ներակայությունը, դիտարկվում են առօրյա հաղորդակցումը, գեղարվեստական խոսքը՝ երբեմն գուգադրվելով գիտական ուճին, անդրադարձ է արվում բառակազմությանը կամ բառի իմաստույթային կազմին, ընդհանուր ձևով նշվում է, որ լեզվատիպերն իրենց առանձնահատկություններն են ունենում նաև ներակայության հարցում: Լեզվական ներակայության որոշ ուշագրավ հայեցակետեր, սակայն, առայժմ դուրս են մնացել ուսումնասիրության ոլորտից, քննված հարցերն էլ քննված են ոչ նույն խորությամբ:

Հավելուրդայնություն մեծ մասամբ համարվում է նույն իմաստի բազմակի արտահայտումը. այս կապակցությամբ սովորաբար ուշադրության են արժանանում բառային և քերականական իմաստները, ինչպես նաև նրանց խաչաձևումները: Տեղեկատվության տեսության մասնագետները

² Տե՛ս **Карцевский С.** Об асимметричном дуализме лингвистического знака // **Звегинцев В. А.** История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях. Ч. II, М., 1965, էջ 85-90:

³ Ներակայության տեսակների, առնչակից իրողությունների և դրանց տարբեր մեկնաբանությունների մասին տե՛ս **Լ. Գ. Բրուսյան**, Իմպլիկացիայի հասկացությունը տրամաբանության և լեզվաբանության մեջ. «Լրաբեր հասարակական գիտություններ», Եր., 1990, № 12, էջ 44-53:

երբեմն փորձում են տեքստում տառերի կամ հնչույթների հանդես գալու հավանականության մաթեմատիկական հաշվարկումներով գնահատել տվյալ լեզվով տեքստում հավելուրդայնության չափը⁴: Սա կապուղիների արդյունավետության չափի գնահատման եղանակ է, որ տեխնիկական առումով մեծ կարևորություն ունի այդ ոլորտում, սակայն դժվար է ենթադրել, թե այսպիսի հաշվարկումը որևէ արժեք ունի լեզվաբանության համար⁵ (եթե նկատի չունենանք զուցե հնարավոր կիրառումը անհայտ լեզվով տեքստի վերծանման մեջ), քանի որ լեզվաբանության հիմքը ոչ թե որևէ տեսություն է, այլ լեզվի կիրառումը լեզվակիրների կողմից: Հավելուրդայնությունը կանխագուշակելիությամբ բացատրելը⁶ ըստ էության հավելուրդայնության լեզվաբանական ըմբռնման հետ որևէ առնչություն չունի⁷:

Ներակայությունն ու հավելուրդայնությունը կարող են ուսումնասիրվել՝ լեզվի տարբեր կառուցվածքային մակարդակների հետ կապված: Սակայն բոլոր մակարդակները միևնույն ձևով և միևնույն չափով չեն կարող քննվել: Ներակայությունը և հավելուրդայնությունը հանդես են գալիս իմաստային կառուցվածք (ներքին ձև) ունեցող միավորներում, ընդ որում՝ այդ միավորների ծավալի և հաղորդակցական ինքնուրույնության աճին զուգընթաց ավելի բազմաքանակ և բազմատեսակ են դառնում ներակայության և հավելուրդայնության դրսևորումները: Ամեն մի հաջորդ միավոր, իր յուրահատուկ ներակայություններից ու հավելուրդայնություններից բացի, ներառում է նաև նախորդինը կամ նախորդներինը՝ դրանց ևս նոր հնա-

⁴ Sté u, op., **Шеннон К.** Предсказание и энтропия печатного английского текста // Работы по теории информации и кибернетике. М., 1963, էջ 669-686, **Яглом А. М., Яглом И. М.** Вероятность и информация. М., 1973, էջ 236-281, որտեղ փորձ է արվում այդ տեսությունը կիրառելու անգամ բանաստեղծական լեզվի նկատմամբ, (տե՛ս «Энциклопедия кибернетики». Т. 2. Киев, 1974, էջ 602-603):

⁵ Չնայած դրան՝ եղել են նաև խանդավառ արձագանքներ՝ Շենոնի հիմնական երախտիքը տեղեկատվության հաղորդման, պահպանման և վերամշակման ամենատարբեր գործընթացների հետ կապված հարցերին ճշգրիտ քանակային մոտեցման հնարավորությունը մատնացույց անելն է, լեզվաբանության համար խիստ արժեքավոր հանգամանք, քանի որ տեղեկատվության հաղորդումը լեզվի հիմնական գործառույթն է՝ (Sté u **Яглом И. М., Добрушин Р. Л., Яглом А. М.** Теория информации и лингвистика // Вопросы языкознания. М., 1960, № 1, էջ 100): Ավելորդ չէ նշել, որ ինքը՝ Շենոնը, շատ ավելի սթափ և զուսպ է գնահատում իր տեսության կիրառելիությունը տարբեր բնագավառներում. «...տարբեր գիտությունների ներկայացուցիչները պիտի հստակորեն հասկանան, որ տեղեկատվության տեսության հիմնական դրույթները վերաբերում են ուսումնասիրության մի շատ յուրահատուկ ուղղության, որը ամենևին էլ անպայման արդյունավետ չպիտի լինի հոգեբանության, տնտեսագիտության և այլ հասարակական գիտությունների մեջ» (**Шеннон К.** Бандвагон // Работы по теории информации и кибернетике, էջ 667-668):

⁶ Կարո՞ղ է արդյոք որևէ մեկը Բեռնստայնի այն պնդումից, որ Բեթհովենը բոլոր երգահաններից լավ է կարողացել գտնել այն ճիշտ նոտաները, որոնք պիտի լինեն նախորդներից հետո (տե՛ս **Бернстайн Л.** Музыка – всем. М., 1978, էջ 114-116), եզրակացություն անել Բեթհովենի երաժշտության հավելուրդայնության մասին:

⁷ Անհամեմատ ավելի համակրելի կարող էր լինել հնչյունային հավելուրդայնության գեղարվեստական պատկերումը, ասենք՝ այնպիսին, ինչպիսին տալիս է Հեսսեն նկարագրելով Բրամսի պարտիտուրաներում եղած ավելորդ նոտաները նվագած երաժիշտների բազմահագարանոց թափորը (տե՛ս **Հ. Հեսսե**, Տափաստանի գայլը, Եր., 2003, էջ 209):

րավորություններ տալով:

Բառերն ապահովում են հաղորդման տեղեկատվական հիմքը և դրանով առաջին հերթին լեզուն ու խոսքն արտալեզվական աշխարհի հետ կապողի դեր են կատարում. բառերի քերականական ձևափոխությունները, արտալեզվական վերաբերության հետ կապված լինելով հանդերձ, առաջին հերթին նրանց շարահյուսական կապակցություններ կազմելուն են ծառայում: Այս երկուսի փոխհարաբերությունը ի հայտ է գալիս այնտեղ, որտեղ հանդիպում են բառերը և քերականությունը, այսինքն՝ նախադասության մեջ:

Նախադասությունը երկկողմ բնույթ ունի. արտացոլում է որևէ իրադրություն և միտք է արտահայտում այդ իրադրության մասին: Բնականաբար, ոչ մի նախադասություն չի կարող լիովին, բոլոր տարրերով և մանրամասնություններով ընդգրկել իր շրջագծած իրադրությունը, ինչպես կարող է անել որևէ նկար: Հնարավոր չէ անգամ պատկերացնել մի նախադասություն, որն իր արտացոլած իրադրության բոլոր բաղադրիչների (դեռ մի կողմ թողած այն, որ այդ բաղադրիչներն օբյեկտիվորեն առանձնացված չեն և որոշվում են խոսք կազմողի սուբյեկտիվ հայեցողությամբ) բոլոր հատկություններն ու բոլոր հարաբերություններն ընդգրկի, այսինքն՝ ունենա բոլոր պարագաները, խնդիրների մեծ մասը, որոշիչների անվերջ շարքեր: Այդպիսի փորձ, իհարկե, ոչ ոք չի ձեռնարկում: Բարեբախտաբար, նախադասությունը սոսկ պատկերող չէ, այլ նաև, և առաջին հերթին, միտք հաղորդող: Իսկ մտքի խճանկարի մեջ ընդգրկվող տարրերը որոշում է միտքն արտահայտողը, որն էլ ընտրում է այն, ինչ իր համար կարևոր է սովյալ իրադրության մեջ, ընդ որում՝ միևնույն իրադրությանը վերաբերող ընտրությունները կարող են անգամ հասման կետ չունենալ (դրա լավագույն օրինակներից մեկը հանրահայտ պատմությունն է նույն շիշը բնութագրող լավատեսի և հոռետեսի մասին): Այդ ընտրությունը խիստ անհատական է, բայց, ամենակարևորը, սահմանափակ:

Նախադասության այս հատկությունները կապելով ներակայության և հավելորդայնության հետ՝ կարելի է տեսնել, որ էապես տարբերվում են վերաբերյալի և նշանակյալի ներակայումները: Վերաբերյալը նախադասության մեջ միշտ և անխուսափելիորեն ներկայացվում է ներակայության զգալի չափաբաժնով. նախադասության մեջ տրվում է այն նվազագույնը, որն անհրաժեշտ է նշանային հղման համար: Հենց դրա հետևանքով են իրարից տասնյակ կամ հարյուրավոր մեծ ու փոքր տարբերություններ ունեցող վերաբերյալները միավորվում մեկ նախադասության նշյալի դաշտում, հենց դա է հնարավոր դարձնում իրարից այդչափ տարբերվող իրադրություններ նշանակելու համար նույն նախադասության գործածությունը: Ինչ վերաբերում է նշանակյալին, ապա իրադրության բաղադրիչների ներակայում կատարվում է *իրադրություն* → *միտք* անցման մեջ, միտքն արդեն ներակայման գոյիչով անցած իրադրությունն է ներկայացնում արտա-

հայտման, և լեզվական արտահայտություն է ստանում ոչ թե իրադրությունը, այլ այն, ինչ նրանից մնացել է մտքի մեջ: Այնպես որ նշանակյալի ներակայությունը նվազագույն չափերի է հասցված և հիմնականում լեզվական կանոններով է պայմանավորված լինում. ավելին, հենց այստեղ է հերթը հասնում հավելուրդայնությանը, հենց մտքի բաղադրիչներն են հավելուրդային դրսևորումներ ստանում, այդ պատճառով էլ վերաբերյալի հետ կապված հավելուրդայնությունը ավելի շուտ վկայում է իրադրության մտային արտացոլման մեխանիզմի խափանումների և մտքի հավելուրդայնության մասին. վերաբերյալի բաղադրիչների հավելուրդային արտահայտումը նշանակում է, որ դրանք փոխանցված են եղել մտային կառույցին: Ինչպես երևում է, լեզվական արտահայտության և մտային բովանդակության միջև ավելի մեծ համապատասխանություն կա, քան մտքի և առարկայական աշխարհի միջև:

Նախադասությունը նաև վերաբերական հենակետերի հարաբերություններն է ներկայացնում: Այստեղ արդեն գործի է դրվում քերականությունը, որը որոշ դեպքերում միաժամանակ և՛ արտացոլող, և՛ կապակցող գործառույթներ ունի, որոշ դեպքերում էլ՝ զուտ կապակցող գործառույթ (քերականական իմաստների այս երկու տեսակները տարբերակում է Մեպիրը՝ առաջինները՝ կոչելով որոշակի հարաբերական հասկացություններ, իսկ երկրորդները՝ զուտ հարաբերական հասկացություններ⁸): Այս վերջինները հավելուրդային են իրականության արտացոլման՝ վերաբերական գործառույթի տեսանկյունից, բայց միանգամայն արդարացված են նախադասության բաղադրիչների կապակցման կամ, Յակոբսոնի տերմինով ասած, բանաստեղծական գործառույթի⁹ տեսանկյունից: Նախադասության մեջ բառային ու քերականականը լրացնում են իրար՝ հիմք և միջոց դառնալով լեզվի տարբեր գործառույթների իրականացման համար:

Քերականության կառուցվածքաբանական ուսումնասիրությունները շրջանառության մեջ են դրել այսպես կոչված գրո ձևույթի գաղափարը, որն ընդամենը հարացույցի բոլոր անդամների նկարագրության և հակադրման ընթացակարգը միօրինակացնելուն է ծառայում և հնարավորություն է տալիս այդ անելու՝ առանց իմաստաբանական տերմիններ գործածելու: Զրո ձևույթի մասին խոսվում է ըստ էության այն դեպքերում, երբ հակադրության անդամներից մեկում քերականական իմաստը ներակայված է: Այս տերմինի կիրառելիությունը սահմանափակված է համադրական (կցական և թեքական) լեզուներով, որոնցում կա նաև հարաբերակից քերականական իմաստի արտակա արտահայտություն. ոչ մեկի մտքով չի անցնի ասել, որ վերլուծական (անջատական) լեզվում մի ամբողջ քերականական հարա-

⁸ Տե՛ս **Сепир Э.** Язык. Введение в изучение речи // Избранные труды по языкознанию и культурологии. М., 1993, էջ 101:

⁹ Տե՛ս **Якобсон Р.** Лингвистика и поэтика // Структурализм: “за” и “против”. М., 1975, էջ 202-204:

ցույց կազմվում է զրո ձևությամբ: Այս հանգամանքը հուշում է, որ քերականական (ձևաբանական) իմաստների ներակայությունը կարող է համարվել լեզվատիպի բնութագրման տարրերից մեկը: Անջատական լեզուներում քերականական իմաստի ներակայությունը ոչ թե հակադրության մի անդամի, այլ հակադրվող բոլոր եզրերի, ամբողջ հարացույցի հատկանիշն է, ընդ որում ընդգրկում է բոլոր հարացույցները՝ լեզվի ձևաբանական համակարգը: Իսկ համադրական կամ բազմահամադրական լեզվում դիտվում են առանձին «թաքնված քերականական կարգեր»¹⁰: Դրանց նկարագրությունները հաճախ գրեթե կամ լիովին համընկնում են ներակայման բնութագրումներին. ակնհայտ է, որ դրանք այլ անվանում ստացող ներակայված իմաստներ են: Հարց է, թե որքանով է արդարացված դրանք քերականական կարգ համարելը. այդպիսի կարգերի առանձնացումը շատ դեպքերում կարող է պարզապես մի լեզվում քերականական կարգ ձևավորող իմաստները մի ուրիշ լեզվի քերականության մեջ չգտնելու հետևանքը լինել:

Երբ մեկ նախադասությունն անբավարար է համարվում հաղորդակցական նպատակադրումն իրագործելու համար (երբ նախադասությունատույթին համապատասխանող իրադրությունը գնահատվում է սուկ որպես միկրոիրադրություն՝ ավելի ընդարձակ մակրոիրադրության մի բաղադրիչ), կազմվում է բազմասույթ տեքստ:

Տեքստը իր կառուցվածքի մեջ մտնող բոլոր լեզվական միավորների ներակայությունների և հավելորդայնությունների հանգուցակետն է, որը այդ ամենին նաև հատկապես իրեն բնորոշը, միայն իր մեջ և միջոցով հասնելին է ավելացնում: Տեքստում որոշակի է լեզվական կառույցը՝ իր արտակա բովանդակությամբ: Պատահական չէ, որ հենց դրա ուսումնասիրությունից է սկիզբ առել տեքստի լեզվաբանությունը: Մինչդեռ տեքստի բովանդակային ընդգրկումը անհամեմատ մեծ է նրա արտակա բովանդակությունից: Այդպիսին է անգամ մենասույթ տեքստը, իսկ տեքստի բաղադրիչ ասույթների քանակի աճին զուգընթաց երկրաչափական պրոգրեսիայով ընդլայնվում են նրա բովանդակային սահմանները: Տեքստի ներքին պահուստային կարողություններին հավելվում է այն, որ միջտեքստային կապերի շոշափուկներն անվերջ տարածելով՝ տեքստն ունակ է դառնում անսահմանորեն ընդարձակելու իր իմաստային ուստայնի սփռվածքը: Վերաբերելով տեքստի իմաստին ընդհանրապես՝ սա վերաբերում է նաև մասնավորապես իմաստների ներակայությանը և հավելորդայնությանը: Այն պնդումը, որ «արտապատկերման ոչ լրիվությունը արվեստի պարտադիր պայմանն է և ընթերցողից պահանջում է չասվածի ինքնուրույն լրացում»¹¹, ճշմարիտ է, բայց և թերի: Նշվածը միայն գեղարվեստական տեքս-

¹⁰ Տե՛ս **Уорф Б. Л.** Грамматические категории // Принципы типологического анализа языков различного строя. М., 1972, էջ 45-53, **Кацнельсон С. Д.** Типология языка и речевое мышление. Л., 1972, էջ 78-94:

¹¹ **Арнольд И. В.** Стилистика. Современный английский язык. М., 2002, с.147.

տի առանձնահատկությունը չէ. այդպիսին են բոլոր տեքստերը: Ճիշտ է, տարբեր գործառական ոճերում ներակայության տարբեր չափեր են ընդունված, բայց ոչ մի տեքստ դրանից խուսափել չի կարող: Սովորաբար արտակայությունը գիտական տեքստի բնորոշ հատկանիշն է համարվում, բայց գիտական տեքստն իրականում ոչ թե ներակայությունից լիովին ազատ, այլ արտակայության բարձր ցուցիչ ունեցող տեքստ է: Գիտական տեքստը ձգտում է հնարավորին չափ մեծ արտակայության, բայց դրա հետ անպայման գուգակցվում է ներակայումը. նախ՝ գիտական տեքստը լեզվական տեքստ է, ուրեմն լեզվի օրինաչափությունները շրջանցել չի կարող, և ապա՝ գիտական տեքստը ներակա է դառնում այնտեղ, որտեղ այն վերջանում է:

Ներակայությունը և հավելուրդայնությունը տեքստում անսահման և հետևաբար անսահմանելի չափերի են հասնում: Միննույն տեքստի բազմակի ընկալումների և բազմակի մեկնաբանումների հնարավորությունը ստիպում է հրաժարվել բոլոր հնարավոր շեղումների ուղղվածությունն ու չափը հաշվարկելու և միանշանակորեն որոշելու հավակնությունից:

Տեքստի բովանդակային հյուսվածքը կարելի է համեմատել երաժշտական թեմայի և վարիացիաների հետ՝ այն տարբերությամբ, որ եթե մի երգահան կարող է հիացնել իր թեմայի երեսուն կամ երեսուններկու վարիացիաներով, ապա տեքստի թեմայի (արտակա իմաստի) վարիացիաներն անհաշվելի են, և բացի այդ՝ եթե երաժշտական վարիացիաները տրվում են արտակա հաջորդումով, ապա տեքստում դրանք բոլորը որպես ներունակ իմաստային զարգացումներ ներառված են թեմայի մեջ: Տեքստի ամեն մի մեկնաբանություն այդ թեմայի մի վարիացիա է՝ ներակայված իմաստներից մեկի արտակայում, որի ժամանակ մյուսները ներակայված են մնում. ավելին, կարելի է ասել, որ հենց մեկի արտակայումն է ամրապնդում մյուսների ներակայությունը:

Ամբողջական տեքստի հավելուրդայնությունը (բովանդակության և արտահայտության ծավալային համապատասխանության տեսակետից) և սկզբունքորեն չափման ենթակա չէ¹², քանի որ չկան դրա հստակ և հաստատուն չափանիշներ: Տեքստի կամ նրա որևէ հատվածի ծավալն այս առումով որևէ դեր չի կատարում: Այսպես՝ դետեկտիվ ստեղծագործությունը ըստ էության նպատակ ունի արտակա դարձնելու մեկ ներակայում՝ «Հանցագործը ...-ն է» նախադասության մեջ ներակայված անունը: Մյուս կողմից՝ նույնիսկ չնչին քանակով լրացուցիչ մանրամասնություններ ընդգրկելու ցանկությունը երբեմն կարող է զավեշտի հանգեցնել¹³, մինչդեռ այս

¹² Հավելուրդայնությունը միավորների վերականգնելիությամբ բացատրելու գալթակողությունը, սակայն, գործում է նաև այստեղ. այդպիսի գիտափորձերի նկարագրություն տե՛ս, օր., **Ե. Վ. Գրուդեա**. Избыточность языка и избыточность текста: некоторые размышления // Труды ИЛИ РАН. Т. VI, ч. 2, СПб., 2010, էջ 83-87, **Ե. Վ. Կոնովա**. Исследование избыточности русского звучащего текста // նույն տեղում, էջ 92-111:

¹³ Օրինակ՝ երբ «Միմինտ» ֆիլմի հերոսը մեքենայի կայանելու տեղի նկարագրու-

դեպքում ընդամենը գործում է իրադրության բաղադրիչի արժեքի յուրօրինակ ըմբռնում, որը յուրօրինակ է այնքանով, որ չի համապատասխանում ընկալողի հաղորդակցական սպասելիքներին. նույն նկարագրությունները միանգամայն տեղին և խիստ արժեքավոր կլինեին, ասենք, հանցագործության վկայի ցուցմունքներում: Տեքստի այս կամ այն հատվածի առկայությունը, հետևաբար, դիսկուրսային պատճառաբանվածություն ունի և դրա հաշվառումով կարող է արդարացված կամ չարդարացված համարվել:

Ամեն մի ժամանակաշրջանում տեքստի տարատեսակ հատվածների անհրաժեշտության կամ ցանկալիության վերաբերյալ ուրույն պատկերացումներ են լինում¹⁴, և մեկը մյուսի հիման վրա գնահատելն անպտուղ զբաղմունք կլինի: Ներակայության և հավելուրդայնության տարածամանակային մեկնաբանության բացառումը միայն տեքստի յուրահասկությունը չէ, այլ ընդհանուր սկզբունք: Ներակայությունը և հավելուրդայնությունը, իրենք տարածամանակայնորեն չբնութագրվելով հանդերձ, լեզվի տարածամանակային փոփոխությունների գործուն ազդակներ են¹⁵:

Ներակայությունը, արտակայությունը և հավելուրդայնությունը, այսպիսով, ընդգրկում են լեզվի ողջ իմաստային համակարգը: Խոսքի որևէ տարրի իմաստ որպես ներակա, համարժեք արտահայտություն ունեցող կամ հավելուրդային գնահատելը կախված է գնահատման տեսանկյունից, բացարձակ գնահատում չի կարող լինել. վերաբերականն ու կառուցվածքայինը, ձևաբանականն ու շարահյուսականը, լեզվականն ու խոսքայինը, կանոնականն ու իրադրականը լեզվական արտահայտության ձևավորման տարբեր հիմունքներ են, և վերջնական արդյունքը կախված է նրանց փոխազդեցությունից, նրանցից մեկի կամ մյուսի պահանջների կատարումից:

Ներակա իմաստը լրացուցիչ իմաստ է գոյաբանորեն, բայց ոչ միշտ՝ նպատակայնորեն: Նրա հաղորդումը կարող է նաև հաղորդակցման առաջնահերթ նպատակը լինել¹⁶. այդպիսին են էզոթերիկ և ընդհանրապես այլաբանական տեքստերը, անուղղակի խոսքային ակտերը, որոնք էլ սնունդ են տվել հերմենևտիկային և գործաբանությանը: Ավելին, երբեմն

թյան մեջ չի մոռանում նշել ծխող կնոջը, կամ երբ մեկը մի շինություն նկարագրելիս ոչ միայն հիշատակում է այդ շինության առաջ կիտրոն վաճառողին, այլև մանրամասն պատմում է նրա հագուստի մասին:

¹⁴ Օրինակ՝ ժամանակի ընթացքում նկարագրությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունների մասին տե՛ս **Բարտ Բ.** Эффе́кт реальности // Избранные работы: Семиотика. Поэтика. М., 1989, էջ 392-400: Հմմտ. նաև «Մի թե՛ իսկապես որևէ մեկը երբևէ Պրուստ, Բալզակ, «Պատերազմ և խաղաղություն»-ը կարդացել է անընդմեջ, բառ առ բառ: (Բախտավոր է Պրուստը. նրա վեպը վերընթերցելիս մենք ամեն անգամ տարբեր տեղեր ենք բաց թողնում)» (**Բարտ Բ.** Удовольствие от текста // նույն տեղում, էջ 469):

¹⁵ Ներակայման այս դերն ընդգծում է Ս. Աբրահամյանը. տե՛ս **Ս. Պ. Աբրահամյան**, Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր. «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2002, 1 (605), էջ 4, 13-16: Նույն առումով կարող է դիտվել նաև հավելուրդայնությունը, քանի որ դրանք երկուսն էլ, բովանդակություն-արտահայտություն հավասարակշռության խախտումներ լինելով, շարժման մեջ են դնում իրենց հակուղղված միտումները:

¹⁶ Տե՛ս **u Բաгдасарян В. Х.** Проблема имплицитного. Ер., 1983, էջ 10:

առնվազն գեղարվեստական տեքստերի կապակցությամբ կոչ է արվում լիովին անտեսել ուղղակի, արտակա իմաստը¹⁷:

Ներակա իմաստը ըմբռնվում է արտակա իմաստի հիման վրա, արտակա իմաստը հանդես է գալիս որպես ներակա իմաստի արտահայտման միջոց¹⁸, ասել է թե՛ որպես նրա նշանակիչ: Ներակա իմաստն էլ ձեռք է բերում նրա նշանակյալի կարգավիճակ: Այսպես լեզվական նշանի բովանդակության մեջ ձևավորվում է մի զուտ բովանդակային նշան¹⁹, որում նշանային հարաբերություն է հաստատվում բովանդակության երկու շերտերի միջև:

Հաղորդակցումը երկու մասնակից ունի, որոնք իրենց տարածական կամ հոգեբանական դիրքերով դեմ հանդիման են, ուրեմն ունեն ինչ-որ չափով հակադիր շահեր և դրանցից բխող ցանկություններ ու սպասելիքներ: Հաղորդողն ավելի հակված է իր միտքը հնարավորին չափ սուղ միջոցներով արտահայտելու, որպեսզի իրեն քիչ նեղություն տա: Ընկալողին ավելի ձեռնտու է մտքի հարաբերականորեն ծավալուն արտահայտությունը, որպեսզի ստիպված չլինի հասկանալու համար շատ ջանքեր գործադրել: Սա, իհարկե, խիստ ընդհանուր գնահատում է, որը վերաբերում է հաղորդակցման դեպքերի մեծագույն մասին, բայց ոչ բոլորին, այլ միայն նրանց, երբ հաղորդակցման նպատակը հենց մտքեր հաղորդելն ու ընկալելն է: Այլ հաղորդակցական նպատակների դեպքում նշված հարաբերակցությունը, իհարկե, չի գործում: Հաղորդողի հետ կապված՝ այս առումով կարելի է հիշել օրինակ, խոսքի՝ չորսի նշան այն չարաշահումը, երբ մարդն ասելիք չունի, բայց խոսում է իրեն ցուցադրելու համար²⁰, կամ Յակոբսոնի տարբերակած շփման (ֆատիկ) գործառույթի գերիշխումով իրականացվող խոսքը, երբ խոսում են սոսկ հաղորդակցումը շարունակելու համար՝ ըստ էության ոչ մի էական տեղեկատվություն չհաղորդելով²¹: Ընկալողը նույնպես կարող է հոգնել երկարաբան խոսքից: Այնպես որ հաղորդողի ինայողականության ձգտումը²² զուտ եսասիրական չէ. այն նաև ընկալողին շատ

¹⁷ Տե՛ս **Բարտ Բ.** Критика и истина // Избранные работы: Семиотика. Поэтика, էջ 325-329:

¹⁸ Հմմտ. «Ի տարբերություն արտակաների՝ ներակա նշանակություններն անմիջական նյութական արտահայտություն չունեն, բայց այդ չի նշանակում, թե նրանք նյութականորեն ընդհանրապես ոչ մի կերպ չեն դրսևորվում, և որ նրանց մասին կարելի է դատել որպես առանց ձևի բովանդակության մասին ... նրանք նշանակությունների նշանակություններ են: Նրանց դրսևորման ձև է ծառայում արտակա նշանակությունը՝ իր իրացման իմաստալից հենապատկերի հետ միասին» (**Նիկիտին Մ. Վ.** Курс лингвистической семантики. СПб., 2007, էջ 534):

¹⁹ Վ. Բաղդասարյանը հնարավոր է համարում այս հարաբերությունը նշանի հետ համեմատելը, բայց զգուշանում է այն նշան համարելուց. (տե՛ս **Բաղդասարյան Վ. Մ.**, նշվ. աշխ., էջ 14):

²⁰ Տե՛ս **Գոբբե Գ.** Сочинения в 2 т. Т. 1, М., 1989, էջ 235:***

²¹ Տե՛ս **Կոբսոն Ք.**, նշվ. աշխ., էջ 201:

²² Տե՛ս **Մարտինե Ա.** Основы общей лингвистики // Новое в лингвистике. Вып. III. М., 1963, էջ 532-538 և հատկապես՝ **Մարտինե Ա.** Принцип экономии в фонетических изменениях. М., 1960: Խնայման սկզբունքի և ներակայության կապի մասին տե՛ս, օր., **Բաղդասարյան Վ. Մ.**, նշվ. աշխ., էջ 10-11: Խնայման սկզբունքի՝ նաև հավելորդայնության հետ կապվող մեկնաբանում տե՛ս **Գրուդեա Ե. Վ.** Избыточность текста: история вопроса и

չճանրաբեռնելու ցանկությամբ է պայմանավորված (թեև մյուս կողմից՝ այդ ցանկությունն ինքը որոշ չափով բխում է այն դարձյալ եսասիրական մտահոգությունից, թե հասցեատերը հանկարծ կարող է հաղորդման մեծ ծավալի հետևանքով հրաժարվել ընկալողի դերը կատարելուց):

Հաղորդակցման մասնակիցների դիրքորոշումները միտումներ են, ոչ թե բացարձակ սկզբունքներ: Այլապես հնարավորին չափ շատ բան ասելու միտում ունեցող խոսքը չէր վերջանա: Հնարավորին չափ քիչ բան ասելու միտում ունեցող խոսքը չէր էլ սկսվի: Որքան էլ հաղորդողի և ընկալողի դիրքերը տարբեր են, հաղորդակցումը դրա երկու մասնակիցների համագործակցություն է, որում նրանց դիրքերը ինչ-որ կերպ հաշտեցվում, հավասարակշռվում են, որպեսզի կարողանան գոյակցել²³: Երկուսն էլ փոխադարձ զիջումներ են անում իրար. մեկն ասում է ավելին, քան կուզեր, մյուսը բավարարվում է ավելի պակասով, քան կուզեր:

Հավելյալայնությունը այն զիջումն է²⁴, որը խոսքը հաղորդողն անում է ընկալողին, իսկ ներակայությունը այն պակասն է, որը խոսքն ընկալողը ներում է հաղորդողին, իհարկե, մինչև որոշակի սահման: Մյուս կողմից՝ և՛ տեղեկատվական չափազանց մեծ հավելյալայնությունը, և՛ չափազանց մեծ ներակայությունը կարող են որակվել որպես խոսակցի նկատմամբ հարգանքի պակաս (քաղաքավարության գործաբանական սկզբունքի խախտում), որովհետև մի դեպքում խոսքը կկառուցվի ասես ընկալողի հասկացողության նկատմամբ թերահավատությամբ, մյուս դեպքում բացարձակ անտարբերություն հանդես կբերվի ընկալողից պահանջվող մտավոր ջանքերի չափի նկատմամբ:

Պարզվում է, որ Գրայսի առաջ քաշած «համագործակցության սկզբունքի» քանակային պահանջը՝ «1. Քո ասույթը պիտի պարունակի ոչ ավելի քիչ տեղեկատվություն, քան պահանջվում է (երկխոսության ընթացիկ նպատակներն իրականացնելու համար): 2. Քո ասույթը չպիտի պարունակի ավելի շատ տեղեկատվություն, քան պահանջվում է»²⁵, այնքան էլ իրատեսական չէ. խոսողը միշտ հաղորդում է պետք եղածից ավելի և միաժամանակ՝ պետք եղածից պակաս տեղեկատվություն: Ներակայությունը և հավելյալայնությունը երկու եզրեր, երկու բևեռներ են, որոնց միջև ինչ-որ դիրք են գրավում ցանկացած լեզվական արտահայտում, ցանկացած հա-

методика исследования // Известия РГПУ им. А. И. Герцена. СПб., 2008, № 10(59), էջ 107:

²³ Հմմտ. «Եթե մարդկային խօսողութեան մեջ պարզութիւնը խօսողին՝ (հասկըցընելու.) ինչպէս նաեւ բացայայտութիւնը լսողին՝ (հասկընալու.) դիրացուցիչ միջոցներն են. կրնայ իրաւամբ կասկածուիլ որ չափազանց պարզուածք մը անյաղթելի խոչընդոտն ըլլայ բացայայտութեան առջեւ» (**Ա. Այտրնեան**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, Նախաշաւիղ, էջ 103):

²⁴ Հմմտ. «... հավելյալայնությունը պայմանավորում է այն բավականին բարձր բաժանորդավճարը, որը մարդկությունը մուծում է, որպեսզի հնարավորություն ունենա մշտապես լուրեր լսելու ամբողջ աշխարհից» (**Греймас А.-Ж.** Структурная семантика: Поиск метода. М., 2004, с. 168):

²⁵ **Грайс Г. П.** Логика и речевое общение // Новое в зарубежной лингвистике. Вып. XVI. М., 1985, с. 222.

դորդակցում: Օգտագործելով Վալերիի ստեղծած պատկերը²⁶ կարող ենք ասել. ներակայությունից դեպի հավելուրդայնություն, հավելուրդայնությունից դեպի ներակայություն է տատանվում լեզվական ճոճանակը²⁷:

Բանալի բառեր – ներակայություն, արտակայություն, հավելուրդայնություն, նշանակություն, վերաբերյալ, արտահայտություն, լեզվական միավոր, հաղորդակցում

АШОТ АБРААМЯН – Имплицитность и избыточность: два полюса языкового выражения. – Имплицитность повсеместно противопоставляется эксплицитности, что верно лишь отчасти. Имплицитность по сути дела есть недовыраженность, её противоположностью является перевыраженность, то есть избыточность; эксплицитность же выступает в качестве среднего, нейтрального звена этой оппозиции. Имплицитность и избыточность могут рассматриваться в единицах разных уровней структуры языка, при этом чем выше уровень, тем больше и разнообразнее проявления как имплицитности, так и избыточности. Одновременно присутствуя во всех языковых образованиях, имплицитность и избыточность являются не абсолютными, а лишь относительными их семантическими характеристиками: любое языковое выражение, всякий коммуникативный акт находится где-то между этими полюсами.

Ключевые слова: имплицитность, эксплицитность, избыточность, значение, референт, выражение, языковая единица, коммуникация

ASHOT ABRAHAMYAN – Implicitity and Redundancy: Two Poles of Linguistic Expression. – In the studies on semantics, implicit meanings are commonly opposed to explicit ones, which, however, is only half right. Redundancy, as an overexpression, should be considered opposite to implicitity, which, actually, is an underexpression, while pure explicitness is the midway point in this opposition. Implicitity and redundancy can be considered in different levels of language structure, and the higher the level, the greater the number and diversity of implicitity and redundancy manifestations are. Implicitity and redundancy are not absolute but only relative assessments of semantic features: these are two poles of linguistic expression, with any linguistic expression, any communicative act occupying a midway position between them.

Key words: implicitity, explicitness, redundancy, meaning, referent, expression, linguistic unit, communication

²⁶ Հմմտ. **Валери П.** Поэзия и абстрактная мысль // Об искусстве. М., 1976, էջ 425 (Վալերին խոսում է հնչյունի և մտքի մասին):

²⁷ Արվեստագիտությունից փոխառած անվանումներով՝ մենք անընդհատ ստիպված ենք լինում ընտրություն կատարել մինիմալիզմի և ռոկոկոյի միջև:

ՄԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, հին հայերենի բազմավանկ բառերի վերջահանգ *ի* ձայնավորը համաժամանակյա–նկարագրական տեսանկյունից հորանջի դիրքում *ա* ձայնավորից առաջ վերածվում է *ե*-ի՝ *ա* ձայնավորի հետ կազմելով *եա* երկբարբառ, իսկ *ո* ձայնավորից առաջ դառնում է *շ*։ օրինակ՝ հ. հայ. *տեղի* «տեղ», եգ. սեռ. *տեղւոյ*, եգ. գործ. *տեղեաւ* և այլն։ Ի տարբերություն *եա* երկբարբառի՝ *լո*-ի ծագման և հնչյունական արժեքի հարցը հայերենագիտության մեջ վիճահարույց է։ Մի շարք հետազոտողների կարծիքով, հ. հայ. *լո*-ն *ւօ* բաղաձայն + ձայնավոր կապակցություն է ներկայացնում³։ Այլ լեզվաբաններ *լո*-ն դիտում են որպես *ւօ* բարձրացող երկբարբառ⁴։ Նշենք, որ Գ. Ջահուկյանը և Է. Աղայանը նույնպիսի բարձրացող երկբարբառներ են համարում նաև հ. հայ. *ուլո*, *ուա*, *ուե* կապակցությունները⁵։ Իհարկե, Գ. Ջահուկյանը չի խոսում այն մասին, թե այդ դեպքում ինչով է պայմանավորված միննույն *ւօ* երկբարբառի *լո* և *ուլո* գրության տարբերությունը (հմմտ. *որդի*, հոգ. սեռ. *որդւոց* և *թիւ*, հոգ. սեռ. *թուոց*), թեև խոստովանում է. «...*ուա*, *ուե*, *ուլո* կապակցությունների երկբարբառային բնույթը կասկած է հարուցում. շատ հետազոտողներ դրանք համարում են ձայնավորների սովորական կապակցություններ... »⁶։ Իսկ Է. Աղայանը, ընդունելով, որ բառամիջում բաղաձայնի ու ձայնավորի միջև *ու* և *ւ* գրանշաններն ունեն

¹ Սույն հոդվածում *հին հայերեն* ասելով նկատի է առնվում դասական հայերենը, այսինքն՝ հինգերորդ դարի հայ մատենագրության լեզուն։

² Տե՛ս **A. Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 21, **A. Meillet**, *Altarmenisches Elementarbuch*, Delmar – New York, 1981, էջ 19-20։

³ Տե՛ս **A. Meillet**, *Esquisse...*, էջ 21, **Ch. de Lamberterie**, *Introduction à l'arménien classique* in *Actes des sessions de linguistique et de littérature*, 10, Paris, 1992, էջ 245։ Թեև Ա. Մեյլեն դաս. հայ. *լո*-ի հնչյունական արժեքի հարցին հատուկ չի անդրադառնում, բայց քանի որ նա *լո*-ն երկբարբառ չի համարում և այն չի դիտարկում դասական հայերենի երկբարբառների շարքում (տե՛ս **A. Meillet**, *Esquisse...*, էջ 44-46, **A. Meillet**, *Altarmenisches Elementarbuch*, էջ 15), մյուս կողմից, դաս. հայ. *ւ*-ն տառադարձում է *ւօ* բաղաձայնի միջոցով (տե՛ս **A. Meillet**, *Esquisse...*, էջ 48-49, **A. Meillet**, *Altarmenisches Elementarbuch*, էջ 12), ապա դրանից հետևում է, որ դաս. հայ. *լո*-ն, ըստ Ա. Մեյլեի, *ւօ* բաղաձայն + ձայնավոր կապակցություն է եղել։ Ըստ այդմ՝ *լո*-ն հնչյունական արժեքով տարբերվել է նաև դաս. հայ. *ուլո* կապակցությունից (հմմտ. *թիւ*, եգ. սեռ. *թուոյ*, հոգ. սեռ. *թուոց*, *ձու*, եգ. սեռ. *ձուոյ*), որտեղ *ու*-ն գտնվել է հորանջի դիրքում (տե՛ս **A. Meillet**, *Altarmenisches Elementarbuch*, էջ 19)։

⁴ Տե՛ս **Է. Աղայան**, Գրարարի քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 128-129, **Գ. Բ. Джаукян**, *Сравнительная грамматика армянского языка*, Ер., 1982, էջ 24, 28։

⁵ Տե՛ս **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 127-129, 189, **Գ. Բ. Джаукян**, նշվ. աշխ., էջ 28։

⁶ **Գ. Բ. Джаукян**, նշվ. աշխ., էջ 28, հմմտ. **Ս. Ավետյան**, *ՎԻՈՒՐ*-ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը դասական հայերենում, Եր., 2012, էջ 126-127, 149-154։

ցել են միննույն հնչյունական արժեքը՝ երկու դեպքում էլ արտահայտելով ուժգնացող երկբարբառի նույն ոչ վանկարար տարրը՝ *u*-ն (Է. Ադայանի տառադարձամամբ՝ *w*-ն), տվյալ դեպքում նույն հնչյունն արտահայտելու համար տարբեր գրանշանների գործածությունը հակված է բացատրելու ուղղագրական պատճառներով⁷: Սակայն այդ նպատակով նրա բերած փաստարկները, մեր կարծիքով, անհամոզիչ են և լուրջ առարկություն են հարուցում⁸: Տիպաբանական տվյալների լույսի ներքո հայերենի փաստական նյութի համաժամանակյա և տարածամանակյա քննությամբ միանգամայն պարզ է դառնում, որ հին հայերենում բաղաձայնի ու ձայնավորի միջև *i* և *ni* գրանշանները չէին կարող ունենալ նույն հնչյունական արժեքը, և որ *ni*, *niw*, *niē*-ն ակնհայտորեն երկվանկ ձայնավորային կապակցություններ են եղել՝ *u-o*, *u-a*, *u-e* (այսինքն՝ *ni*-ն գտնվել է հորանջի դիրքում), իսկ *ni*-ն՝ բարձրացող երկբարբառ (*uo*)⁹:

Հ. հայ. *ni*-ի ծագման հարցը նույնպես հայերենագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել: Այսպես, Հ. Պեդերսենը հ. հայ. *որդույ*, *հոզույ*, *մաքույ* և նման ձևերում *ni*-ի առաջացումը փորձում է բացատրել **-iyo-* > **jn* > **jln* > *ni* հնչյունական անցմամբ¹⁰: Ա. Մեյենը ներդրում է Հ. Պեդերսենի մեկնաբանությունը, իհարկե՝ մասնակի ճշտումով, եթե նկատի ունենանք, որ Ա. Մեյեն առաջարկում է **-iyo-* > **-iwo-* > *-wo-* (*-ni-*) հնչյունափոխություն¹¹: Հետևաբար, ըստ Ա. Մեյեի՝ ոչ թե **-iyo-*-ի **y*-ն ընկել է, իսկ հետո հորանջի դիրքում շրթնային *o* ձայնավորից առաջ **w* առաջացել, այլ տեղի է ունեցել **-iyo-* > **-iwo-* (այն է՝ *y* > *w*) առնմանական հնչյունափոխություն, այնուհետև շեշտանախորդ *i*-ն սղվել է՝ *-iwo-* > *-wo-* (*-ni-*): Հ. հայ. *ni*-ի ծագումը նույն կերպ է մեկնաբանվում նաև Շ. Լամբերտրիի կողմից: Բայց քանի որ վերջինս գտնում է, որ *տեղի*՝ «տեղ» բառի եզ. սեռ. *տեղույ* ձևը, հին հայերենի վանկակազմության օրինաչափությունների համաձայն, արտասանվել է /teł-woy/, մինչդեռ, ասենք, *որդի* բառի եզ. սեռ. *որդույ* ձևն արտասանվել է /or-də-woy/ (եռավանկ), ուստի համապատասխանաբար ենթադրում է նաև **-iyo-* > **-iwo-* > *-əwo-* հնչյունական զարգացում¹²: Իրականում ենթադրյալ /or-də-woy/ ձևը հակասում է հին հայերենի վանկակազմության օրինաչափություններին, որոնց համաձայն՝ «հին հայերենում վանկը կարող էր փակվել շփական կամ ձայնորդ + որևէ բաղաձայն կապակցությամբ, բայց ոչ երբեք՝ որևէ բաղաձայն + ձայնորդ կա-

⁷ Տե՛ս Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 128-129, 189, 356-357, հմմտ.՝ Ս. Ավետյան, նշվ. աշխ., էջ 121-123:

⁸ Տե՛ս Ս. Ավետյան, նշվ. աշխ., էջ 185-188:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 147-157, 165-169, 183-184, 185-188, 218-225:

¹⁰ Տե՛ս Հ. Պեդերսեն, Նպաստ մը հայ լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 9:

¹¹ Տե՛ս Ա. Meillet, Esquisse..., էջ 21:

¹² Տե՛ս Ch. de Lamberterie, նշվ. աշխ., էջ 245:

պակցությամբ»¹³: Հետևաբար, ը ձայնավորով վանկ են կազմել *բաղա-
ձայն + ձայնորդը*, ինչպես նաև երկու ձայնորդը կամ երկու բաղաձայնը,
մինչդեռ *շփական կամ ձայնորդ + բաղաձայն* կապակցության դեպքում
ը չի արտասանվել. հմմտ. *բարձ, բը-ժիշկ, ըս-կըզը-նական, ան-կըրկ-
նե-լի* և այլն¹⁴: Ըստ այդմ՝ էթե նույնիսկ ընդունենք, որ *որդույ* ձևում *ւո-*
ն եղել է *բաղաձայն + ձայնավոր* կապակցություն (*wo*), ապա այն պետք
է արտասանվեր ոչ թե որպես /or-də-woy/, այլ /ord-woy/ (երկվանկ):

Նկատենք, որ հիշյալ հետազոտողները հ. հայ. *ի*-ի հանգող բազմավանկ բառերի թեք հոլովաձևերում *ւո*-ի ծագումը **-iyo-> *-iwo-> -wo-* (*-ւո-*) հնչյունական զարգացմամբ բացատրելիս չեն անդրադառնում այն հարցին՝ արդյո՞ք **-iyo-> *-iwo-* անցումը տեղի է ունեցել նախքան հայերենի նախագրային շրջանում շեշտահաջորդ վերջնավանկային ձայնավորների սղումը, թե՞ դրանից հետո: Քանի որ եզակի ուղղականի դեպքում համապատասխանաբար **-iyo-> *-iwo-> *-iw* (**-իւ*) *> -i* (*-ի*) հնչյունական զարգացում չի նշվում, այլ վերջահանգ *-ի* ձայնավորն անմիջականորեն բխեցվում է հ.-ե. **-iyos* և **-iyā* հնչյունակապակցություններից¹⁵, ապա դրանից կարծես հետևում է, որ հ. հայ. *ի*-ի հանգող բազմավանկ բառերի թեք հոլովաձևերում **-iyo-> *-iwo-* հնչյունական անցումը դիտվում է որպես վերջնավանկային ձայնավորների սղումից հետո տեղի ունեցած երևույթ: Այդ պարագայում եզակի ուղղականի ձևում ստիպված պիտի լինենք ենթադրել **-iyo-> *-iy* (*-իյ*) *> -i* (*-ի*) հնչյունափոխություն, այսինքն՝ նախ վերջնավանկի *o* ձայնավորի սղում, այնուհետև բառավերջի դիրքում *y* (*յ*)-ի անկում: Այլապես, էթե ընդունենք, որ **-iyo-> *-iwo-* հնչյունական անցումը տեղի է ունեցել միջև վերջնավանկային ձայնավորների սղումը, այդ դեպքում անբացատրելի է մնում եզակի ուղղականում համապատասխան **-iyo-> *-iwo-> *-iw* (**-իւ*) հնչյունական զարգացման բացակայությունը: Սակայն իրականում փաստերը վկայում են, որ հայերենում միջձայնավորային *y*-ն ընկել է նախքան վերջնավանկային ձայնավորների սղումը¹⁶: Ուստի մեզ միանգամայն անհավանական է թվում թեք հոլովաձևերում միջձայնավորային *y*-ի պահպանվելը, ըստ այդմ՝ նաև ենթադրյալ **-iyo-> *-iwo-> -wo-* (*-ւո-*) հնչյունական զարգացումը, մանավանդ էթե հաշվի առնենք, որ Ա. Մեյեն *y*-ի նույնպիսի անկում է ենթադրում նաև հ.-ե. եզ. ուղղ. **-iyo-s > h.* հայ. *-ի* (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. **portiyos > h.* հայ. *որդի*) հնչյունական զարգացման դեպքում¹⁷:

Է. Աղայանը, շրջանցելով հայերենում հ.-ե. միջձայնավորային *y*-ի

¹³ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 85:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 254-255: Ուստի Շ. Լամբերտերիի կողմից հ. հայ. *սկզբնական* բառին վերագրվող /əS-kəz-bə-na-kan/ հնչյունական արժեքը (տե՛ս Ch. de Lambertie, նշվ. աշխ., էջ 245) նույնպես անընդունելի է:

¹⁵ Տե՛ս A. Meillet, Esquisse..., էջ 57:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 52:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

անկման հարցը, գտնում է, որ «հնդեվրոպական *-iyo* կապակցությունը հայերենում դառնում է *իւ*, ինչպես՝ հնիւ. (իմա՝ հ.-ե. – Ս. Ա.) **kiyon > uhiń*, հնիւ. **ghiyom > dhiń* և այլն...»¹⁸: Ըստ այդմ՝ նա հ. հայ. *որդի, մաքի* և նման բառերի համար եզակի ուղղականի **որդիւ, *մաքիւ* հնագույն ձևեր է վերականգնում և *ւ*-ի հետագա անկում ենթադրում՝ ընդունելով, որ «*ի* ձայնավորից հետո *յ*-ն ընկել է անխտիր, ինչպես՝ **qործիյ > qործի*, իսկ *ւ*-ն ընկել է միայն բազմական բառերի վերջում, բայց ոչ գործիականի վերջավորության մեջ (օր. *բանիւ*)...»¹⁹: Է. Ադայանի կարծիքով, հ. հայ. *որդույ, մաքույ* և նման ձևերում «պահպանվել է նախնական *ւ* ձայնորդը. այսինքն՝ *որդիւ* ուղղականին ավելացնելով *ոյ* վերջավորությունը, որ ստացվել է հնիւ. *osyo-* ից, կստացվեր *որդիւոյ*, իսկ շեշտակորույս *ի*-ի անկումով՝ *որդույ*, ավելի ճիշտ՝ *որդուոյ*»²⁰: Նա միևնույն ժամանակ գտնում է, որ բազմական բառերի վերջի *ւ*-ի անկումը տեղի է ունեցել մինչև մ. թ. II դարը, իսկ երկրորդ դարում այն արդեն ավարտված, ոչ գործուն երևույթ է եղել, ուստի չի տարածվել II-IV դդ. առաջացած (*p > f > w*), ինչպես նաև իրանականից փոխառյալ *իւ* կապակցության վերջահանգ *ւ*-ի վրա. հմմտ. հ.-ե. **oipā- > hniʃi*, պրթ. *pativ > պատիւ* և այլն²¹:

Իրականում հ.-ե. **iyo*-ն հայերենում *իւ* է դարձել միայն հ.-ե. ռնգային ձայնորդներից առաջ՝ շնորհիվ այն բանի, որ հ.-ե. **ō*-ն ընդհանրապես, իսկ **o*-ն ռնգայինից առաջ հայերենում տալիս են *ու*: Ըստ այդմ՝ հայերենագիտության մեջ վաղուց իրավամբ նկատված է, որ *ձիւն, սիւն* և այլ բառերի *իւ* երկբարբառն առաջացել է **hni* հնչյունակապակցությունից, իսկ վերջինիս *ու*-ն ծագել է **ō*-ից կամ **o*-ից՝ ռնգային հնչյունից առաջ²²: Հետևաբար, հ.-ե. **ghiyōm > h.* հայ. *ձիւն* բառի դեպքում **ghiyōm* նախաձևի միջձայնավորային *y*-ն ընկել է ճիշտ նույն կերպ, ինչպես հ.-ե. **g^wiyā- > h.* հայ. *կեամ* ձևի դեպքում (**iyā > ia > taw*)²³, իսկ այնուհետև **ō*-ից կամ **o*-ից առաջացած *u* ձայնավորը նախորդող *i* ձայնավորի հետ կազմել է *iu* (*իւ*) իջնող երկբարբառ, այսինքն՝ *u* ձայնավորը դարձել է երկբարբառի ոչ վանկարար բաղադրիչ: Մինչդեռ հ.-ե. թեմատիկ (այն է՝ **o*-ի հանգող) հիմքերի պարագայում հ.-ե. **iyo > hայ. *իւ* ենթադրյալ հնչյունափոխությունը չի հաստատվում հայերենի ընձեռած տվյալներով: Ինչպես տեսանք, ըստ Է. Ադայանի՝ *ի* ձայնավորից հետո *ւ*-ն ընկել է միայն բազմական բառերի վերջում: Արդ, եթե հ.-ե. թեմատիկ հիմքերի դեպքում **iyo > *իւ* հնչյունական զարգացում տեղի ունեցած լիներ, ապա հ. հայ. *ւի* բառը, որը ծագում է հ.-ե. **smiyo-* նախաձևից²⁴, որպես միավանկ՝ պետք է պահպաներ ենթադրյալ հնա-

¹⁸ Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 101:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Տե՛ս նույն տեղը:

²¹ Նույն տեղում, էջ 102:

²² Տե՛ս Զ. Պետրսըն, նշվ. աշխ., էջ 9:

²³ Տե՛ս Դ. Բ. Джаукян, նշվ. աշխ., էջ 24, 41:

²⁴ Տե՛ս A. Meillet, Esquisse..., էջ 99, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 147:

գույն **u* հի տեսքը: Բայց քանի որ հին հայերենում իրականում վկայված է *u* հ, եզ. սեռ. *u* հոյ, ապա դա մեկ անգամ ևս հաստատում է, որ ճիշտ չէր լինի հ.-ե. թեմատիկ հիմքերի պարագայում հ.-ե. *-*yo*- > հայ. *-*hu* հնչյունական անցում ենթադրել, այլ պետք է ընդունել, որ հ.-ե. *-*yo*- կապակցության միջձայնավորային *y*-ն հայերենում թե՛ եզակի ուղղականում, թե՛ թեք հոլովաձևերում ընկել է ընդհանուր օրինաչափության համաձայն: Իսկ եթե ընդունենք, որ ենթադրյալ **hu* (**wo*) կապակցության դեպքում *u* (*w*) բաղաձայնը միջձայնավորային *j* (*y*)-ի անկումից և վերջնավանկային ձայնավորների սղումից հետո հորանջի դիրքում շրթնային *o* ձայնավորից առաջ ծագած միջանցումային հնչյուն (Übergangslaut) է ներկայացրել (**hu* > **hu*), այդ պարագայում *որդույ, հոգույ* և նման ձևերի *u*-ն դարձյալ չէր կարող առաջանալ **wo* > *wo* հնչյունական անցմամբ, քանի որ շեշտանախորդ *i* ձայնավորի սղումից հետո *w* (*u*) բաղաձայնը նշված դիրքում պետք է ենթարկվեր *w* (*u*) > *u* (*nu*) հնչյունական զարգացման (**որդույ* > **որդույ* > **որդույ*) ճիշտ նույն կերպ, ինչպես **պատույ* > **պատույ* > հ. հայ. եզ. սեռ. *պատույ* «պատվի» և նման ձևերում (հմմտ. նաև հ.-ե. **g*giyo- > **արծիհ* > **արծիհ* > հ. հայ. եզ. ուղղ. *արծուհ* «արծիվ»):

Ռ. Շմիդտը նշում է, որ, ի տարբերություն միավանկ բառերի, որոնց վերջահանգ *i* (*h*)-ն հայերենում պահպանվում է հորանջի դիրքում, «ընդհակառակը, բազմավանկում *i* + *o*-ն դառնում է *wo* /*yo*/ (հավանաբար /*jo*/ (միջակա աստիճան)-ի միջոցով և տարնմանությամբ). օրինակ՝ *gini* «գինի», սեռ. *ginwoy* [*gin'yo*]-ի դիմաց»²⁵ (sic!): Նախ և առաջ /*jo*/ > /*yo*/ հնչյունափոխությունը, այն է՝ շրթնային *o* ձայնավորից առաջ *i* (*y*) > *u* (*w*) անցումը, իրականում պետք է դիտել ոչ թե որպես տարնմանման, այլ առնմանման հետևանք: Թերևս *տարնմանում* (Dissimilation) բառը սլավ դեպքում գործածված է սխալմամբ: Ինչ վերաբերում է *io* > *yo* (*jo*) > *wo* (*yo*) հնչյունական անցմանը, այն տիպաբանական տեսանկյունից միանգամայն հնարավոր է. տարբեր լեզուներում հորանջի դիրքում *i* > *y* և *u* > *w/v* պատմական հնչյունափոխություններ են նկատվում²⁶: Մյուս կողմից, օրինակ, սեմական լեզուներում *i* (*y*) և *u* (*w*) կիսաձայնները հարակից ձայնավորների ազդեցությամբ հաճախ հերթագայվում են միմյանց. մասնավորապես, *i* ձայնավորի առնմանությամբ *u* > *i* հնչյունափոխություն է տեղի ունենում, իսկ շրթնային *u* ձայնավորի առնմանությամբ՝ *i* > *u*, ինչպես՝ *iya* > *ija*, *uja* > *uya* և այլն²⁷:

²⁵ R. Schmitt, Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen, 2., durchgesehene Auflage, Innsbruck, 2007, էջ 43 և ծանոթ. A:

²⁶ Տե՛ս Ս. Ավետյան, Հորանջի դիրքում *i* և *u* ձայնավորների կայունության աստիճանը բառասկզբում և բառամիջում (տարածամասկյա-տիպաբանական քննություն): «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի (17–19 հոկտեմբերի, 2013 թ.) զեկուցումների ժողովածու, Եր., 2014, էջ 237-238:

²⁷ Տե՛ս C. Brockelmann, Grundriss der vergleichenden Grammatik der semitischen Sprachen, Bd. 1, Laut- und Formenlehre, Berlin 1908 (= Lieferungen 1-6, Berlin, 1907-1908), էջ 189:

Այդուհանդերձ հայերենի տարածամանակյա տվյալները վկայում են, որ հ. հայ. *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերի *ւո*-ն չէր կարող առաջանալ $io > yo$ (io) $> wo$ (yo) հնչյունական զարգացմամբ՝ *ordioy (*որդիոյ) $>$ *ordyo (որդոյ) $>$ ordwoy (որդւոյ) և այլն: Բանն այն է, որ լեզուներում թե՛ բառակազմում ձայնավորից առաջ, թե՛ բառամիջում բաղաձայնի ու ձայնավորի միջև նկատվող $i > y$ և $u > w/v$ հնչյունական զարգացումները պայմանավորված են հորանջը վերացնելու ընդհանուր միտումով: Բայց բառամիջում բաղաձայնի ու ձայնավորի միջև հորանջից խուսափելու միտումից բացի՝ գործում է մեկ այլ հակադիր միտում, որը ձգտում է վերացնել *Cw, Cy* (այն՝ որևէ բաղաձայն + *w* կամ *y*) տիպի բաղաձայնական կապակցությունները: Նայած այն բանին, թե այս կամ այն լեզվում տվյալ ժամանակահատվածում որ միտումն է գերիշխող դառնում, ըստ այդմ՝ մի կողմից $i > y$, $u > w/v$, մյուս կողմից՝ $y > i$, $w > u$ հնչյունական զարգացումներ են տեղի ունենում: Տվյալ լեզվի պատմական զարգացման ընթացքում նշված երկու հակադիր միտումները կարող են հաջորդել մեկը մյուսին: Սակայն սովորաբար այնպես չի պատահում, որ նրանք գործեն միաժամանակ, այսինքն՝ զուգահեռաբար տեղի ունենան $i > y$ և $w > u$ կամ $u > w$ և $y > i$ փոփոխությունները: Պետք է $w > u$ (ըստ այդմ՝ նաև $y > i$) հնչյունական զարգացման միտումը դարձի գործելուց, որպեսզի կարողանա դրսևորվել $i > y$ (ըստ այդմ՝ նաև $u > w$) հնչյունափոխության միտումը²⁸:

Հետևաբար, միայն այն դեպքում հնարավոր կլինեն *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերի *ւո*-ն իբրև *wo բաղաձայն + ձայնավոր* կապակցություն դիտել, իսկ երկշրթնային *w* (*l*) բաղաձայնի ծագումը բացատրել նախ հորանջի դիրքում i (*h*) $> y$ (*j*) հնչյունական անցում, այնուհետև հաջորդող *o* (*n*)-ի ազդեցությամբ y (*j*) $> w$ (*l*) մասնակի առնմանում ենթադրելու միջոցով, եթե հաջողվեր ապացուցել, որ *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերի *ordioy (*որդիոյ), *mak'ioy (*մաքիոյ) հնագույն ձևերում ենթադրյալ i (*h*) $> y$ (*j*) $> w$ (*l*) հնչյունափոխությունը հայերենի նախագրային շրջանում տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արդեն w (*l*) $> u$ (*nl*) հնչյունական զարգացման միտումը (հմմտ. *արծւի $>$ արծուի, *պատւոյ $>$ պատուոյ և այլն) դադարած է եղել գործելուց, ուստի w (*l*) $> u$ (*nl*) անցման հնչյունական օրենքը այլևս չի տարածվել *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերի վրա: Բայց այդ պարագայում սպասելի էր, որ գոնե որոշ փոխառություններում նույնպես *w* (*l*)-ն հին հայերենում պահպանված լիներ բաղաձայնական արժեքով և ենթարկված չլիներ w (*l*) $> u$ (*nl*) հնչյունափոխության: Իրականում այդպիսի ձևեր հայտնի չեն: Հին հայերենում բաղաձայնի ու ձայնավորի միջև *ւ*-ն հանդես է գալիս միայն *h*-ի հանգող բազմավանկ բառերի թեք հոլովաձևերում *ւո* կապակցության դեպքում:

²⁸ Տե՛ս Ս. Ավետյան, Հորանջի դիրքում *i* և *u* ձայնավորների կայունության աստիճանը..., էջ 237-240:

Մնացած բոլոր դեպքերում թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերում երբեմնի երկշրթնային *w(ɫ)* բաղաձայնի փոխարեն բաղաձայնի ու ձայնավորի միջև հանդես է գալիս *u (nu)* ձայնավորը, որը, ինչպես արդեն նշել ենք, հաջորդող ձայնավորի հետ երկվանկ ձայնավորային կապակցություն է կազմում. հմմտ. հ.-ե. *r̥g̥ipiyō- > *արծիւի՛ > *արծւի՛ > հ. հայ. արծուի՛ «արծիվ», իրան. patwēd > *պատուէր > հ. հայ. պատուէր «պատվեր», իրան. niwāg > *նիւագ > հ. հայ. նուագ «նվագ» և այլն²⁹: Հետևաբար *w > u* հնչյունական անցումը, որը հայերենում տեղի է ունեցել շեշտանախորդ *i* և *u* ձայնավորների սղումից հետո, ամենայն հավանականությամբ, բավական երկար ժամանակ գործուն օրինաչափություն է եղել, քանի որ ճիշտ չէր լինի ենթադրել, թե *v/w > u* փոփոխության ենթարկված բոլոր փոխառությունները հայերենի մեջ մուտք են գործել միաժամանակ: Իսկ դա նշանակում է, որ *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերը չէին կարող առաջանալ ենթադրյալ *i(h) > y(j) > w(ɫ)* հնչյունափոխությամբ (*ordioy (*որդիոյ) > *ordyooy (*որդոյ) > ordwoy (որդւոյ) և այլն), քանի որ *w > u* (ըստ այդմ՝ նաև *y > i*) հնչյունական զարգացման միտումի գործելու պարագայում *i > y* հակադիր միտումը չէր կարող դրսևորվել:

Գ. Ջահուկյանը, նշելով, որ հին հայերենին իջնող երկբարբառներն ավելի բնորոշ են, քան բարձրացող երկբարբառները՝ հ. հայ. *էա* և *ւո* բարձրացող երկբարբառների մասին գրում է. «Ընդ որում՝ ...բ) ինչպես նշվեց, *ia* երկբարբառում *i* տարրը լայնացել է *a*-ի ազդեցությամբ և այդ պատճառով գրվում է *e*-ի միջոցով, զ) *io* երկբարբառում *i*-ն հաջորդող շրթնային *o* ձայնավորի ազդեցությամբ վերածվում է *w*-ի, այսինքն՝ տեղի է ունենում մասնակի առնմանում (ինչպես *ea*-ի դեպքում)»³⁰: Իհարկե, Գ. Ջահուկյանը չի անդրադառնում հայերենագիտության մեջ հ. հայ. *ւո* կապակցության ծագման և հնչյունական արժեքի վերաբերյալ արտահայտված տարբեր տեսակետներին և չի փորձում հիմնավորել *ւո*-ի երկբարբառային բնույթը: Մյուս կողմից, ինչպես տեսանք, նա նույնպիսի բարձրացող *uo* երկբարբառ էր համարում նաև հ. հայ. *ոււո* կապակցությունը՝ տվյալ դեպքում անտեսելով *ւո* և *ոււո* կապակցությունների գրության տարբերությունը: Այդուհանդերձ, (*iyā >) *ia > ea (*էա*) և (*iyo >) *io > uo (*ւո*) հնչյունափոխությունները սկզբնական *ia և *io երկբարբառների ոչ վանկարար *i բաղադրիչի մասնակի առնմանմամբ բացատրելը, կարծում ենք, միանգամայն ճիշտ մոտեցում է: Հարկ է նշել, որ երկբարբառի բաղադրիչներից մեկի ազդեցությամբ մյուսի առնմանումը կամ տարնմանումը լեզուներում հաճախ հանդիպող երևույթ է: Ընդ որում՝ առնմանումը հատկապես մեծ դեր է խաղում երկբարբառների մենա-

²⁹ Նախագրային հայերենում բաղաձայնի ու ձայնավորի միջև *w(ɫ) > u (nu)* հնչյունական զարգացման համար հանգամանորեն տես Ս. Ավետյան, *ՎԻՈՒՐ* -ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը ..., էջ 165-169, 183-184:

³⁰ Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 28, նաև էջ 24:

բարբառացման գործընթացում՝ հանդես գալով որպես *երկբարբառ* > *պարզ ձայնավոր* հնչյունական զարգացման միջակա աստիճան³¹: Այսպես, ընդհանուր ռոմանական շրջանում լատ. *au* երկբարբառի մենաբարբառացումը (*au* > *o*) տարածական որոշ շրջաններում *ao*, իսկ այլ վայրերում *ou* միջակա աստիճան է ունեցել³²: Ըստ այդմ՝ մի դեպքում *au* երկբարբառի ոչ վանկարար *u*-ն է մասնակի առնմանման ենթարկվել՝ *au* > *ao*, մյուս դեպքում՝ վանկարար *a*-ն՝ *au* > *ou*: Մինչդեռ, օրինակ, լատիներենի շեշտակիր *ō* ձայնավորից առաջացած *uo* բարձրացող երկբարբառի վանկարար *o* ձայնավորը, որը իտալերենում պահպանվել է անփոփոխ, իսպաներենում ոչ վանկարար *u* բաղադրիչից առաջ տարնմանությամբ վերածվել է *e*-ի՝ *uo* > *ue*. հմմտ.՝ լատ. *nōvum* > իտ. *nuovo*, իսպ. *nuevo* «նոր»³³: Իսկ հայերենի նախագրային շրջանում *ou* երկբարբառի (< *h*.-ե. **ou* կ **eu*) ոչ վանկարար *u* տարրը վանկարար *o* ձայնավորի տարնմանական ազդեցությամբ վերածվել է *i*-ի, այն է՝ *ou* > *oi* (*ոյ*)³⁴:

Նկատի ունենանք նաև, որ տիպաբանական տեսանկյունից *i* կամ *u* + *մեկ այլ ձայնավոր* կապակցությունների դեպքում հորանջը լեզուներում կարող է վերացվել հետևյալ եղանակներով. ա) երկու վանկարար ձայնավորների միջև զարգանում են միջանցումային (թռուցիկ) հնչյուններ, բ) *i*-ն և *u*-ն հաջորդող ձայնավորից առաջ համապատասխանաբար վերածվում են *y* և *w/v* բաղաձայնների, գ) հորանջի դիրքում գտնվող *i*-ն և *u*-ն հաջորդող ձայնավորի հետ երկբարբառ են կազմում³⁵:

Արդ, քանի որ, ինչպես վերը տեսանք, *h*. հայ. *որդւոյ, մաքւոյ* և նման ձևերի *ւո*-ն չէր կարող առաջանալ *n* չ **iyo* > **iwo* > *wo* կամ **iyo* > **i-o* > **iwo* > *wo* (*ւո*) հնչյունական զարգացմամբ, *n* չ էլ **io* > **yo* > *wo* (*ւո*) հնչյունափոխությամբ, այսինքն՝ տվյալ դեպքում բացառվում են վերը նշված ա) և բ) կետերը, այդ պարագայում մնում է ընդունել, որ **iyo* կապակցության միջձայնավորային **y*-ի անկումից հետո **i*-ն հորանջի դիրքում հաջորդող **o* ձայնավորի հետ բարձրացող երկբարբառ է կազմել (**i-o* > **io*), իսկ այնուհետև երկբարբառի կազմում շրթնային **o* ձայնավորի ազդեցությամբ մասնակի առնմանման ենթարկվել՝ **io* > *uo* (*ւո*). օրինակ՝ *h*.-ե. եգ. սեռ. **portiyosyo* > **ordiyóyo* > **ordi-o'y* (միջձայնավորային **y*-ի անկմամբ և շեշտահաջորդ **o*-ի սղմամբ) > **ordio'y* > *h*. հայ. *որդւոյ* (= *orduo'y*) և այլն:

Ինչպես հայտնի է, հին հայերենի միավանկ բառերի վերջահանգ *ի*-ն բառափոխության ժամանակ անփոփոխ պահպանվում է հորանջի

³¹ Տե՛ս Серебrenников Б. А. Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, էջ 109-112:

³² Տե՛ս Бурсье Э. Основы романского языкознания, М., 1952, էջ 135-136:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 128-130, 338-339:

³⁴ Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 81-82:

³⁵ Տե՛ս Մ. Ավետյան, Հորանջի դիրքում *i* և *u* ձայնավորների կայունության աստիճանը..., էջ 237-238:

դիրքում. հմմտ. *մի* – *միոյ, միաբան, միամիտ, ձի* – *ձիոյ, ձիական, ձիա-հայած, ձիարձակ, դի* – *դիոյ, դիագարդ, դիաթաւալ, դիակն* և այլ դասական հայերեն ձևերը³⁶: Կարծում ենք՝ տվյալ դեպքում *ի*-ի անփոփոխ մնալը նախ և առաջ պայմանավորված է բառի ամբողջականությունն ու ընկալելիությունը պահպանելու ձգտումով, քանի որ *ի*-ի հանգող միավանկ բառերի միակ ձայնավորի փոփոխությունը տվյալ լեզվական միավորի արտաքին տեսքը կաղճատեր անձանաչելիության աստիճան, ինչպես՝ *ձիական* > **ձեկան, ձիահայած* > **ձեհայած, դիագարդ* > **դեգարդ* և այլն: Բացի այդ, հորանջի դիրքում *ի* ձայնավորի պահպանմանը հավանաբար նպաստել է նաև բառի ուղիղ ձևի համաբանական ազդեցությունը, որը, ի դեպ, նկատելի է նաև *ի*-ի հանգող բազմավանկ բառերի դեպքում: Իհարկե, հորանջի դիրքում ոչ միավանկ բառերի *ի*-ի պահպանվելը, որը լայն տարածում է ստանում լեզվի հետագա զարգացման ընթացքում, դասական հայերենում այնքան էլ հաճախադեպ երևույթ չէ, որտեղ հիմնականում գերակշռում են *իա* > *եա* (> *ե*) շեշտանախորդ դիրքում) հնչյունափոխության ենթարկված ձևերը. հմմտ. *գինի* – *գինեակ, գինեզէն, գինեհարիլ, գինեմոլ, գինեսէր* և այլն³⁷, *գերի* – *գերեղարձ, գերեկից, գերեվար*³⁸, *հոգի* – *հոգեխառն, հոգեկրօն, հոգեմարտ, հոգեւոր, հոգեւորագագ*³⁹, *որդի* – *որդեակ, որդեգիր, որդեծնութիւն, որդեսէր*⁴⁰: Այդուհանդերձ, դասական հայերենի շրջանից ունենք նաև այնպիսի ձևեր, որոնցում ոչ միավանկ բառերի վերջահանգ *ի*-ն պահպանվել է հորանջի դիրքում: Այսպես, *նսկի* բառից *նսկեպատեան, նսկեսէր* և այլ ձևերին զուգահեռ նույն դասական շրջանից ունենք *նսկիածին, նսկիապատ, նսկիակուտ*⁴¹ և այլ ձևեր: Եթե նկատի ունենանք, որ թե՛ հոլովման, թե՛ խոնարհման ձևերում, այդ թվում՝ բառի առաջին վանկում, սկզբնական *ի* + *ա* կապակցությունը կանոնավորապես սովել է *եա* երկբարբառ (հմմտ. **g^wiyā-* > հ. հայ. *կեամ*, **dyi-* > **երկի* + *այ* > հ. հայ. *երկեայ*, **məkiyā* > **մաքիա* + *-bhi* > հ. հայ. *մաքեաւ* – եգ. գործ. և այլն), մյուս կողմից, հաճախ *ի*-ի հանգող ոչ միավանկ բառերից, որոնք դասական հայերենի շրջանից եկող կազմություններում վկայված են *ի* + *ա* > *եա* (> *ե*) հնչյունափոխության ենթարկված ձևերով, ավելի ուշ հանդիպում են հորանջի դիրքում *ի*-ն պահած ձևեր (օրինակ, վերը բերված *որդի* և *հոգի* բառերից ուշ շրջանում վկայված են *որդիացուցանել* (9-րդ դ.), *որդիասէր* (12-րդ դ.), *հոգիանալ* (7-րդ դարի վերջեր), *հոգիախաղաց* (9-րդ դ.) և այլն)⁴², ապա այդ պարագայում կասկած չի կարող

³⁶ Բերված օրինակների համար տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977, էջ 151-152, 316, հ. I, Եր., 1971, էջ 666:

³⁷ Տե՛ս նույն տեղը, հ. I, էջ 558:

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 543:

³⁹ Տե՛ս նույն տեղը, հ. III, էջ 107:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 576:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 565:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 576, 107:

լինել, որ *hwa* կապակցության դեպքում հնագույն և օրինաչափ հնչյունական զարգացումը եղել է հորանջի դիրքում *h* ձայնավորի վերածվելը երկբարբառի ոչ վանկարար տարրի՝ *ia(hwa) > ea(եա)*: Իսկ *h*-ի պահպանվելը (այդ թվում՝ դասական հայերենի շրջանից վկայված *սուկիածին, սուկիապատ, սուկիակուտ* և այլ ձևերում), անշուշտ, բառի ուղիղ ձևի համաբանական ազդեցության հետևանք է:

Այսպիսով, վերը կատարված քննությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ հ. հայ. *որդույ, մաքույ* և նման ձևերի *ւո*-ն չէր կարող առաջանալ ո՛չ **iyo (*իյո) > *iwo (*իւո) > wo (ւո)* (կամ միջձայնավորային *y*-ի անկումից հետո հորանջի դիրքում միջանցումային *w*-ի առաջացման դեպքում՝ **iyo (*իյո) > *i-o (*ի-ո) > *iwo (*իւո) > wo (ւո)*) հնչյունական զարգացմամբ, ո՛չ էլ **iyo (*իյո) > *i-o (*ի-ո) > *yo (*յո) > wo (ւո)* հնչյունափոխության (այսինքն՝ հորանջի դիրքում **i (*ի) > *y (*յ)* հնչյունական անցման, այնուհետև *o (ո) ձայնավորից առաջ *y (*յ) > w (ւ)* մասնակի առնմանման) միջոցով: Իսկ այդ հանգամանքն էլ իր հերթին մեկ անգամ ևս հաստատում է, որ հ. հայ. *ւո*-ն ոչ թե *wo բաղաձայն + ձայնավոր* կապակցություն է եղել, այլ երկբարբառ, քանի որ այն *բաղաձայն + ձայնավոր* կապակցություն լինելու դեպքում անխուսափելիորեն պետք է ենթարկվեր *w (ւ) > u (ու)* հնչյունական անցման ճիշտ նույն կերպ, ինչպես **արծուի > արծուի, *պատույ > պատույ, *պատուէր > պատուէր* և նման ձևերի դեպքում: Ըստ այդմ՝ պետք է ընդունել, որ շրթնային *o (ո) ձայնավորից առաջ մասնակի առնմանումը իրականում տեղի է ունեցել ոչ թե ենթադրյալ *yo բաղաձայն + ձայնավոր* կապակցության, այլ **io* բարձրացող երկբարբառի կազմում: Այլ կերպ ասած՝ **iyo* կապակցության միջձայնավորային **y*-ի անկումից հետո **i*-ն հորանջի դիրքում հաջորդող **o* ձայնավորի հետ բարձրացող երկբարբառ է կազմել (**i-o > *io*), իսկ այնուհետև երկբարբառի կազմում շրթնային **o* ձայնավորի ազդեցությամբ մասնակի առնմանման ենթարկվել՝ **io > uo (ւո)*: Իսկ հ. հայ. միավանկ բառերի վերջահանգ *h* ձայնավորի անփոփոխ մնալը հորանջի դիրքում (*մի – միոյ, միաբան, միամիտ, ձի – ձիոյ, ձիական, ձիահալած, ձիարձակ* և այլն) պայմանավորված է եղել մասամբ բառի արտաքին ճանաչելիությունը պահպանելու ձգտումով, մասամբ էլ բառի ուղիղ ձևի համաբանական ազդեցությամբ:

Բանալի բառեր – *հորանջի դիրք, բարձրացող երկբարբառ, մասնակի առնմանում, բաղաձայն + ձայնավոր կապակցություն, միջձայնավորային *y*

САРГИС АВЕТЯН – К вопросу о происхождении дифтонга *ւո* (*uo*) в древнеармянском. – Как известно, многие исследователи считают *ւո* (ср. *որդույ* “сына”) звукосочетанием *wo*. При объяснении происхождения *wo(ւո)* обычно предполагается, что сначала **y* в первоначальном звукосочетании **iyo* подвергся частичной ассимиляции, а потом **i* исчез в неударном (неконечном) слоге. Со-

гласно другой точке зрения, *лн* точно так же, как *ллн* в древнеармянском, представляли восходящий дифтонг *ио*.

В результате всестороннего рассмотрения соответствующих синхронических и диахронических данных выясняется, что *лн* и *ллн* в древнеармянском не могли отражать одну и ту же фонологическую действительность, и невозможно объяснить происхождение *лн* через предполагаемый переход **iyo* (**hjn*) > **iwo* (**hln*) > *wo* (*ln*), если иметь в виду, с одной стороны, графическое различие между *лн* (*ըղևն*) и *ллн* (*լլևն*) и, с другой стороны, фонетическое развитие *w* (*l*) > *u* (*nl*) в позиции между согласным и гласным в дописменном армянском, вследствие чего возникли двусложные сочетания гласных – *u-o* (*nl-n*), *u-a* (*nl-w*), *u-e* (*nl-t*) (ср. **լլևն* [patiwoy] > **լլևն* [patwoy] > *լլևն* [patu-oy]). Наличие *l* между согласным и гласным в формах *ըղևն*, *լլևն* и им подобных можно объяснить только при предположении, что *лн*, в отличие от двусложного сочетания *u-o* (*nl-n*), представлял восходящий дифтонг *ио*. Что касается происхождения последнего, то *лн* (*ио*) восходит к бывшему дифтонгу **io*, который, в свою очередь, возник в результате исчезновения интервокального **y* в первоначальном сочетании **iyo* (т. е. **iyo* > **i-o* > **io* > *ио*).

Ключевые слова: фонетическое развитие, синхронические и диахронические данные, двусложные сочетания гласных, восходящий дифтонг, интервокальный **y*

SARGIS AVETYAN – On the Question of the Origin of the Diphthong *լ ն* (*uo*) in Old Armenian. – As known, many scholars regard *լ ն* (cf. *ըղևն* “of the son”) in Old Armenian as a sequence *wo*. As to its origin, it is generally supposed that **y* in the original sequence **iyo* was partially assimilated to **o*, and later on, **i* in unstressed (non final) syllable was lost (i.e. **iyo* > **iwo* > *wo*). According to another view, *լ ն* as well as *ллн* in Old Armenian, represented the rising diphthong *ио*.

The thorough examination of the respective synchronic and diachronic data makes it clear that neither *лн* and *ллн* in Old Armenian could reflect the same phonological reality, nor could *лн* have originated through the alleged phonetic change **iyo* (**hjn*) > **iwo* (**hln*) > *wo* (*ln*) – as evidenced by the graphic difference between *лн* (*ըղևն*) and *ллн* (*լլևն*), on the one hand, and the phonetic development *w* (*l*) > *u* (*nl*) between a consonant and a vowel, yielding bisyllabic sequences *u-o* (*nl-n*), *u-a* (*nl-w*), *u-e* (*nl-t*) in pre-written Armenian (cf. **լլևն* [patiwoy] > **լլևն* [patwoy] > *լլևն* [patu-oy]), on the other hand. The occurrence of *l* between a consonant and a vowel in such forms as *ըղևն*, *լլևն* can be accounted for only by the assumption that *лн* in Old Armenian represented the rising diphthong *ио* as opposed to the bisyllabic sequence *u-o* (*nl-n*). As far as the origin of *лн* (*ио*) is concerned, it goes back to an earlier diphthong **io* resultig, in its turn, from a bisyllabic sequence **i-o* due to the loss of the intervocalic **y* in the original sequence **iyo* (i.e. **iyo* > **i-o* > **io* > *ио*).

Key words: unstressed (non final) syllable, the rising diphthong, the bisyllabic sequence, phonetic development, synchronic and diachronic data, the intervocalic **y*

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՐԿԱԿԻ ԹՎԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵԻ

ԱՐՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լեզվաբանության պատմության մեջ 19-րդ դարի սկիզբը նշանավորվեց պատմահամեմատական լեզվաբանության առաջացմամբ: Այս մեթոդի ստեղծման առաջին իսկ շրջանից հայոց լեզվի ծագման և ցեղակցության հարցերը գրավեցին լեզվաբանների ուշադրությունը: Իսկ այն բանից հետո, երբ գերմանացի արևելագետ և հայագետ Հայնրիխ Հյուբշմանը 1875 թ. հրատարակեց իր «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների մեջ» աշխատությունը, որով նա վերջնականապես ապացուցեց հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի առանձին ճյուղ լինելու փաստը, լեզվաբանների առջև բացվեց գիտականորեն դեռևս քիչ մշակված մի բնագավառ, որի լավագույն մշակներից մեկը դարձավ ֆրանսիացի ականավոր լեզվաբան Անտուան Մեյեի:

Հայերենի ուսումնասիրությունը եղել է Ա. Մեյեի գիտական հետաքրքրությունների կարևոր ուղղություններից մեկը: Հին հայերենի ինչպես հնչյունաբանական, այնպես էլ ձևաբանական ու շարահյուսական հարցերի քննությունը իրենց ուրույն տեղն են գտել հայերենին նվիրված նրա մենագրություններում¹, բազմաթիվ հոդվածներում և գրախոսականներում:

Հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության բնագավառում լեզուների ձևաբանական համակարգի քննությանը մեծ տեղ է տրվում, քանի որ տարբեր լեզուների քերականություններում ևս ամենածավալուն բաժինը ձևաբանությունն է:

Հնդեվրոպական նախալեզվից սերող մի շարք լեզուների, այդ թվում հին հայերենի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններից է երկակի թվի կորուստը:

Հնդեվրոպական նախալեզվի քերականական կառուցվածքի մեջ երկակի թիվն իր բնորոշ տեղն ու առանձնահատկություններն ունեն: Այն հանդիպում է ոչ միայն հնդեվրոպական և սեմա-քամյան լեզվաընտանիքների լեզուներում, այլև որոշ ուգրա-ֆիննական լեզուներում և

¹ «Հին հայերենի տարրական դասընթաց (Altarmenisches Elementarbuch)», Հայդելբերգ, 1913: «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ (Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique)», Վիեննա, 1903, 2-րդ հրատ., Վիեննա, 1936: «Ուսումնասիրություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ (Recherches sur la syntaxe comparée de l'arménien)», Լիսաբոն, 1962:

Աֆրիկայի ու Ամերիկայի բնիկ լեզուներում: Մակայն, գոյություն ունենալով գրեթե բոլոր հին լեզուներում, այն շատ մեծ արագությամբ իսպառ անհետացել է այդ լեզուների մեծ մասից: Նույնիսկ այն լեզուներում, որտեղ երկակի թիվը կարծես թե դեռևս կիրառելի է, այն ոչ կայուն, մնացուկային կարգի տպավորություն է թողնում:

Հետևաբար հարց է առաջանում՝ ո՞րը կամ որո՞նք են եղել այն դրոշմապատճառները, որոնցով բացատրվում են երկակի թվի ինչպես առաջացումը, այնպես էլ անհետացումը, ինչո՞վ է պայմանավորված, որ երկու անձ կամ երկու առարկա մատնանշող այս կարգն ունի հատուկ քերականական ձև: Առաջին պատասխանը, թվում է, այն է, որ գույգերով հաշվվող առարկաների համար բնությունն ինքն է թելադրել հատուկ քերականական կարգի գաղափարը:

Այսպես, Բրոկելմանը նշում է, որ երկակի թիվը նախ և առաջ գործածվել է մարմնի գույգ անդամների անուններ, ինչպես նաև առհասարակ գույգ առարկաների անուններ մատնանշելու համար, օրինակ՝ *հոր* և *մոր* գույգը, *երկինքն* ու *երկիրը*, *գիշերն* ու *ցերեկը*: Այնուհետև երկակին աստիճանաբար ընդհանրացել է ու կիրառվել այն բոլոր դեպքերում, երբ երկու նման առարկաներ պատահաբար միասին են հանդես եկել²: Ժ. Վանդրիեսը առաջարկում է երկակի թիվը բացատրել որպես մի հին կոլեկտիվ, որի անհետացումն էլ հոգուտ հոգնակիի պայմանավորում է երկակի թվի վերացումը այն լեզուներում, որտեղ այն եղել է³:

Ա. Մեյեն երկակի թվի վերացումը դիտում է որպես քաղաքակրթության առաջընթացի ցուցանիշ: Նա շատ հաճախ է ուշադրություն դարձնում այս փաստին, որ դա լեզվի վրա հասարակության ազդեցության ամենասակնառու ապացույցներից է: Մեյեն գրում է. «Քաղաքակրթության զարգացման հետ մեկտեղ իսպառ վերացել է կրկնակի թիվը, որ տարբերվում էր հոգնակի թվից: Այն անհետացել է, ինչպես նույն ժամանակաշրջանում անհետանում էր հնդեվրոպական բոլոր լեզուներում, բացի բալթիականից, սլավոնականից և կելտականից: Հայերենը, որ երկակին կորցրել է որպես քերականական առանձին կարգ, այս թվի հին ձևերից պահպանել է միայն հավաստի շատ քիչ հետքեր: Ամենահայտնին *երկու* թվական անունն է. այն ուղղականում չի ընդունել հոգնակիի *-ք* հատկանիշը, որը երևան է գալիս թեքվող *երեք* և *չորք* մյուս թվական անուններում»⁴: Ի տարբերություն գրաբարի՝ գերմաներենում *երկու* թվականի ձևերը փոխարինվել են հոգնակիի ձևերով. այսպես, գոթերենում ունենք *twai*՝ արական սեռի համար, *twos*՝ իգական սեռի համար և *twa*՝ չեզոք սեռի համար⁵:

² Տե՛ս **Brockelmann Carl**, Vergleichende Grammatik der semitischen Sprachen, Berlin, 1908, էջ 106:

³ Տե՛ս **J. Vendryes**, Sur le nombre duel, Paris, 1937, էջ 116:

⁴ **Ա. Մեյե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 247:

⁵ Տե՛ս **A. Meïe**, Основные особенности германской группы языков, М., 1937, էջ 149:

Ա. Մեյեի այս տեսակետին համամիտ են Լևի-Բրյուլը և Հրաչյա Աճառյանը: Լևի-Բրյուլը գրում է. «Զարմանալի չի լինի, եթե որոշ վայրի ժողովուրդների մոտ եռյակ նշանակող առարկաների համար գործածվի եռակի թիվ»⁶: Հ. Աճառյանը իր հերթին գրում է. «Երկակին կարևոր մի ձև է վայրենու համար, որովհետև նա գիտե հաշվել միայն մեկ և երկու. իսկ երեքից սկսած իրեն համար «շատ» է: Լեզվի զարգացման ընթացքում, քանի ազգերի կուլտուրական մակարդակը բարձրանում է, երբ թվի գաղափարը արդեն ստանում է իր արդիական ձևակերպությունը, երկակին դառնում է ավելորդ և հետզհետե վերանում է՝ միանալով հոգնակիի հետ: Այսպես, մեզ համար երկակին հոգնակի է: Քաղաքակրթության հետ ջնջվում է ուրեմն երկակին էլ»⁷:

Երկակի թվի հետքեր հայտնաբերված են մի շարք հնդեվրոպական լեզուներում: Այսպես, հին վերին գերմանական բարբառներում, սանսկրիտում և հին հունարենում երկակի թիվը պահպանվում է անձնական դերանունների մեջ, սլովակերենում՝ *oči*. «*աչք*», *usi*. «*ականջ*» բառերում, չեխերենում՝ մարմնի զույգ անդամների անուններում՝ *աչք*, *ականջ*, *շրթունք*, *ոտք*, *ձեռք* և այլն (հմմտ. նաև սանսկր. *aksi*, հին սլավ. *oči*, լիտվ. *oki* և այլն):

Ինչ վերաբերում է հայերենին, ապա այն որոշ չափով տարբերվում է վերոնշյալ լեզուներից: Պատճառն այն է, որ գրաբարը երկակի թիվը վերացրել է՝ պահպանելով որոշ հետքեր: Ա. Մեյեն երկակիություն է նկատում միայն *ակն*, *ունկն* և *ծունգք* անուններում: Ըստ նրա՝ *ակն*-ի *աչք* հոգնակին երկակիի մի հին ձև է, հմմտ. սանսկր. *aksi* և հուն. *ὄσσε*: *Ունկն*-ի *ականջք* հոգնակին մի երկրորդ անկախ օրինակ չէ, ինչպիսին է, օրինակ, սլավոներենում *оуши*-ն՝ *очн*-ի դիմաց, որովհետև մի կողմից՝ այդ ձևը ստուգաբանորեն բացատրված չէ, և մյուս կողմից՝ այն կրել է *աչք*-ի ազդեցությունը ու ասես նմանվել է նրան. ինչպես *ունկն*-ի բառավերջային *-կն*-ն կարծես փոխ է առնվել *ակն*-ից, այնպես էլ *ականջք*-ի բառավերջային *-ք*-ն պետք է փոխ առնված լինի *աչք*-ից: **Աչ* և **ականջ* բառերը, տեղ գրավելով թեքման մեջ, ուղղականում ընդունել են *-ք*, իսկ հայցականում՝ *-ս*⁸:

Ա. Մեյեն ենթադրում է, որ *ծունգք*-ը, որ կիրառվում է որպես *ծունր*-ի հոգնակին, պետք է երկակիի մի հին ձև լինի: Այստեղ դժվարություն է առաջանում այն պատճառով, որ հնարավոր չէ որոշել, թե հայկական ձևը *ծն ւնգք* է, թե՞ *ծունկք*, քանզի դեռևս հնագույն ձեռագրերում որոշ շրջանների գրիչներ շփոթել են *նգ*-ն և *նկ*-ն: Հ. Աճառյանը, ստուգելով Էջմիածնում պահպանված Ավետարանի միակ հատվածը՝

⁶ Lévy-Bruhl, Les fonctions mentales dans les sociétés inférieures, 9^e éd., Paris, 1951, p. 157.

⁷ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հ. 3, Եր., 1957, էջ 239:

⁸ Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 248:

Ղուկ., Ե, 8, որտեղ հանդիպում է *ծունգք*-ը, այնտեղ գտնում է ինչպես *նգ*-ով, այնպես էլ *նկ*-ով գրություններ: Այնուհանդերձ, Էջմիածնի 989 թվականի № 229 ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությամբ Ա.Մեյեն հայտնաբերեց, որ այնտեղ հստակ տարբերվում է *նգ*-ն *նկ*-ից: Այնտեղ օգտագործվում է *ծունգու*՝ *գ*-ով: Ըստ այդմ՝ Ա. Մեյեն գրում է, որ եթե **ծունգ*-ը հին ձևն է, բացատրությունը պարզ է. որպես ելակետ պետք է ընդունել **gonwi* կամ **gōnwi* (չեզոք սեռի երկակի ուղղական-հայցականի *i* կամ *i* հնդեվրոպական վերջավորությամբ) կամ, ընդհանուր առմամբ, **gonw-+ձայնավոր* ձևը, և ունենք *ն*-ից հետո *գ*-ով ներկայացված *w*-ի մի օրինակ: *W*-ի *g* հնչյունական զարգացումը հանդիպում է նաև բազմաթիվ այլ նման դիրքերում և հատկապես *տայգր*, *լոզանայ* բառերում: **Օունգ* հին երկակին հավանաբար պահպանվել է, որովհետև այն գտնվում էր չթեքվող *ծունր* եզակիի դիմաց. հմմտ. *արտասուք* ածանցյալը *արտասուք*-ի դիմաց⁹:

Մակայն այստեղ հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն փաստին, որ Ա. Մեյեի վերը նշված բոլոր դիտողությունները վերաբերում են գրաբարյան շրջանին: Միջին հայերենն ու մի շարք բարբառներ հնդեվրոպական ընտանիքի շատ լեզուների համեմատությամբ, բացառությամբ չեխերենի, ավելի պարզորոշ են պահպանել ոչ միայն շնչավորների մարմնի գույգ անդամների անունների երկակին, այլև այդ երկակին կազմելու համար ստեղծված *-վի* մասնիկ-ձևությամբ: Դա բացատրվում է նրանով, որ մեր բարբառներից մի քանիսում հոգնակերտների գործածությունը գոյատևելու հենարան է տվել նաև այն մասնիկներին, որոնք նախկինում երկակիի ցուցիչ էին¹⁰: Ա. Մեյեն ենթադրում է, որ այս վերջավորությունը կարող է փոխառված լինել **ծնուի* մի հին ձևից, որտեղ *-ի*-ն հավանաբար հավաքականի ճանաչված հատկանիշն էր. **ծնու-* հիմքը հավանաբար վկայում է մի թեքում, որը չի պահպանվել դասական հայերենում, բայց պահպանվել է բարբառներում¹¹:

Աճառյանը ևս ցույց է տալիս, որ *ակն*, *ունկն* և *ծունր* բառերում գրաբարը պահպանել է երկակի թվի թե՛ իմաստային և թե՛ ձևաբանական հատկանիշները¹²:

Կարևոր է նշել նաև այն, որ Հ. Հյուբշմանի կարծիքով երկակիի ձև ունեն նաև *ձեռք* և *ոտք* բառերը, որովհետև դրանք էլ իմաստով երկակի են¹³: Հ. Պետրոսյանը իր «Գոյականի թվի կարգը հայերենում» աշխատության մեջ հիմնավորում է Հ. Հյուբշմանի տեսակետը *ձեռք* և *ոտք*

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 248:

¹⁰ Տե՛ս Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 81:

¹¹ Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 248:

¹² Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 442:

¹³ Տե՛ս Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1990, էջ 27:

բառերի հնագույն երկակիի վերակազմավորում լինելու վերաբերյալ¹⁴:

Այս երկու բառերի վերաբերյալ Ա. Մեյեն թեպետ դեմ չէ Հյուբշմանի տեսակետին և նշում է, որ *nom-p* հոգնակին, որը պահպանվել է անկախ *nom-n* եզակիի՝ -ն-ով հիմքերին անցնելուց, կարող է համապատասխանել հուն. *πόδες* երկակիին, ինչպես նաև *πόδες* հոգնակիին. նույնպես և *den-p-ը den-n*-ի դիմաց, բայց նա նաև ավելացնում է, որ, այնուամենայնիվ, ոչինչ չի արգելում, որ հանձինս *nom* և *denp* ձևերի տեսնենք հոգնակիի ներկայացուցիչներ:

Նշված օրինակներում երկակի թվի պահպանումը, թվում է, միանգամայն բնական է, որովհետև *այք, ականջ* բառերը, նախ, ամենից շատ գործածվող բառերից էին և հեշտությամբ չէին կորցնի իրենց տեղը, երկրորդ, *այք* և *ականջ* բառերը ստացել էին ձևաբանական տարբերակում. երկակի թվով նրանք հոլովվում էին մի, իսկ հոգնակի թվով՝ այլ հոլովմամբ: Ինչ վերաբերում է գործածության տեսակետից նույնքան հաճախական *denp* և *nom* բառերին, ապա սրանք որոշակիորեն տարբերվում են նախորդներից և միմյանցից: *denp, nom* բառերը երկակի և հոգնակի թվերի համար իրարից տարբեր հատուկ հոլովում չունեն: Վերջիններս չունեն նաև զուգահեռ իմաստ, որովհետև *denp*ը հատուկ է մարդուն, իսկ *nom*ը առաջինը պետք է անցնել հոգնակիի, որովհետև թվի գաղափարը ամենուր խառնվում էր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *nom* բառը, որը ծագում է հնդեվրոպական **dhur* արմատից, ևս պահպանել է երկակիին հատուկ հոլովաձևերն ու իմաստային տարբերությունը.

երկակի - *այք*, սեռ.-տր. - *այաց*, հայց. - *այս*, գործ. - *այաւք*
հոգնակի - 1. *ակունք*, սեռ.-տր. - *ականց*, հայց. - *ակունս*, գործ. - *ակամքք* 2.
ականք:

Սրանց համեմատ ունենք.

դուրք, սեռ.-տր. - *դրաց*, հայց. - *դուրս*, գործ. - *դրաւք*
դրունք, սեռ.-տր. - *դրանց*, հայց. - *դրունս*:

Համեմատությունից երևում է, որ *դուրք, դրաց, դրաւք* ձևերը համապատասխանում են *այք, այաց, այաւք* ձևերին, որոնք երկակի են, իսկ *դրունք, դրանց* ձևերը՝ *ակունք, ականց* ձևերին, որոնք հոգնակի են: Այս առումով Հ. Պետրոսյանը գրում է. «Այսպիսով, գրաբարյան *դուրք* հոգնակին երբեմնի երկակիի հիմքի վրա ձևաբանորեն վերակազմավորված հոգնակիի ձև է՝ *ք* հոգնակերտով»¹⁵:

Այսպիսով, երկակի թիվը գրաբարում պահպանվել է ոչ միայն *այք, ականջ*, *ծունք* բառերում, ինչպես հաստատում են Ա. Մեյեն և Հ. Աճառ-

¹⁴ Տե՛ս Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 90-91:

¹⁵ Նույն տեղում, էջ 93:

յանը, *ձեռք, ոտք* բառերում, ինչպես ենթադրում էր Հ. Հյուբշմանը, այլև *դուռ* բառի մեջ: Ահա այն բոլորը, որ, իբրև երկակի թվի ժառանգություն, բացահայտված է գրաբարում:

Այստեղ, այնուամենայնիվ, կարևոր ենք համարում մի փոքր անդրադարձ կատարել երկակի թվի պահպանմանը միջին հայերենում և բարբառներում: Առաջին հայացքից մեզ թվում է, թե գրաբարը, ներկայացնելով լեզվի ավելի հին վիճակը, պետք է երկակի թիվն ավելի հստակ պահպաներ, քան միջին հայերենն ու բարբառները, սակայն իրականում մենք ականատես ենք ճիշտ հակառակ պատկերի: Եթե գրաբարը որպես երկակի թվի հետքեր պահպանել է լոկ մի քանի բառ, որոնց քննությանը մենք ծանոթացանք վերևում, ապա միջին հայերենում ու որոշ բարբառներում կան ինչպես երկակի թվով բառերից շնչավորների մարմնի գույգ անդամների անուններ, այնպես էլ երկակի թվի կազմիչ հանդիսացող մասնիկ. մի բան, որ բացակայում է ինչպես հնդեվրոպական նախալեզվում, այնպես էլ նրանից սերող բոլոր այն լեզուներում, որոնք գործածել են երկակի թիվը:

Միջին հայերենում երկակի թիվը կազմվում էր *-ուի* մասնիկով, որն արտասանվում էր *-վի՝ աշուի (աշվի, աշվի), ձեռուի (ձեռվի, ձեռքվի), ոտուի (օտվի)*: Սակայն ժամանակի ընթացքում այդ *-վի* մասնիկը դադարեց երկակի թիվ կազմող ձևույթ լինելուց, դարձավ հոգնակիի ցուցիչ և իր տեղը զիջեց *-եր, -ներ* մասնիկներին:

Այսպիսով, միջին հայերենում երկակի թվի ձևույթը, ինչպես որ մտավ գրական լեզվի մեջ, նույն կերպ էլ դուրս եկավ: Այն որպես բարբառային ներթափանցում, մնաց այդպիսին, ուրիշ բառերի վրա չտարածվեց և փոխարինվեց այլ մասնիկներով: Այն հանգամանքը, որ գույգություն արտահայտող բառերի հոգնակին կարող էր կազմվել և՛ հոգնակերտով՝ *-եր, -նի*, և՛ երբեմնի երկակիի ցուցիչով՝ *-վի (աշեր և աշվի)*, հաստատում է, որ երկակին միջին հայերենում մեռած քերականական ենթակարգ էր: Կարևոր ենք համարում նշել նաև, որ *-վի* մասնիկը միջին հայերենում, վաղ շրջանից սկսած, գործածվում էր նաև գույգ անդամների գաղափարի հետ կապ չունեցող մի շարք բառերում (հմմտ. գրվի, *խօսվի, իրվի, միջուի, տնվի, շնվի* և այլն):

Ինչ վերաբերում է բարբառներին, ապա այստեղ երկակի թվի արտահայտությունը ավելի հետաքրքիր դրսևորում ունի, քանի որ *-վի* մասնիկը ձևաբանական համանման արժեքով գտնում ենք նաև հայերենի մի քանի բարբառներում: Ռ. Բաղրամյանը, հենվելով Հ. Աճառյանի և իր անձնական դիտարկումների վրա, երկակիի հարցում բարբառները բաժանում է երեք խմբի¹⁶.

¹⁶ Տե՛ս Ռ. Բաղրամյան, Երկակի թվի մնացորդները հայերենի բարբառներում // Պատմա-բանասիրական հանդես, 1960, №1, էջ 191-200:

1) Բարբառներ, որոնցում երկակի թիվն իսպառ անհետացել է.

այդպիսիք են արևելյան բարբառները (ՌԻՄ, Լ և Ս ճյուղերը): Այս առումով նրանք նման են գրաբարին:

2) Բարբառներ, որոնք պահպանել են որոշ քարացած ձևեր.

այդպիսիք են Պոլսի՝ յօնք-ինքվի, ինքուի, իքվի, ընքուի, իքվիներ, մատն-մադվրներ, աչ-աշվրներ, ձեռն-ձառքվրներ, ծառվրներ, Վանի՝ ծունկ-ծըլվեր, ծիլվեր, յօնք-ընքյվեր, լինդ-լընդվեր, անութ-հընթվեր, ճանկ-ճայվեր, կտոր-կտորվանքյ, տեր-տիրվանքյ, ամառն-ամըռվրներ, ցերեկ-ցերեյվրներ¹⁷, Կարնո (բացառությամբ Ախալքալաքի և Ախալցխայի ենթաբարբառի, որտեղ -վի մասնիկը, -վրներ մասնիկին գուզընթաց, պահպանվել է միայն մարմնի գույզ անդամների անունների հոգնակին կազմելու համար՝ աչ-աչվի, աչվրներ)¹⁸ տեր-դիրվըդիք, տիրվըդանք, քոյր-քուրվըդիք, և ուրիշ բարբառներ:

Օրինակներից երևում է, որ *-վի* մասնիկը հավասարապես տարածվել է միավանկ բառերի վրա, բացառությամբ *ականջ*, *անութ*, *ամառ* և *ցերեկ* բառերի: Առաջին երկու բառերի՝ որպես գույզ անդամների անունների *-վի* մասնիկ ստանալը բնական է: Ինչ վերաբերում է *ամառ* և *ցերեկ* բառերին, վերջիններս *-վի* են ստացել համաբանությամբ, թերևս այն ժամանակ, երբ երկակի թիվը սկսել էր քայքայվել: Անցումային այդ շրջանում *-վի* մասնիկը ձեռք բերեց հոգնակի թիվ կազմելու պաշտոն, բայց այն այդ իմաստով չպահպանվեց, քանի որ հոգնակիի կազմության համար նրան ավելացան երկրորդ, բայց արդեն սովորական *-եր* և *-ներ* մասնիկները:

Բարբառների այս խմբին են հարում նաև Սվեդիայի, Ջեյթունի և Մշո բարբառները: Սվեդիայի բարբառում նախկին երկակի *-վի* մասնիկը, որ դեռ պահպանվում է, ունի ընդհանուր գործածություն և երբեմն միանում է ուրիշ հոգնակերտ մասնիկների և հատկապես *-ք* մասնիկին, ինչպես՝ *երես>իրիս*, *իրիսվունք*, *բերան>բիրուն*, *բիրվրնա*, *թուշ>թոշ*, *թշվաք*, *աչք>իչվա*, *դունն>դոռ*, *դովաք*¹⁹:

Ջեյթունի բարբառում մարմնի գույզ անդամների անունները եթե միավանկ են, հոգնակիում ստանում են *-վր* կամ *-վրնը՝ ձեռք>ձառ*, *ձրովրնը*, *ձեռքվրնա*, *մատն>մոդ*, *մադվրնա*, *ծունկ>ձունգ*, *ձրնգվր*, *ձրնգվրնը*, *ձրնգվրնա*²⁰: *-Վի* մասնիկով հոգնակի կազմում են ութ բառ, որոնցից չորսը մարմնի գույզ անդամների անուններ են՝ *աչք*, *հոնք*, *ոտք*, *ականջ*:

¹⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Վանի բարբառի, Եր., 1952:

¹⁸ Տե՛ս **Հ. Մկրտչյան**, Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 46:

¹⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Կիլիկիայի բարբառի, Եր., 2003, էջ 457-458:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 152:

Մշո բարբառում էլ *աչք, ոտք, ձեռք* բառերը հոգնակին կազմում են թե՛ *-եր*, թե՛ *-վի* մասնիկներով՝ *հաչվի, ձեռվի, օղվի*:

3) Բարբառներ, որոնք դեռ պահպանում են երկակիի հետքերը:

Ըստ *-վի* տարրի գործածության բնորոշ դրսևորումների՝ Համշենի բարբառը, մյուս բոլոր բարբառների համեմատ, առաջատար դիրք է գրավում երկակի թվի պահպանման հարցում:

Ահա այն բոլոր օրինակները, որոնք Հ. Աճառյանը թվում է իր «Քննություն Համշենի բարբառի» աշխատության մեջ՝ *աչք>աչվի, աչվիք, աչքեր, թուշ>թշվի, թշեր, ծոց>ծեօց, ծօցվի, ծունկ>ծունգ, ծնգվի, ծունգեր, ծնգեր, ձեռք>ձեռվի, ձեռքեր, ձեռվիք, յօնք>ընքվի, ընքվիք, ունքվի, ունքվիք, մատն>մադ, մադվի, մադվիք, մադեր, կոտոշ>գօդէշվընի, ճանկ>ջօնգ, ջօնգվի, ջօնգվիք, ջօնգեր*²¹:

Ուշագրավ է, որ Համշենի բարբառում մարմնի գույգ անդամ նշանակող բառի հոգնակին միշտ կազմվում է *-վի* մասնիկով՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ բառը միավանկ է, թե բազմավանկ:

Համշենի բարբառում երկակի թվի արդի գործածման վառ ապացույց են *դուռ* և *եզ* բառերը: Հ. Աճառյանը ցույց է տալիս, որ *դուռ* և *եզ* բառերի հոգնակին կազմվում է երկու ձևով՝ *տուրի*՝ «դռան երկու փեղկերը» և *տոնէր*՝ «զանազան տների և սենյակների դռներ»: Նույն կերպ *եզ* բառի համար՝ *էզնի* ասելով հասկացվում է «մեկ լուծ եզ», իսկ *էզներ*՝ «եզների մի խումբ կամ երկուսից ավելի եզներ»²²:

Կարծում ենք՝ միանգամայն իրավացի է Հ. Աճառյանը, երբ գրում է. «-Վի ձևով հոգնակիները երկակի են եղել, նշել են մարմնի գույգ անդամների անուններ»²³:

Կարելի է եզրակացնել, որ հայ բարբառներում երկակիի իմաստով պահպանվել են մարմնի գույգ անդամների հետևյալ անունները՝ *ունք, աչք, ականջ/ունկ, թուշ, պոունկ, ձեռք/թն, անութ, ծիծ, ոտք/աք, ծունկ, լինդ, մեջք, կոտոշ*:

Նախքան գրաբարում երկակի թվի առաջացման ու անհետացման հարցի շուրջ եզրակացություն անելը կարևոր է հստակեցնել, թե որտեղից է երկակիի գաղափարը հայ բարբառներում: Կարծում ենք, որ երկակի թիվը բարբառներում կապ չունի ո՛չ գրաբարի հետ, որը լիովին վերացրել էր այդ թիվը նախքան գրավոր լեզու դառնալը, ո՛չ էլ այն լեզուների հետ, որոնք ապրել են հայերենի հարևանությամբ կամ ձուլվել նրա մեջ: Մնում է ընդունել, որ երկակի թիվը բարբառներում գալիս է հնագույն հայերենից և ոչ այլ աղբյուրից: Ուրեմն, հնագույն հայերենն

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 84:

²² Նույն տեղում, էջ 85-86:

²³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 712:

ունեցել է բարբառներ, որոնցից մի քանիսը հարատևելով պահպանել են երկակի թվի հետքերը: Իսկ այդ բարբառների գոյության ապացույցն է *-վ/հ* մասնիկը, որն, անտարակույս, երկակի թվի կազմիչն է եղել:

Հետևաբար՝ միանգամայն իրավացի է Ա. Մեյեն, ըստ որի՝ եթե ոչ միջին հայերենում ու հայերենի բարբառներում, ապա հին հայերենում, ինչպես հնդեվրոպական այն լեզուներում, որոնցում հստակ կիրառվում էր երկակի թիվը, վերջինիս թե՛ առաջացումը, թե՛ անհետացումը մեծ մասամբ պայմանավորված էին քաղաքակրթության առաջընթացով: Տրամաբանական է, որ քաղաքակրթության ձևավորման սկզբնական փուլում, երբ մարդը դեռ իր մտավոր զարգացման ամենավաղ աստիճանում էր գտնվում, երկակիի գործածումը պարզապես անհրաժեշտ էր գույգ առարկաների, մասնավորապես՝ մարմնի գույգ անդամների տարբերակման համար (դրանք ամենաշատ գործածվող բառերն էին համարվում): Բայց քաղաքակրթության առաջընթացի հետ միասին, երբ լեզուներն ավելի ու ավելի են զարգանում ու ձգտում հնարավորինս հեշտացնել ու մատչելի դարձնել իրենց կառուցվածքը, երկակին պարզապես ավելորդ է դառնում ու դադարում կիրառվել, քանզի գույգ առարկաների մատնանշման համար բավարար է լոկ հոգնակի թվի տարբերակումը եզակիից. ժամանակակից լեզվում հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ, հետևաբար և գույգ առարկաներ:

Արդ, հին հայերենը համընթաց է հնդեվրոպական այն լեզուներին, որոնք, քաղաքակրթության առաջընթացով պայմանավորված, վաղուց կորցրել են երկակի թիվը:

Բանալի բառեր – *երկակի թիվ, հին հայերեն, հնդեվրոպական նախալեզու, հայերենի բարբառներ*

АРМИНЕ ГЕВОРГЯН – *Проявления двойственного числа в древнеармянском языке по Антуану Мейе.* – Формы двойственного числа не были присущи литературному армянскому языку ни на одном из этапов его развития. Однако исследователи, в том числе и А. Мейе, выделяют в грабаре отдельные его проявления (ср. *աչք, աղանջք, ծունգք*/ ачк, аканджк, цунгк). Это вполне естественно, если учесть, что армянский – индоевропейский язык, а в ряде древних языков этой семьи (древнеиндийский, древнегреческий, латинский, праславянские) сохранились формы двойственного числа, восходящие к индоевропейскому праязыку. В некоторых современных армянских диалектах (Амшен, Ван, Сведия, Зейтун) исследователи выделяют формы двойственного числа с формантами *-wi, -wi*, и не исключено, что они являются индоевропейскими архаизмами.

По-видимому, приемлемо мнение А. Мейе, согласно которому в языках, в том числе и армянском, исчезновение грамматических форм двойственного числа следует объяснять прогрессом цивилизации.

Ключевые слова: *двойственное число, старый армянский, индоевропейский праязык, армянские диалекты*

ARMINE GEVORGYAN – *The Expression of Dual in Old Armenian According to Antoine Meillet.* – Dual number has not been a peculiar feature of literary Armenian in any stage of its development, however, some researchers, including Antoine Meillet, mark separate forms of dual number in Classical Armenian (cf. *այք, ալիսնք, ծունք*).

It is quite natural, if we take into account the fact that Armenian is an Indo-European language, and most of Indo-European old languages (Old Indian, Ancient Greek, Latin, Pre-Slavic languages) had maintained the form of the dual number as a grammatical category inherited from the Proto-Indo-European language. Scholars dealing with Armenological studies differentiate forms of dual number containing the particles *նի/լի/վի* in some Modern Armenian dialects (dialects of Hemshin, Van, Svedia, Zeytun), and it is not excluded that these are pre-Classical Armenian remnants.

Apparently A. Meillet's view according to which the disappearance of grammatical forms of dual number in languages, including Armenian, must be explained by the progress of civilization, is admissible.

Key words: *Dual number, Old Armenian, Proto-Indo-European language, Armenian dialects*

**ՀԱՅԵՐԵՆԻ Ը ՀՈՂԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ
ՇՈՒՐՁ***

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Որոշյալ **ը** հողի առաջացումը հայերենում լեզվի ներքին օրինաչափությունների ու բնականոն զարգացման արդյունք է: Այդ է վկայում այն հանգամանքը, որ հայերենին ցեղակից ոչ մի լեզվում քերականական այդ մասնիկը գոյություն չունի: Հայ լեզվաբանության մեջ **ը** հողի ծագումը դիտարկվել է 19-րդ դարի վերջի պատմահամեմատական և 20-րդ դարի կառուցվածքային լեզվաբանության ուսումնասիրություններում, իսկ դրա առաջացման ստույգ ժամանակը լեզվական որոշ փաստերի բացակայության պատճառով որոշվում է հարաբերականորեն:

Ըստ Ա. Այտրնյանի՝ **ը** հողը ավելի վաղ է գործածվել կենդանի խոսակցական լեզվում, քան հիշատակվել է գրական հուշարձաններում, իսկ նրա առաջին արտահայտությունը՝ վիմաքանդակ մի արձանագրության մեջ. «Մենք այդ **ը** վերջաւորութիւնն առաջին անգամ՝ ԺԳ դարու վիմաքանդակ արձանագրութեան մը վրայ կը կարդանք. որ բովանդակ մեր հնութեանց մէջ միակ է. «Մոքա տուին տարինը ք ժամ՝ ի տանի վարդանանց», ուրիշ հին եւ նոր արձանագիրները կը գրեն տարին...»¹:

Համաժամանակյա վիճակագրական քննությունները ցույց են տվել, որ խոսակցական լեզվում **ը** հողի գործածությունը **և**-ի համեմատությամբ շատ ավելի մեծ է², թեև **և** հողի ոլորտն ավելի մեծ է, քան **ը** հողինը. **և**-ն դրվում է ոչ միայն բոլոր ձայնավորահանգ բառերի, այլև բաղաձայնահանգ բառերի վրա՝ հնչյունական որոշակի միջավայրում, երբ հաջորդ բառը սկսվում է ձայնավորով:

Հ. Աճառյանը **ը** հողի ծագումը դիտարկում է իր տերմինավորմամբ «ձայնական բարեշրջության» շրջանակներում՝ պատճառաբանելով, որ հին հայերենում **և** հողը կանոնավոր գործածություն չունեի, ուստի «նոր լեզուին մեջ յառաջ բերաւ երկու ձև, մեկը **և**, որ յատկացուեցաւ

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Ա. Այտրնյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 168:

² Տե՛ս Ա. Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Եր., 1988, էջ 58:

ձայնաւորայանգ բառերուն, եւ միւսը՝ **բ**, որ յատկացուեցաւ բաղաձայնահանգ բառերուն: Ասկէ զատ ստեղծուեցաւ յօդի ընդհանուր եւ կատարեալ գործածութիւն»³:

Ծագած լինելով կենդանի խոսակցական լեզվի օրինաչափությունների հիման վրա՝ նրա կանոնավոր, համակարգված գործառույթը հաստատվել է գրական լեզվում: Հետևաբար պայմանականորեն կարող ենք ասել, որ **բ** հոդը կիրառության հատուկենտ դրսևորումներ է ունեցել միջնադարի, ապա ավելի հաճախական՝ 18-րդ դարի վերջերի ու 19-րդ դարի սկզբնական շրջանի գրական աղբյուրներում, իսկ պարբերաբար կիրառությունները կանոնավորապես տեսանելի են 19-րդ դարի վերջերում ու հայերենի հետագա զարգացման ընթացքում:

Հայտնի է, որ բառավերջը հայերենում կայուն չի եղել և գրեթե միշտ ենթարկվել է փոփոխությունների պատմական ընդհանուր հնչյունափոխությունների համատեքստում: Վերլուծությունները ցույց են տալիս, որ հայերենում կցադիր **բ** հոդը զադոնավանկային ծագում ունի և ուղղակիորեն պայմանավորված է բառավերջում տեղի ունեցած հնչյունափոխություններով: Հայերենի զարգացման նախագրային և գրային վաղ շրջանի փուլերում բառավերջը բացառված դիրք է **բ** ձայնավոր հնչյունի համար, հետևաբար նշյալ լեզվափուլերում չէր կարող լինել նաև **բ** հոդը: Լեզվաբանության մեջ վաղուց վիճարկելի չէ, որ հայերենի զարգացման ավելի վաղ փուլերում **բ** ձայնավորը հնչել է բառամիջի բաղաձայնների մեջ⁴, և հայերենը հանդես է գալիս իբրև այնպիսի լեզու, որում անհիշելի ժամանակներից բաղաձայնախմբերն անհետացել են, իսկ թվացյալ բաղաձայնախմբերն առաջացել են ձայնավորի սղումից. այսպես՝ **գրել**-ն առաջացել է ***գիրել**-ից, հմմտ. **գիր**⁵: Ըստ փաստերի՝ հայերենում **բ** ձայնավորն առաջացել է ուժեղ շեշտի ազդեցությամբ՝ պահլ. **nisan**, **Tirdat** բառերը հայերենում տվել են **նշան**, **Տրդատ**: Կարծում ենք՝ բառամիջի առաջին վանկերում ձայնավորների այս թուլացումից առաջացած **ը**-ն համաբանությամբ է տարածում գտել բառամիջի մյուս բաղաձայնական կուտակումներում, այդ թվում՝ բառավերջյան **ը**-ի և նրան նախորդած բաղաձայնների միջև: Հետևաբար **բ** հոդը բաղաձայնական կուտակումներում համաբանությամբ ի հայտ եկող զադոնավանկի **բ**-ից է ծագել: Ըստ մեզ՝ բառավերջի **բ**-ի առաջացումը հաջորդել է բառասկզբի վանկերում ուժեղ շեշտի չեզոքացումից առաջացած **բ**-ին:

³ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն//Էմինյան ազգագրական ժողովածու, Ը հատոր, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 21:

⁴ Տե՛ս Մ. Գյուլբուրադյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 45-48, 147-154, Հ. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 454:

⁵ Տե՛ս Ա. Մելե, Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ, Ժնև, 1988, էջ 37:

Ե՛վ ձայնավորահանգ, և՛ բաղաձայնահանգ բառերի համար բառերի որոշյալությունը, ինչպես հայտնի է, արտահայտվել է **և** հոդով: Հայերենի զարգացման ուշ շրջանում **ը** հոդի ծագումը պայմանավորված է բաղաձայն հնչյուններով վերջացող բառերի **և** որոշիչ հոդի անկմամբ, որի գործառնությունը սկսում է կատարել **և** հոդի և նրան նախորդած բաղաձայնի միջև հնչած, բայց երբեք ձևաբանորեն չնշույթավորված գաղտնավանկի **ը** ձայնավորը⁶: Հ. Աճառյանի մեկնաբանմամբ՝ «Հայերենում **-ըն** հանգող բառերը անշեշտ հնչման պատճառով կորցնում են իրենց վերջին **և** ձայնը՝ **ձուկն>ձուկը, եօթն>եօթը>յօթ**, որոնց համեմատությամբ էլ բաղաձայնահանգ բառերն իրենց ծայրի որոշիչ **և** հոդը դարձնում են **ը**»⁷: **Ն>ը** հոդային անցումը, ինչպես Ա. Այտրնյանն է բնութագրել, ի սկզբանե «...թե երբեմն այլ աննշանակ յաւելուած մ'եղած է»⁸, որը աստիճանաբար մեծ տարածում է ստանում համաբանության օրենքով, և բարբառային ծագման **ը** հոդը ձևային հակադրության մեջ է մտնում **և** հոդի հետ: Հիմնավորված իրողություն է **տունըն, բանըն, թագաւորըն, ծառըն, ազգըն** և նման հնչյունակազմ ունեցող բառերում բառավերջի երկու բաղաձայնների միջև գաղտնավանկ կազմող, ոչ շեշտակիր **ը** հնչյունը⁹, որը իրեն նախորդող բաղաձայն ունենալու պատճառով բաղաձայնահանգ բառերի հետ արտասանվում էր **ըն**, վերածվել է լիարժեք ձայնավորի և **և**-ի անկումից հետո ստանձնել որոշիչ հոդի պաշտոնը. «...մաղթեն գրագաւորըն տալ պարգեւս նմա զինչ եւ խնդրեսցէ», «Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռըն տաճարին հասանել», «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւալըն գեղեցիկ եւ հանեալ զօսկէտղ շիկափոկ պարանըն»¹⁰ և այլն: Ա. Այտրնյանը նույնպես ակնարկում է **ը**-ի գրաբարում հնչած լինելու մասին. «Բառի վերջն անշեշտ **ը** կը գտնվի միայն արդի լեզուին մէջ՝ փոխանակ գրաբարյան **ըն** վանկին. **մարդը, եօթը, ինքը**»¹¹: Նույն սկզբունքով բառավերջից դուրս է մղվել ռնգային **ն**-ն գրաբարյան մի շարք բառերում՝ **եզն, մուկն, գառն, ոտն**, և **-ումն** ածանցի **և** հնչյունը՝ **շարժումն, ուսումն, դեգերումն**, որոնք նույնպես արտասանվել են բաղաձայնահանգ բառերի վրա դրված **և** հոդի նման, ուր երկու բաղաձայնների միջև հնչել է **ը** կիսաձայնը: Եթե Մ. Խորենացուց բերված օրինակներում վերականգնվում է **ը**-ի հնչումը երկու բաղաձայնների միջև, ապա **և** հոդից առաջ թույլ **ը** հնչելու փաստերը միջնադարյան լեզվական հուշարձաններում վկայվում են՝ ստանալով գրային հաճախադեպ արտահայտությո-

⁶ Տե՛ս **Ս. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, էջ 393: **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., 1957, էջ 987:

⁷ **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 987:

⁸ **Ա. Այտրնյան**, նշվ. աշխ., էջ 185:

⁹ Տե՛ս **Էդ. Աղայան**, Գրաբարի քերականություն, Հնչյունաբանություն, հ. 1, Եր., 1964, էջ 85-86:

¹⁰ **Մ. Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, էջ 168, 179:

¹¹ **Ա. Այտրնյան**, նշվ. աշխ., էջ 340:

յուն: Ֆրիկի, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու տաղերում և այլոց գործերում առկա փաստերը դրա վառ ապացույցն են՝ «Արդու-նքն ի նչ վնաս գործեց, զինչ պատարագըն Արելի...», Երկնաւորքըն չհաւանին, զինչ ազատեաց տէրքն զԱդամ...»¹², «Ուրախացան ազգրք մարդկան», «Ձեռքը կակամքք պարգեցան» (Ն. Շնորհալի)¹³, «Վասըն նախնեաց բանս որ պատմի, բարառնաբար ընդ մեզ խօսի, Արե՛կ, զիմ ճամփէկըն օրհնէ, Զիմ ամէն տէրտըս նա զիտէ, Իւր տարտէրքն զիս կու լափէ»¹⁴, «Հոգի չունին տեսող զմարմինքըն են զարդարել» (ԿԵՏ, 201, Տաղեր)¹⁵ և այլն: Նման փաստերը թույլ են տալիս ենթադրելու որոշյալ **ք** հոդի ծագման ժամանակը: Հնչյունական մակարդակով այն՝ որպէս հոդ չգիտակցվող միավոր, եղել է հայերենի զարգացման ավելի վաղ շրջաններում ու միայն վաղ և ուշ աշխարհաբարյան տեքստերում է ստացել գրային արտահայտություն, և **ն**-ի անկումը հանգեցրել է գաղտնավանկային **ք**-ի վերաարժեքավորմանը իբրև հոդի¹⁶:

20-21-րդ դարերի լեզվաբանական ուսումնասիրություններում (Գ. Սևակ, Գ. Զահուկյան, Հ. Պետրոսյան, Մ. Ասատրյան, Ա. Մարգարյան, Յու. Ավետիսյան) որաշյալ **ք** հոդը ներկայացվում է իր կատարած իմաստային գործառնությունով. բառին տալիս է երրորդ դեմքին պատկանելու կամ մոտ լինելու իմաստ, արտահայտում է բովանդակության պլանի անորոշություն-որոշյալություն հակադրությունը՝ **ն** հոդի հետ հանդես գալով որպէս դիրքային տարբերակ, ուղղակիորեն կապված է բառիմաստի որոշակիացնող հատկանիշի՝ հայտնիության քերականական իմաստի հետ՝ քերականորեն որոշյալ դարձնելով բառը՝ անկախ բառի հատուկ կամ հասարակ լինելուց¹⁷: **Ը** հոդի համար բնութագրական է նաև, որ այն սահմանափակ բաշխվածություն ունի, շեշտված վանկում երբեք չի հանդիպում: Երբ բառը վերջանում է **ք** հոդով, շեշտը դառնում է վերջընթեր, որով խախտվում է հայերենի շեշտի կայուն տեղը: Սակայն հայերենի որոշ բարբառներում **ք**-ն շեշտ է ստանում, երբ այն միակ ձայնավորն է բառում՝ **մը՛խ, լը՛փ, պը՛լտ, թը՛խկ, շը՛խկ** և այլն:

¹² «Հայկական համաբարբառ», 19, Ֆրիկ, Բանաստեղծություններ, զիրք առաջին, Ա-Կ, Եր., 1986, էջ 1-10:

¹³ Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 640:

¹⁴ Մ. Ղազարյան, Միջին հայերեն, Գիրք Առաջին, Եր., 1960, էջ 208:

¹⁵ Բ. Մկրտչյան, Աշխարհաբարի տարբերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 111:

¹⁶ Տե՛ս Հ. Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Եր., 1960, էջ 215:

¹⁷ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 278, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 210, Հ. Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Եր., 1960, էջ 33, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Եր., 1970, էջ 226-230, Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., 2004, էջ 161-162, Յու. Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն, Եր., 2007, էջ 48:

Ը-ն և ի-ն որոշյալության քերականական կարգի արտահայտման տարբերակային ձևեր են¹⁸ և իմաստային տարբերություն չունեն: Տարբերությունը պայմանավորված է միայն գործածության կամ դիրքային ոլորտով. ձայնավորով վերջացող բառերը ստանում են **ն**, իսկ բաղաձայնով վերջացողները՝ **ը**: Կապակցված խոսքում բաղաձայնահանգ բառերի **ը** հոդը կարող է փոխվել **ն**-ի, եթե հաջորդ բառը սկսվում է ձայնավորով: Այս դեպքում **ն** հնչյունն անցնում է հաջորդ բառին, երկու բառերն արտասանվում են միասին, առանց դադարի, որի հետևվանքով տրամաբանական շեշտն ընկնում է երկրորդ բառի վրա՝ *զինվորն ընկավ*, *Արամն ասաց* և այլն: Բսկ երբ հոդը մնում է **ը**-ն, այս դեպքում հանդիպադրվող երկու ձայնավորների միջև առաջանում է արտասանական դադար, և տրամաբանական շեշտն ընկնում է հոդ ունեցող բառի վրա՝ *Արամը ասաց, գնացքը ուշացավ* և այլն¹⁹:

Հայերենի տարածքային միավորներում և ժամանակակից գրական երկու լեզուներում **ը** հոդի գործածությունը զուգակցվում է **ն** հոդի գործածական բաշխվածությամբ, հիմնականում կիրառվում է **ն**-ի հետ համաչափ: Ը հոդը լայն տարածում ունի հայերենի գրեթե բոլոր, հատկապես արևմտյան խմբակցության բարբառներում ու Ա. Այտընյանի ներկայացրած երրորդ գավառականում, որը հայ գաղթականության լեզուն է Եվրոպայում: Կան բարբառներ, որոնք ունեն միայն **ն** հոդը, և բարբառներ, որոնք ունեն և՛ **ն**-ն, և՛ **ը**-ն: Եղած փաստերը հանգում են հետևյալին՝ Նոր Նախիջևանի, Համշենի, Նոր Ջուղայի, Ագուլիսի, Սուչավայի, Առտիալի, Սվեդիայի, Ջեյթունի, Կարինի, Ղարաբաղի, Արարատյան, Ուրմիայի, Կարճևանի, Պոլսի, Համշենի և մի շարք այլ բարբառներում գործում են **ն** և **ը** հոդերը: Միայն Մարաղայի, Շամախիի, Մեղրիի, Տիգրանակերտի, Վանի, Սշո բարբառներն են, որ այս համաչափությունը չեն ներկայացնում: Մարաղա՝ *ա, ա, ն*, Շամախի՝ *ը* կամ *ի, ն* (*ախի-գի<աղջիկը, ծանի<ձայնը*), Մեղրի՝ *ն, ը, ի*՝ (գինձի՝ <գինձը, հեօլի՝ <ուլը), Տիգրանակերտ՝ *է*՝ (փերանէ<բերանը, շունէ<շունը, սունէ<սյունը): Վերոնշյալ տարբերակները հանդես են գալիս որպես որոշիչ հոդի դիրքային ազատ տարբերակներ: Վանի բարբառում **ն** են ստանում միայն ձայնավորով վերջացող բառերը, իսկ բաղաձայնով վերջացող բառերն անհոդ են. ո՛չ **ը** են ստանում, ո՛չ **ն**: Ըստ Հ. Աճառյանի՝ այս հանգամանքով Վանը նման է գրաբարին²⁰: Մեկ այլ ուսումնասիրության մեջ Հ. Աճառյանը գրում է, որ Վանի բարբառի ներկայացուցիչների արտասանական բազայի բառասկիզբը և բառավերջը բացառում են **ը** հնչյունը²¹: Ի հավելումն Հ. Աճառյանի ասածի՝ կարելի է ենթադրել, որ Վանի բար-

¹⁸ Տե՛ս Ա. Հ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 57:

¹⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 229:

²⁰ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 977:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1953, էջ 143:

բառում բացակայում է անգամ երկու բաղաձայնների միջև հնչող գաղտնավանկի **բ**-ն, որի հետևանքով էլ չի կատարվել **բն>բ** հնչյունական անցումը: Ավելին, Վանի բարբառում տարածված են բառերի անհող կիրառությունները: **Ն** և **բ** հոդերի բացակայության պատճառ Վանի բարբառում կարող է լինել այն, որ որոշյալ առման իմաստն արտահայտվում է այլ միջոցներով, օրինակ՝ շեշտով՝ **մա՛րթ եկավ** (անորոշ), **մարթ եկա՛վ** (որոշյալ) կամ որևէ որոշիչով՝ **իտա մարթ, ինա մարթ** և այլն:

Ինչպես Վանի, այնպես էլ Մշո բարբառում բացակայում է **բ** հոդը: Մշո բարբառում լավագույնս պահպանվել են **ն** հոդի գործառման օրինաչափությունները, և հենց այս բարբառի ընձեռած փաստերով է հիմնավորվում **բ** հոդի գաղտնավանկային ծագումը, քանի որ մինչ օրս Մշո բարբառով հաղորդակցվողները բառավերջի երկու բաղաձայնների միջև հնչեցնում են գաղտնավանկի **բ**-ն: Մշո, ինչպես նաև մի շարք այլ բարբառներում **ն** հոդ են ստանում նաև բաղաձայնով վերջացող բառերը՝ **դաշտըն, տունըն, ձորըն, մուգըն, քարըն, մաղըն, ձեռըն, բախտըն, զօմըն** և այլն: Հոդառության այսօրինակ գործածությունը ցույց է տալիս **բ** հոդի ծագման ակունքները: Բառավերջյան **ն** հոդից առաջ հնչող **բ**-ն, ըստ ամենայնի, լրացուցիչ բաշխման մեջ չի մտել **ն**-ի հետ: Ընդամենը բառավերջում **ն**-ի անկման ընդհանուր օրինաչափության գործընթացում **բ**-ն փոխարինման հիմունքով սկսել է կատարել **ն**-ի գործառույթը՝ ձևաբանորեն արտահայտվելով, ապա՝ համակարգայնանալով:

Ը հոդի այսպիսի գործածությունները ցույց են տալիս, որ **բ**-ն՝ որպես հոդ, առաջացել է **ն** որոշիչ հոդի հետ ունեցած դիրքային առնչություններից, այլ ոչ թե ծագել է **ն** հոդից, ինչպես ներկայացրել է Ա. Խաչատրյանն իր հնչութաբանական ուսումնասիրություններում²². սկզբում որպես հավելադիր ձայնավոր է եղել երկու բաղաձայն հնչյունների կուտակումը և արտասանական դադարը վերացնելիս, ապա **բ**-ն ստանձնել է **ն**-ի գործառույթը և գործածվել ինքնուրույնաբար²³: Վերջնականորեն որևէ կերպ մեկնաբանել հնարավոր չէ երկու հանգամանք՝ ա) գաղտնավանկի **բ**-ի ազդեցությամբ է դուրս մղվել **ն**-ն, թե՞ գործել է **ն**-ի անկման պատմական հնչյունափոխության ընդհանուր միտումը: Հակված ենք հետևյալին. եթե **ն**-ով հանգ ունեցող բառերում **ն**-ն ընկել է, այդ նույն օրինաչափությամբ հնարավոր է ընկներ նաև **ն** հոդը: բ) Մինչ **ն**-ի անկումը գաղտնավանկի **բ**-ն, նախորդելով **ն**-ին, լրացուցիչ բաշխման մեջ եղել է **բ** հոդի հետ քերականական իմաստի արտահայտման հարցում, թե՞ **ն**-ի անկումից հետո է դարձել նրա փո-

²² Տե՛ս Ա. Հ. Խաչատրյան, Հայերենի «Ը» ձայնավորի հնչությայնության հարցը, «Պատմաբանասիրական հանդես», հ. 4, 1966, էջ 145:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 145:

փոխակր: Ս. Գյուլբուդադյանը, կարևորելով, որ հայերենում գաղտնավանկը **ձայնավոր**>ը հնչյունափոխությունից ձևավորված իրողություն է, կարծում է, որ բաղաձայնին հաջորդող հայերենի **ը** հոդը անցել է այս ուղին: Վկայակոչելով **արծաթըն, մարդըն, աշակերտքըն, գետըն** և այլ ձևեր՝ Ս. Գյուլբուդադյանը նշում է, որ լեզվակիրները դժվարացել են այդ դիրքում վերջին **ն**-ն արտասանել, և կամաց-կամաց **ն**-ն ընկել է, մնացել է **ը**-ն²⁴: **Ը** հոդի ծագման նախապայման կարող է լինել նաև **ն**-ի դժվար արտասանությամբ պայմանավորված անկումը: **Ը** հոդի ծագման այսպիսի տեսակետ է հնչեցրել նաև Հ. Մուրադյանը: Ըստ նրա՝ բաղաձայնից հետո բառավերջում ավելի դյուրին է ձայնավորի արտասանությունը, քան **ն** ձայնորդի, որի արտաբերությունը բաղաձայնից հետո պահանջում է ավելորդ ճիգ ու ջանք²⁵:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ Մշո բարբառի խոսվածքներում տակավին պահպանվել է **ն**-ից առաջ գաղտնավանկի **ը** ձայնավորը, և Մշո բարբառը այս համակարգում հարազատորեն պահպանել է նախորդ լեզվավիճակների առանձնահատկությունները, իսկ այսօրվա դրությամբ **ը** հոդի եղած գործածություններն ուղղակիորեն պայմանավորված են գրական լեզվի ազդեցությամբ: «Սասունի բարբառը» ուսումնասիրության հեղինակ Վ. Պետոյանը նշում է, որ Սասունում որոշյալության հոդերը երկուսն են՝ **ը** և **ն**. **ը**-ն բաղաձայնով, իսկ **ն**-ն ձայնավորով վերջավորվող բառերի համար՝ *Գատուն կուղ է* («կատուն գող է»), *իզը փախավ* («եզը փախավ»)²⁶: Չնայած այս բնութագրմանը՝ Սասունում բաղաձայնահանգ բառերը ունեն նաև **ը** հնչյունին մոտեցող հոդ՝ *տաշտը գանձըծեր ի* («դաշտը կանաչել է») և այլն: Սասունում գործող այս համակարգը կարող է վկայել **ը** հոդի ձևավորման պատմական ընթացքը: Սասնա, Մշո բարբառներում, Նինոծմինդայի շրջանի որոշ խոսվածքներում **ը** հոդի սահմանափակ գործառման, ընդհանուր օրինաչափություն չլինելու և **ն** հոդի համակարգային լինելու մասին վկայել է նաև Հ. Մուրադյանը²⁷: Նա, չհիշատակելով որևէ տարածքային միավոր, Մշո շերտի որոշ խոսվածքներում նկատել է **ն** հոդի արտասանության թույլ լինելը, նրա և նախորդ բաղաձայնի միջև գաղտնավանկի **ը**-ի բացակայությունը: Հեղինակը գրում է. «Սա թերևս հին հայերենյան վիճակից այն բարբառներին անցնելու միջին օղակն է, որոնց մեջ **ն**-ի անկումից հետո բառավերջում **ը** ձայնավոր չի արտասանվում (ձուկն>ձուկ), հակառակ այն բարբառների, որոնց մեջ **ն**-ի անկումից հետո մնացել է **ը**, որը կարող է բացատրվել բաղաձայն+ն կա-

²⁴ Տե՛ս Ս. Գյուլբուդադյան, նշվ. աշխ., էջ 153:

²⁵ Տե՛ս Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 66:

²⁶ Տե՛ս Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Եր., 1954, էջ 67:

²⁷ Տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 67:

պակցության մեջ գաղտնավանկի գոյությամբ (ձուկըն>ձուկը)»²⁸: Այս տեսակետը համոզիչ չէ, քանի որ Մշո բարբառը, ինչպես նշել ենք, լավագույնս է պահպանել այդ գաղտնավանկը:

Ը հոդ ունի նաև Ղարադաղ-Ղարաբաղ տարածքի բարբառների մեծ մասը: Սակայն այս տարածքներում այն դրսևորում է մի յուրահատկություն: Կան դեպքեր, երբ **ը** հոդը ձուլվել է բառարմատին, իսկ **ն** հոդը նախորդում է բառարմատի մաս կազմող **ը**-ին՝ **ծօկնը, յեզնը, մօկնը, կյաննը** և այլն: Ա. Ղարիբյանն այսօրինակ վկայություններ է բերում նաև Ագուլիսի բարբառից՝ **իզնը>իզնուք, ձմեռնը>ձմեռնըէր**²⁹: Ըստ Ն. Մուրադյանի՝ **ը**-ն բառավերջում հայտնվել է ոչ թե **ն**-ի անկումից հետո, այլ գաղտնավանկի **ը**-ի դրափոխությամբ դեպի բառավերջ՝ **ն**-ի պահպանմամբ³⁰: Ընդ որում, հաջորդ՝ ձայնավորով սկսվող բառից առաջ սրանց վրա ավելանում է **ն** հնչյունը որոշյալության դեպքում, իսկ բաղաձայնով սկսվող բառից առաջ որոշյալ լինելիս նույն **-ըն** կապակցությունը, ինչպես՝ **էս մօկնըն էլ չի լսվ, էս մօկնը լսվ չի** և այլն: Իսկ եթե բառը որոշյալ չէ, բայց նախորդում է ձայնավորով սկսվող բառին, ապա **ը** հնչյունը վերանում է, ինչպես՝ **Աշօտը մին մեծ մօկն ա փռնալ** և այլն:

Ա. Ն. Խաչատրյանը քննադատում է Բ. Ս. Գուլակյանի այն տեսակետը, համաձայն որի **ը**-ն, որպես հոդ, **ն** հոդի դրսևորման մի եղանակ է³¹, ձև, որից բխում է այն, որ **ը** ձայնավորը **ն** բաղաձայնի տարբերակ է³²: Ա. Խաչատրյանը հիմնավորում է, որ **ն**-ն և **ը**-ն միևնույն ձևային (ոչ հնչույթի) տարբերակներ են՝ արտահայտված տարբեր հնչույթներով, որոնց գործածությունը պայմանավորված է հնչյունական ենթատեքստով և մինչև իսկ խոսքի տեմպով: Ա. Ն. Խաչատրյանը գրում է. «Եթե հայերենում որոշիչ հոդն արտահայտվեր ոչ թե մեկ հնչույթով, այլ հնչյունախմբով, ապա չէր ստացվի ձևային և հնչույթի նույնացում»³³: Ակնհայտ է, որ հնչույթի արժեք ունեցող **ը** ձայնավորը որպես քերականական իրողություն արտահայտող միավոր բառավերջի դիրքում վերածվել է ձևային:

Ըստ մեզ՝ խնդրո վերաբերյալ կարևորություն ունի այն, որ **ը** հնչյունի տևողությունը վանկերում տարբեր է³⁴: Որոշիչ հոդի դերում հանդես եկող **ը**-ի տևողությունը, ինչպես ցույց են տվել փորձառական ուսումնասիրությունները, քիչ է տարբերվում մյուս ձայնավորների տևողությունից: Ը-ն ուժեղ դիրքում ունի 155 մվրկ (վայրկյանի հազարերորդական մասը) տևողություն: Բառամիջի դիրքերում **ը**-ի տևո-

²⁸ Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 67:

²⁹ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1949, էջ 183:

³⁰ Տե՛ս Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 66:

³¹ Տե՛ս Բ. Գուլակյան, К вопросу о фонологической системе армянских гласных, «Պատմաբանասիրական հանդես», 1965, հ. 1, էջ 229:

³² Տե՛ս Ա. Ն. Խաչատրյան, Հայերենի «Ը» ձայնավորի հնչույթայնության հարցը, էջ 145:

³³ Նույն տեղում, էջ 145:

³⁴ Տե՛ս Ա. Ն. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, էջ 79:

դությունը շատ կարճ է՝ միջինը 56 մվրկ, իսկ ամենակարճը՝ 30 մվրկ: Հետևաբար, կարծում ենք՝ **ը** հնչյունի տևողությունը նույնպես կարող է դառնալ չափանիշ, որով ամբողջապես կբնութագրվի քերականական գործառույթ կատարող հնչյունի ձևային արժեքը, քանի որ քերականացման հետևանքով **ը**-ի տևողությունը մեծացել է:

Որպես ամփոփում կարևորենք, որ **ը** հոդի գործառումը ձայնաբանական օրինաչափ փոփոխությունների ծնունդ է և ունի գաղտնավանկային ծագում: Գաղտնավանկի **ը**-ն ռնգային **ն** ձայնորդի թուլացման, ապա անկման հետևանքով սկսել է կատարել նրա հոդային գործառույթը, ապա՝ համակարգայնացել: Այդ են վկայում վերոբերյալ ինչպես լեզվաբանական դիտարկումները, այնպես էլ լեզվական փաստերը:

Բանալի բառեր - *հոդ, որոշյալ առում, անորոշ առում, բարբառ, գաղտնավանկ, Վանի բարբառ, Սշո բարբառ, հնչյունաբանություն, ձևաբանություն, ձևույթ*

ГАРИК МКРТЧЯН – К вопросу о происхождении и функционировании артикля *ը* в армянском языке. – В статье показано, что употребление определённого артикля **ը** – результат внутренних закономерностей и естественного развития языка. Об этом также свидетельствует отсутствие этимологических соответствий данной грамматической частицы в родственных языках. Употребление артикля **ը** стало следствием закономерных фонетических изменений. Вследствие выпадения конечного согласного **ն** предшествующий **ը** скрытого слога берёт на себя функции артикля.

Ключевые слова: *артикуль, определенный артикуль, неопределенный артикуль, диалект, скрытый слог, диалект Вана, диалект Муша, фонетика, морфология, морфема*

GARIK MKRTCHYAN – On the Origin and Function of the Armenian Article *ը*. – The article considers the problem of the origin of Armenian definite article **ը**. Observations show that the usage of the definite article **ը** in Armenian is the result of natural laws and inner development of the language. This can also be proved by the absence of etymological equivalents of this grammatical particle in sister languages of Armenian. The usage of article **ը** is the result of regular phonetic changes. In consequence of dropping of the final consonant **ն**, **ը** of the hidden syllable fulfils the function of an article.

Key words: *article, definite article, indefinite article, dialect, hidden syllable, dialect of Van, Mush dialect, phonetis, morphology, morpheme.*

**ԳՈՎԱԶԴԴԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԳՐՈՒԹՅԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԼԻՄԱ ԱՄՐԳՍՅԱՆ

Վերջին տասնամյակներում գովազդը մեծ տեղ է զբաղեցնում հասարակության կյանքում: Այն ոչ միայն դարձել է մամուլի, ռադիոհեռուստատեսության, համացանցի տեղեկատվության պարտադիր բաղադրիչ, այլև ներթափանցել է մեր կյանքի ու կենցաղի ամենատարբեր ոլորտներ՝ ժամանցային վայրեր, գեղեցկության սրահներ, փոխադրամիջոցներ, հիվանդանոցներ, շենքերի ճակատային հատվածներ, կանգառներ, վերելակներ և այլն: Գովազդվում են զանազան ապրանքատեսակներ, կազմակերպություններ, տարատեսակ ծառայություններ և այլն: Գովազդի այսպիսի զարգացումը, իհարկե, համաշխարհային ընդգրկում ունի: Մեր երկրում այն տարածվում ու ամրապնդվում է հենց համաշխարհային գովազդային քաղաքականության սկզբունքների, միտումների և փորձի հետևողական կիրառմամբ:

Գովազդը զանգվածային հաղորդակցման գործիք է: Որպես **հրապարակախոսական ենթառձ**¹ նպատակ ունի տեղեկույթի փոխանցմամբ ներազդելու հանրության վրա: Այն դասակարգվում է տարբեր սկզբունքներով. հնարավոր է առանձնացնել մի քանի խմբեր:

ա) Ըստ **զգայարանների վրա ազդելու** հատկանիշի՝ **1.** տեսողական (ցուցանակ, էլեկտրոնային վահանակ, պաստառ, տպագիր և էլեկտրոնային մամուլ, լուսային գովազդ, վազող տողեր), **2.** լսողական (ռադիոգովազդ, բանավոր գովազդ), **3.** տեսալսողական (հեռուստա- և կինոգովազդ, ցուցադրում), **4.** տեսանելի-շոշափելի (օր.՝ կտոր գնելիս գնորդին առաջարկում են շոշափելով որոշել ապրանքի որակը, կամ՝ տեքստեր՝ կույրերի համար նախատեսված տառային կաղապարներով), **5.** համային կամ հոտառական (օր.՝ որևէ ըմպելիքի կամ ուտելիքի անվճար համտես, նվեր՝ օժանելիքի մեկանգամյա օգտագործման սրվակ):

բ) Ըստ **տարածման տեխնիկական միջոցների**՝ **1.** տպագիր (հայտարարություն կամ նյութ պարբերականներում, բացիկ, այցեքարտ,

¹ Հարցի առնչությամբ կան տարակարծություններ. հետազոտողների մի մասը գովազդը համարում է հրապարակախոսական ոճի ժանր, մյուս մասը՝ բազմառձ ժանրերի միախառնում՝ հիբրիդային ժանր, մեկ այլ խումբ այն դիտարկում է որպես հրապարակախոսական ոճի մի տարատեսակ՝ ենթառձ (տե՛ս **Соловьева Н.**, К вопросу о стиле рекламных текстов (на материале рекламы в сфере туризма), "Вестник пермского университета; Российская и зарубежная филология", 2009, вып. 6, էջ 46-50): Կարծում ենք՝ ընդունելի է գովազդի՝ որպես հրապարակախոսական ենթառձի առանձնացման սկզբունքը:

բուկլետ), **2.** ռադիոգովազդ, **3.** կինո- և հեռուստագովազդ, **4.** համացանցային, **5.** նկարչական-գրաֆիկական (վահանակ, խանութների ցուցանակ, ուղղորդող գրաֆիկական նշան, ամայ):

զ) Ըստ **գործածության տեղի՝** **1.** արտաքին (վահանակ, պաստառ, բացիկ և այլն), **2.** ներքին (գնապիտակ, խանութում ներկայացվող կամ մատուցվող որևէ ապրանքի բանավոր գովազդ, ցուցանմուշ, համտես և այլն):

դ) Ըստ **տարածքային ընդգրկման՝** **1.** տեղային (ընդգրկում է մարդկանց փոքր խումբ, օր.՝ թաղամաս), **2.** մարզային (ընդգրկում է հանրության մի մասը), **3.** հանրային (ընդգրկում է ողջ պետությունը), **4.** միջազգային²:

Գովազդի վերը նշված դրսևորումները **բովանդակությամբ** և **նպատակադրումներով** էապես տարբեր են: Ավանդաբար առանձնացվում են գովազդի մի քանի տեսակներ՝ **կոնկրետ ապրանքանիշի** (բրենդի), **առևտրային** (մանրա- և մեծածախ), **կորպորատիվ** (բանկերի, կազմակերպությունների և այլն), **քաղաքական, կրոնական, սոցիալական, բիզնես-գովազդ** և այլն³:

Գովազդի, ավելի որոշակի՝ դրա տեքստի՝ որպես հրապարակախոսության զարգացող ենթառճի կառուցվածքային-բովանդակային հատկանիշները դարձել են տնտեսագիտության, հասարակագիտության, հոգեբանության, լեզվաբանության և այլ գիտությունների քննության նյութ: Գովազդային նույն տեքստը վերլուծվում է միանգամայն տարբեր հայեցակետերից՝ պայմանավորված տվյալ գիտաճյուղի նպատակադրումով: Օր.՝ տնտեսագիտության մեջ նախ և առաջ կարևորվում է ծախսերի ու եկամտաբերության աստիճանը: Հասարակագիտությունը նույն տեքստի քննությունը կատարում է՝ բացահայտելու դրա ազդեցության առանձնահատկությունները հասարակության տարբեր խմբերի վրա և այլն:

Քսաներոդ դարի կեսերից լեզվաբանական միտքը զգալի տեղ է հատկացնում **գովազդային խոսույթի** ուսումնասիրությանը⁴: Մեզանում թեև մոտ 20 տարի է՝ գովազդի մշակույթը ամրապնդվում է, կատարելագործվում են վերջինիս բոլոր դրսևորումները, սակայն դրանց լեզվական կառուցվածքը, տեքստաբանական հատկանիշներն ըստ

² Տե՛ս http://exsolver.narod.ru/Books/Management/ad_man/c5.html

³ Տե՛ս **Сердобинцева Е.** Структура и язык рекламных текстов. М., 2010, էջ 19-22, **Уэллс У., Бернет Дж., Мориарти С.** Реклама: принципы и практика (пер. с англ.), Санкт-Петербург, 1999, էջ 32-36:

⁴ Տե՛ս **Бове К., Аренс У.** Современная реклама. Творчество в составлении рекламных текстов (перев. с англ.), М., 1995, **Джефкинс Ф.** Реклама (перев. с англ.), М., 2008, **Гампер Е.** Влияние рекламы на ментальный компонент культуры (на примере англоязычных женских журналов), «Человек в информационном пространстве текста: межвузовский сборник научных трудов», Ярославль, 2010, **Сердобинцева Е.** Структура и язык рекламных текстов: учебное пособие, М., 2010 և այլք:

էության չեն հետազոտվում: Համենայն դեպս, չենք գտել առանձին մենագրություններ, հոդվածներ խնդրո առարկայի վերաբերյալ⁵:

Մենք անդրադառնում ենք վերջին երկու տասնամյակներում ՀՀ-ում պատրաստվող **առևտրային** (նաև բրենդի) և **կորպորատիվ** գովազդների տեքստերի հնչական-արտասանական և գրության յուրահատկություններին⁶:

Լեզվաբանության մեջ գովազդը բնորոշվում է որպես խոսքային գործունեության մի տարատեսակ, որը նպատակ ունի կարգավորելու այս կամ այն ծառայության, ապրանքատեսակի պահանջարկն ու առաջարկը, խթանելու առևտուրը, կողմնորոշելու գնորդին, առավելագույնս ներագրելու նրա տրամադրվածության վրա⁷: Այս նպատակադրման են ծառայում ոչ միայն լեզվական միջոցները, այլև ճիշտ ընտրված երաժշտությունը, գունային խաղը, տարբեր անիմացիաները (շարժապատկերները), որոնք, իհարկե, դուրս են մեր քննության շրջանակից:

Գովազդը ունի տարածական և ժամանակային խիստ սահմանափակում: Ներկայումս հեռարձակվող գովազդների միջին տևողությունը մոտ 20-35 վայրկյան է, իսկ ցուցապաստառներում, գովազդային վահանակներում ընդհանրապես շեշտը դրվում է տեսողական բաղադրատարրերի վրա, և տեղեկությո՞ւր հաճախ հաղորդվում է միայն ապրանքանիշի կամ ծառայության անվան՝ լոգոտիպի տեսանելի նշումով, որին երբեմն զուգակցվում է որևէ կարգախոս, այսպես ասած՝ ապրանքատեսակը ներկայացնող «բանալի» բառը, արտահայտությունը, նախադասությունը: Ուստի ենթադրվում է, որ ոչ միայն նվազագույն խոսքային կառույցները պետք է փոխանցեն առավելագույն տեղեկություն, այլև խոսույթի փոքրագույն բաղադրիչն անգամ իր վրա պետք է կրի իմաստային, արտահայտչական որոշակի «բեռ»:

1. Հնչական-արտասանական յուրահատկություններ: Հայտնի փաստ է, որ մարդկային կենսագործունեությունը պայմանավորող գործոններից է լսողական և տեսողական հիշողությունը: Ուստի հնչունական-արտասանական տեսակետից ճիշտ կառուցված տեքստը զգալի չափով նպաստում է տեղեկույթի համեմատաբար արագ ընկալմանն ու

⁵ Բացի **Լ. Բարսեղյանի** «Հեռուստատեսային գովազդի լեզվագործաբանական առանձնահատկությունները անգլերենում (հայերենի և ռուսերենի զուգորդությամբ)» (Եր., 2010), **Զ. Գրիգորյանի** «Գրքի գովազդի լեզվագործաբանական առանձնահատկությունները ժամանակակից անգլերենում» (Եր., 2013) և **Վ. Մխիթարյանի** «Գովազդային տեքստի լեզվի և ոճի ուսուցման հիմնախնդիրը (անգլերեն նյութի հիման վրա)» (Եր., 2013) ատենախոսություններից, որոնք առնչություն չունեն հայկական գովազդային խոսույթի յուրահատկությունների հետ:

⁶ Այս կամ այն գովազդի տեքստին անդրադառնալիս կնշենք միայն գովազդի առարկայի անվանումը, իսկ խոսույթի քննարկված իրողությունների, գովազդային տեքստի հնչունական կառուցվածքի յուրահատկությունների և ինչ-ինչ նրբությունների վերհանումը, կարծում ենք, ինչ-որ չափով օգտակար կլինի ոլորտի ներկայացուցիչների և պատասխանատուների համար:

⁷ Տե՛ս **Матвеева Т.** Учебный словарь: русский язык, культура речи, стилистика, риторика, М., 2003:

մտապահմանը: Այս առումով հաղորդվող գովազդի (և խոսքի ցանկացած դրսևորման) հաջողության հիմնական նախապայմաններից է խոսքի ներդաշնակ հնչումը: «Խոսքի հնչական կողմին ներկայացվող առաջին պահանջը **բարեհնչությունն** է: Կոնկրետ բովանդակություն արտահայտելուց բացի, խոսքը պետք է լինի բարեհունչ, ծառայի ոչ միայն հաղորդակցական, այլև գեղագիտական նպատակների: ...Դրան նպաստում են կայուն վերջնավանկ շեշտադրությունը, մեղեդային առոգանությունը, հնչերանգի ճկունությունը, ձայնորդ հնչունների առատությունն ու գործածության մեծ հաճախականությունը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ...»⁸: Որքան էլ հնչունների գեղագիտական ընկալումը սուբյեկտիվ բնույթ ունի, այնուամենայնիվ կան հնչունական ինչ-ինչ զուգակցումներ, զուգորդումներ, որոնք ընդհանուր առմամբ գրեթե նույն տպավորությունն են թողնում այդ լեզվով խոսող հանրության վրա: Օր.՝ հայտնի է, որ խոսքաշարում շ կամ *u* հնչունի կուտակումը ստեղծում է ինչ-որ շշուկի, քնքշության զգացողություն («Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին, հաշիշով օծուն...» (Մ. Մեծարենց), «Աշնան մշուշում շշուկ ու ջրջուն...» (Վ. Տերյան)), կամ՝ *բ, փ, գ, վ* բաղաձայնների կրկնությունները արթնացնում են առավել խրոխտ տրամադրություն («*Խփում են, քոփում են, քոփում են* ձիերը, *Խփում են* ձիերը, *խփում են* պայտերը...» (Ե. Չարենց)): Գովազդային տեքստում սրանց դերը նույնպես կարևորվում է: Իհարկե, դրանցում նույն կամ նման հնչունների կուտակումը նպատակ ունի ոչ թե բովանդակային ինչ-ինչ հարցեր լուծելու, այլ հիմնականում խոսքի գեղագիտական ներազդման միջոցով ունկնդրի ուշադրությունը գրավելու: Օր.՝ «Օնվ*ած* հողից պ*ատկենական*, լեցուն հ*ոգով* ա*վանդակակ*ան, բույր*ով* կրք*ոտ* և նրբ*ահամ*: Կարմիր կիսաքաղցր գինի «Արմենիա»: Ազգային արժեք», կամ՝ «Որպեսզի քո երազանքներն իրականանան, մի՛ դադարիր երազել. քո երազանքները մեր ոգեշնչումն են» («Օրիֆլեյն»), ««Ձու-գու»»: Էլի եմ ուգում» (քաղցրահամ ձողիկներ): Պարզ է, որ այս գովազդային տեքստերը կազմվել են առձայնայնի և բաղաձայնայնի կարծես թե հաջող գործածություններով և գրավում են ունկնդրի ուշադրությունը: Սրանց միջոցով թերևս արված է առաջին քայլը, և մեծ է հավանականությունը, որ ունկնդիրը ակամա կանդրադառնա նաև գովազդի բովանդակությանը, կմտապահի գովազդի առարկան, որը, ի վերջո, հենց գովազդատուի գերնպատակն է: Իհարկե, հնչունական հնարավորինս բարեհունչ զուգորդումների համար կարևոր է ճիշտ բառընտրությունը: Հակառակ դեպքում ոչ միայն նույնահաստկանիշ բաղաձայնների (երբեմն նաև ձայնավորների) կուտակումից, այլև անհարկի կրկնվող բառային միավորների գործածությունից թուլանում է խոսքի ընկալումը,

⁸ Ֆ. Խղաթյան, Հնչունական ոճաբանություն, «Լեզվի և ոճի հարցեր», № 6, 1982, էջ 84-85:

ինչ-որ չափով «տուժում է» արտասանությունը, ինչպես՝ «...վարկային գործարքներ՝ **տասներկուսուկես տոկոս տոկոսադրույքի** չափով...» («Անելիք բանկ»), «Ընտանեկան լոտոն» շարունակում է իր **ջախջախիչ հաղթարշավը...**»։ Նախ՝ գովազդային տեքստի արագ տեմպում դժվար են արտասանվում ընդգծված բառակապակցությունները։ Բացի այդ՝ առաջին դեպքում խոսքը «ծանրաբեռնվել է» **տոկոս** կամ **տոկոսադրույք** բառերից մեկի ավելորդ գործածությամբ։ Կարծում ենք՝ կարելի էր խուսափել դրանցից մեկի կիրառությունից, և համատեքստը կլիներ ավելի դյուրընկալ (հմտ.՝ վարկային գործարքներ՝ տասներկուսուկես տոկոսով)։

Գովազդային խոսույթի բարեհնչության և ունկնդրի վրա ազդելու գորեղ միջոց է հանգը, որի պատճառաբանված կիրառությունը մեծ վարպետություն, նաև զգուշություն է պահանջում։ Հատկապես հանգավորված են մանուկների համար նախատեսված ապրանքների գովազդային տեքստերը, որոնք հաճախ մատուցվում են երգով։ Սա գովազդի կազմակերպման ամենից արդյունավետ միջոցներից է։ Օր.՝ թեև երկար ժամանակ է՝ հայկական ռադիոհեռուստատեսությամբ չեն հնչում «Դարոհինք» ընկերության քաղցրավենիքի գովազդները, սակայն վերը նշվածի շնորհիվ դրանք թերևս շատերն են դեռ հիշում.

Արևաշող դաշտերի մեջ ոսկե հատիկն է **աճում**,

Մայրիկներին, հայրիկներին ճաշակելու է կանչում...

Կամ՝

Ինձ լսե՛ք, երեխանե՛ր,

Միրելի՛ բարեկամներ,

Ձեզ բերել եմ նոր համեր,

Եգիպտացորենի ձողիկներ...

Զվարթ երաժշտությամբ և գունեղ անիմացիաներով համադրված խոսքը դարձել է ոչ միայն այս գովազդների ընկալման, մտապահման առաջնային գործոն, այլև այդ ապրանքատեսակի իրացման հաջող խթան։ Նույնը կարելի է ասել նաև «Հայ կոլա» գազավորված հյութերի գովազդի մասին.

Ով ըմպում է «Հայ կոլա»-ն,

Երջանիկ է անպայման,

Մրգերի մեծ շարանում,

Գտիր՝ որն էս հավանում,

Ըմպելով ստացի՛ր հաճույք,

Կյանքը կդառնա խնջույք։

Նկատելի է, որ գովազդ իրականացնողները հանգավոր տեքստերը նախընտրում են նաև ակոնոլային խմիչքների, հյութերի գովազդներում։ Օր.՝

Նրա գույնը արևի վառ շողերից ծնված խաղողն է,

Նրա բույրը բարեբեր հայրենի **հողն է**,
Նրա համն ամրոցի պես կայուն է,
Նրա անունը գավաթի պես զրնգուն է (զինի «Բերդաշեն»):

Կամ՝

Տոներն են մոտենում,
Տոներն են մոտենում...
Դու հավատա՝ հրաշքներ լինում են,
Եվ Ամանորին դրանք կատարվում են,
Շտապի՛ր դու արագ,
Պատմի՛ր երազանքդ... («Կոկա կոլա»):

Հանգն ուժեղ գործոն է, բայց միշտ չէ, որ դրա գործածությամբ բովանդակային հարմար մակարդակ է պահպանվում: Այսուհանդերձ, հանդիպում են գովազդային ոչ այնքան հաջող տեքստեր, որոնք, սակայն, նույնպես երկար ժամանակ մնում են հիշողության մեջ, էապես նպաստում գովազդի առարկայի սպառմանը: Օր.՝ 1990-ականների վերջերին (այս շրջանում գովազդային պաստառների, վահանակների մշակույթը մերօրյա զարգացումը չունեի) և՛ ռադիոյով, և՛ հեռուստատեսությամբ հաճախ էր հնչում «Զողիակ» տեխնիկայի խանութի գովազդը, որում, սակայն, որևէ հիշատակում կամ ակնարկ չկար խանութի բնույթի, ուղղվածության մասին: Այն է.

Մի՛ եղեք պասիվ,
Գնացե՛ք մասիվ,
Խանութը միակ,
Անունը՝ Զողիակ:

Իհարկե, նախորդների համեմատությամբ նկատելի է, որ սա բովանդակային առումով զիջում է, պարզունակ է: Մակայն անհերքելի է, որ հիշվել, մտապահվել և ազդեցություն է ունեցել հենց դյուրին հանգավորման, նաև պարզունակության շնորհիվ:


Գովազդային խոսույթի ընկալման միջոց են խոսքի **ռիթմը** և **տեմպը**: Սրանք փոխկապակցված և միմյանց փոխապայմանավորող իրողություններ են, որոնց նշանակությունը խիստ կարևորվում է հատկապես գովազդի բանավոր դրսևորումներում: Պատահական չէ, որ հեռուստառադիոթերում գովազդային հոլովակների ձայնի բարձրությունը գերազանցում է հաղորդման ձայնի միջին բարձրությունը. այս երևույթը որոշ երկրներում կարգավորվում է հենց օրենքով: Եթե ռիթմը կառուցվում է շեշտակիր և անշեշտ վանկերի համաչափ հաջորդականությամբ, ապա տեմպը ձևավորվում է դրանց արագ կամ դանդաղ արտասանությամբ: Ժամանակակից գովազդային խոսույթին առավելապես բնորոշ է արագ տեմպը (ըստ մոտավոր հաշվումների՝ 1 վայրկյանում արտաբերվում է 2 բառ): Նկատել ենք, որ հեռուստա- և ռադիոհաղորդումներն ընդմիջող գովազդային տեքստերի զգալի մասը, հատկա-

պէս առաջին նախադասությունը (գուգորդված նաև բարձր երաժշտությամբ) միանգամից սկսում է չափազանց արագ տեմպով. խոսքը, այսպէս ասած, «ճեղքում է» թողարկումը: Ապա այն փոքր-ինչ դանդաղում է, և այս ընթացքում ներկայացվում է բուն տեղեկությունը գովազդի առարկայի վերաբերյալ, որը համեմատաբար ավելի դյուրին է մտապահվում: Խոսքի մատուցման այսպիսի անցումների հիմքը դառնում է խոսքային ռիթմը: Ռիթմն ու տեմպը առհասարակ ունկնդրի գիտակցության և հոգեբանության, խոսքի ճիշտ ընկալման վրա ներագոյող գործող գործոններ են: Ինչպէս նշում է Ֆ. Խլղաթյանը, «Ռիթմը սուկ զարդարանք չէ, այլ կապված է խոսքի իմաստին, բովանդակությանը և հաճախ դառնում է նրա արտահայտիչ տարրերից մեկը: Ռիթմը կարող է տպավորել շարժումը, իրադրությունը»⁹: Եվ այսպէս, մի կողմից՝ սկզբում խոսքի արագությունը հնարավորություն չի տալիս ստացած տեղեկությունը խորապէս վերլուծելու և դրա բովանդակության մեջ ներթափանցելու (հիշվում է հպանցիկ), մյուս կողմից՝ աննկատ նվազող արագությունը համոզականություն և վստահություն է ներշնչում լսողին: Խոսքային այսպիսի անցումները առավելապէս նախատեսված են հոգեբանական ինչ-ինչ գործընթացների համար: Հոգեբան Յու. Շերկովինը գրում է, որ ոչ կամային ուշադրությունը լինում է պարտադրված: Մարդը առանց ինչ-ինչ խթանների չի կարող հենց այնպէս ուշադիր լինել իր շրջապատի բոլոր երևույթների ու իրադարձությունների նկատմամբ: Ըստ հոգեբանի՝ կան անհատի ուշադրության վրա անմիջականորեն ազդող հոգեբանական գրգռիչներ, որոնցից են, օրինակ, կրկնությունը, հակադրությունը, երևույթի տևականությունը, նաև խոսքի հնչման անսովոր յուրահատկությունը¹⁰: Ի դեպ, այստեղ ուզում ենք հատուկ ընդգծել նաև **շեշտի** եսկան **շարժը**. մեր գովազդային խոսքի շարույթի որոշ հատվածներում հաճախադեպ է դարձել **առաջնահար** շեշտադրությունը: Հնչաշղթայում մասնակի շեղումը հայերենի վերջնահար շեշտադրությունից, ըստ էության, խոսքին հաղորդում է անսովոր ելևէջում, կոտրվում է խոսքաշարի սովորական, միապաղաղ և միօրինակ հնչումը: Դա ակամա գրավում է լսողի ուշադրությունը: Սրան միախառնվում են նաև **տրամաբանական շեշտի** առանձնացող հնչերանգը և խոսքային **դադարները**, որոնք վերը նշված երևույթների հետ կրկնապատկում և ավելի արդյունավետ են դարձնում ձայնի բազմազան ելևէջումների ազդեցությունը ունկնդրի վրա: Ընդ որում, բառերը, չնայած արագ տեմպին, մեջընդմեջ արտաբերվում են փոքր-ինչ վանկատումով: Օր.՝ «Ա մանորյա գեղջեր «Ձի գգագ» խանութ-սրահների՝ ցանցում: Դե կ տեմբերի քասնհինգի՛ց մինչև հո ւնվարի տասներե՛քը ա յցելեք մե՛ր

⁹ Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 100:

¹⁰ См у Шерковин Ю. Психологические проблемы массовых информационных процессов, М., 1973, էջ 47:

վաճառակետերը և ստացե՛ք մինչև քսա՛ն տոկո՛ս զե՛ղչ ցա՛նկացած ապրանքատեսակի՛ համա՛ր»: Կամ՝ «Հա՛յ լո՛տո. սը՛ լացեք Ձե՛ր հաջո- դության՝ նն ընդառա՛ջ», «Տո՛ւտբոլային ա՛կցիա «Բե՛կոն» պրոդուկտի՛ ց: Գնե՛ք «Վիե՛ննական նրբերշիկ», հավաքե՛ք «Բե՛կոն» բա՛ռը և ստացե՛ք հի՛նգ TRE՛K հեծանիվների՛ ց մե՛կը...»: Բերված տեքստերի հնչերանգա- յին մոտավոր պատկերն այսպիսին է.



Հաշվի առնելով լեզվական և արտալեզվական նշված նրբությունները՝ գովազդի տեքստում նախընտրելի պիտի համարել բառերի այնպիսի ընտրությունն ու դասավորությունը, որոնց դեպքում ոչ միայն շեշտված և անշեշտ բաղադրիչները, այլև միավանկ ու բազմավանկ բառերը փոխնիփոխ հաջորդեն իրար և հնարավորինս ապահովեն գովազդային խոսույթի «անսայթաք» և, ամենակարևորը, **ոչ միօրինակ** արտասանությունը (բերված օրինակները հիմնականում համապատասխանում են խոսույթի կառուցման և հնչման նշված ձևաչափին):

Իհարկե, գովազդային տեքստերում շեղումը հայերենի ուղղախոսական նորմից կատարվում է ուշադրություն գրավելու նպատակով և արդարացվում է հենց այդ հիմնավորմամբ: Սակայն թող տպավորություն չստեղծվի, թե մշտապես ուշագրավ և/կամ խրախուսելի է հենց արտասանական շեղումներով գովազդը: Նույնքան արդյունավետ է հայերենի արտասանական նորմերի պահպանումով մատուցվող տեքստը: Անխաթար, այսպես ասած, դասական արտասանությունը նույնպես դրական ազդեցություն է թողնում և գրավում լսողի ուշադրությունը: Այն, իր հերթին խախտելով հաջորդաբար հնչող գովազդային տեքստերի առաջնահար շեշտադրությունը, ձևավորում է որոշակի հակադրություն և ապահովում խոսքի սահուն, ախորժալուր և ներդաշնակ հնչումը: Գրագետ տեքստը, ճիշտ արտասանությունը և ճիշտ ընտրված ձայնը (նաև մեղեդին) դառնում են դյուրընկալ և ուշագրավ գովազդի արդյունավետ միջոցներ: Պետք է նշել, որ հայաստանյան գովազդային ոլորտում խոսույթի այսպիսի դրսևորումները քիչ չեն: Գրական հայերենի արտասանական նորմերի պահպանումով է կառուցված, օրինակ, ալկոհոլային խմիչքներ, սնունդ արտադրող, կենցաղային իրեր ներկայացնող խոշոր ընկերությունների գովազդային տեքստերի մի մասը: Օր.՝ տեքստի բնական արտասանությամբ է ուղեկցվում «ՎՏԲ Հայաստան» բանկի թողարկած քարտի գովազդը: Տեքստը կարդացողը ասես ոչ թե գովազդում է, այլ բացատրական երանգով պատմում է դրա մասին՝ «Շնորհավորում ենք Ձեզ, Դուք «ՎՏԲ Հայաստան» բանկի քարտապան եք: Ձեր քարտն ունի մի շարք առավելություններ: Դրանք են՝ 4 արժույթներ մեկ քարտում, վճարային տերմի-

նախների միջոցով քարտի համալրման հնարավորություն, ՎՏԲ խմբի բանկոմատների էլեկտրոնային քարտեզի հասանելիություն, բանկոմատների միջոցով քարտից քարտ ակնթարթային և շուրջօրյա փոխանցումներ...»: Պայմանավորված նույն հատկանիշներով՝ առանձնացող և ուշագրավ է նաև «Արարատ» կոնյակի գովազդային տեքստը. «Կարող ենք մոռանալ ճանապարհը, բայց ոչ ուղեկցին: Կարող ենք մոռանալ տարեթիվը, բայց ոչ ուրախությունը: Կարող ենք մոռանալ վայրը, բայց ոչ հաղթանակը: Որովհետև հոգով ապրած պահերը մնում են միշտ մեզ հետ: «ArArAt»: Լեզենդը շարունակվում է»: Անշուշտ, նմանատիպ տեքստերը կատարում են իրենց հիմնական գործառույթը և ոչ միայն. հենց գովազդի ոլորտում ձևավորում են որոշակի ճաշակ, ինչոր առումով էլ դառնում են ուղենիշ ոլորտի խոսքային որակների բարելավման համար:

2. Գրության յուրահատկություններ: Ներկայումս գովազդային տեքստի կազմության ամենատարածված միջոցներից է **բաղարկությունը** (կոնտամինացիան), որն ունի բազում դրսևորումներ: Հայերեն գովազդային խոսույթում առավել տարածված են **ուղղագրական** միախառնումները: Դրանք թեև մեծ մասամբ շեղումներ են լեզվական նորմից, սակայն լուրջ հակադրություն չեն ստեղծում, և դրանց զանազան ձևերը տարբեր խոսույթներում կարող են պատճառաբանված իրացումներ ունենալ: Նկատել ենք, որ մեզանում ուղղագրական կոնտամինացիայի ամենատարածված ձևերը հիմնականում երկուսն են, որոնք գերակայում են արտաքին գովազդի տեսակներում: Հայկական ցուցանակներում հաճախադեպ են ապրանքատեսակը անվանող բառի, բառակապակցության տառերից մեկի (կամ մի քանիսի) մյուսների համեմատությամբ **մեծ** կամ **մեծատառով** գրությունը, ինչպես՝ «**ԽԱՇԿԵՐՈՒՅԹԸ ՍԿՍՎԱԾ Է**» («Հավանա» ռեստորան), «**ԿԱՀՈՒՅՔԻ** պատրաստում», «**ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ**. բարի ճան**ԱՊՊԱ**րհ», **ՎիվաՄել**¹¹ (առավել տարածված է լատինատառ գրությունը՝ դարձյալ նույն սկզբունքով՝ **VIVA^{CELL}**), **ԷրԿա Մթայլ** (գովազդային գործակալություն), **Հայ Օպտիկ** (ակնոցի խանութ-սրահ), **ԳուդՎին** (բուքմեյքերական ակումբների ցանց) և այլն: Ընդ որում, ընդգծված տառերը գովազդային այլևայլ ցուցանակներում առանձնանում են նաև հատուկ գունավորմամբ, ունեն գեղագիտական զանազան ձևավորումներ, որոնցով և տարբերվում են ամբողջ ցուցանակի համապատկերում: Պարզ է, որ ուղղագրական նորմից այս կարգի շեղումները իրենց գործաբանական տեսանկյունից շատ նպատակահարմար միջոց են. բանուկ փողոցների ընդգրկուն տարածության մեջ այսպիսի գովազդը ցուցանակի վրա առավելագույնս ընդ-

¹¹ Այս գրությունները ներկայացնելիս առաջնորդվել ենք ոչ միայն գովազդային ցուցանակներով, այլև տվյալ գործընկերությունների, կազմակերպությունների պաշտոնական կայքերով (առկայության դեպքում):

գծվում է, միանգամից դառնում տեսանելի: «Գովազդային տեքստը մեծ մասամբ մանրամասն չի ուսումնասիրվում. նրա վրա մի հայացք են նետում կամ էլ կողքով անցնում են ակնթարթորեն...: Ուստի գովազդը պետք է ազդի վայրկենապես»¹²: Աչքի համար անսովոր գրությունը, ըստ էության, երկրորդական ազդակի դեր է կատարում. այն գրավում է պատահական անցորդի կամ ուղևորի ուշադրությունը, որն իր հերթին հանգեցնում է բովանդակային հետաքրքրության: Եվ մեծ է հավանականությունը, որ այդ նույն անցորդը վերածվի գնորդի (սպառողի): Ընդհանրապես, գովազդն իրականացնողի համար առաջնային խնդիրը նախ և առաջ **ոչ պոտենցիալ սպառողի ոչ կամաձին** ուշադրությունը գրավելն է: Դրանում մեծ նշանակություն ունի «**կոնտրաստի սկզբունքի**» պահպանումը: «Որտեղ կան հակադիր հատկանիշներով օժտված գրգռիչներ, այնտեղ կա նաև չկանխամտածված ուշադրության առաջացման նախադրյալ»¹³: Իսկ հակադրություն առաջացնող լավագույն միջոցներ են, ինչպես նաև հոգեբանական ազդող գրգռիչներ են բարձր ձայնը, պայծառ լույսը, տարածության և ժամանակի մեջ տեքստի կամ պատկերի գրաված տեղի մեծությունը և այլն¹⁴: Ուստի այս և նմանատիպ գրությունները դիտարկելիս հնարավորինս պետք է հաշվի առնվեն արտալեզվական գործոնները և հատկապես **նպատակահարմարությունը**, որոնց համաձայն՝ կոնտամինացիան իր կիրառության մեջ կամ կարդարացվի, կամ ոչ:

Հայաստանյան գովազդի շուկայում գրության միախառնման մյուս՝ առավել գերիշխող ձևը **օտարալեզու լոգոտիպի** լատինատառ համակցումն է հայերեն տեքստին (պարզ է, որ չի էլ թարգմանվում): Այն մեծ մասամբ գովազդի առարկայի անգլերեն (հազվադեպ նաև ռուսերեն) անվանումն է: Օր.՝ «Արի **Orange** քո համարով», «**BAXI**. ջերմություն Ձեր տանը», «**Beeline**. ընտրի՛ր կյանքի պայծառ կողմը», «**SAS**. սուպերմարկետ Ձեր տանը», «**Grand Candy**. մանկության համը», «**VLV ELECTRONICS**. մենք աշխատում ենք Ձեզ համար» և այլն: Ընդ որում, և՛ գովազդատուն, և՛ գովազդն իրականացնողը այս միջոցն են նախընտրում ոչ միայն համաշխարհային հանրաձանոթ ապրանքանիշերը, այլև տեղական արտադրանքը ներկայացնելիս: ՀՀ «Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածում կարդում ենք. «Հայաստանի Հանրապետության տարածքում միայն օտար լեզվով գովազդն արգելվում է: Սույն դրույթը չի տարածվում օտար լեզուներով գրանցված ապրանքային նշանների և մակնիշների վրա»¹⁵: Բնարկե, մեր դեպքում մի կողմից՝ իրապես դժվար է ճշտել, թե ինչ լեզվով են գրանցվել գովազդվող ապրանքատե-

¹² Джефкинс Ф. Реклама (перев. с англ.), М., 2008, с. 12.

¹³ Ա. Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997, էջ 110:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4244&lang=arm

սակներն ու կազմակերպությունները: Մյուս կողմից՝ պետք է նկատել, որ երևույթը իրոք խնդրահարույց է ոչ միայն մեզանում. այն գերիշխում է ոչ անգլախոս շատ երկրներում (Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Ղազախստան և այլն), ինչպես նաև Արևմուտքում: Որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ բրենդների նկատմամբ հակում ունեցողների միջավայրում անգլերեն բառերը (առանց թարգմանության) գովազդային տեքստի, նաև հանրության համար էլիտարության, ժամանակակից երևալու որոշակի նշան են¹⁶: Հոգեբանական այս գործոնն իհարկե կա և մեզանում ունի ակտիվ դերակատարություն, բայց միայն սա բավարար չէ երևույթի տարածվածությունը բացատրելու և ըստ էության գնահատելու համար: Գովազդային խոսույթում անգլերեն բառերի, ընդհանրապես լատինատառ գրության նախընտրությունը թերևս ավելի լուրջ պատճառներ ունի: Նախ՝ չի կարելի անտեսել գովազդային արտադրության համաշխարհային կենտրոնների (Արևմուտքի երկրների) փորձը, այդ ոլորտի զարգացման միտումները, նաև գործունեության օրինական պահանջները: Այսինքն՝ չանտեսենք այն հանգամանքը, որ մեր եթերում հաճախադեպ են գովազդի միջազգային հոլովակները («Pepsi», «Coca Cola», «Raffaello», «iPhon» և այլն), որոնք, համաձայն ներկայացուցչական պայմանագրերի, փոփոխման ենթակա չեն: Ապա՝ ընդհանրապես հասարակական հարաբերությունների և առևտրային գործունեության բազմակողմ շփումների ծավալումը իր հերթին ինչ-որ առումով անխուսափելի է դարձնում նշված իրողությունը: Անշուշտ, անընդունելի է այն, երբ փողոցի մի աննշան անկյունում գտնվող կրպակին կամ, ասենք, հեռավոր մի գյուղի փոքրիկ խանութին փակցված է անգլերեն կամ լատինատառ մի «հնչեղ» անուն, որը մեզանում հաճախադեպ է: Կամ՝ ՀՀ-ում շատ տարածված են «XEROX», «PRINT», «PHOTO», «SCAN» և նման հայտարարություն-գովազդները՝ առանց հայերեն համարժեքների, որոնք, իհարկե, լավ կլինեին՝ կամ փոխարինվեին, կամ լրացվեին հայերեն համարժեքներով: Խոսքը հասարակության կարիքների և սպառման համար առավել լայն ընդգրկման, մեծ պահանջարկ ու նշանակություն ունեցող օբյեկտների գովազդի մասին է: Պատահական չէ, որ աշխարհում հիմնականում անգլերենով (կամ լատինատառ) են, օրինակ, բանկերի, հասարակական սննդի կետերի, հյուրանոցների անվանումները և դրանց գովազդային պաստառների մեծ մասը՝ HSBC, AMERIA, CFC, KFC, PIZZA DI ROMA և այլն: Անգլերենը միջազգային լեզու է, և ենթադրվում է, որ մարդկության գերակշիռ մասը, անկախ իր ազգային պատկանելությունից, ունի անգլերենի (կամ գոնե լատինահիմք որևէ լեզվի) տարրական իմացու-

¹⁶ Ст' у Залялева А. Связность вербального и иконического компонентов в рекламном креолизованном тексте / Языковая система и речевая деятельность: лингвокультурологический и прагматический аспекты, Ростов на Дону, 2007, էջ 187:

թյուն, հետևաբար անգլերեն մեկ-երկու բառ պարունակող ցուցանակով կարող է որոշակիորեն կողմնորոշվել անծանոթ միջավայրում: Մյուս հանգամանքը, կարծում ենք, հետևյալն է. տեղական ընդլայնված արտադրություն ունեցող յուրաքանչյուր ընկերության գերնպատակը ի վերջո միջազգային շուկա դուրս գալն է: Այս դեպքում նույնպես էական դեր են կատարում անվանումը, գովազդը: Բերենք ընդամենը մեկ օրինակ. եթե «**Գրանդ քենդի**», «**Գրանդ տոբակո**» ընկերությունները ներկայանային «**Հրանտ քաղցրավենիք**», «**Հրանտ ծխախոտ**» հայերեն անվանումներով, ապա արտաքին շուկայում նախ և առաջ որոշակի խոչընդոտ էին ստեղծելու անվան արտասանությունը, անհասկանալիությունը և այլն: Մինչդեռ հայտնի փաստ է, որ ապրանքի իրացումը սկսվում է ճանաչումից, դրա հետ ծանոթանալուց, ասել է թե՛ **անվանումը մտապահելուց**: Իսկ ընկերության անգլերեն անվանումով նշված խնդիրները վերացել են, մանավանդ որ սեփականատիրոջ **Հրանտ** անվան **Grand** անգլերեն տառադարձումը ամբողջությամբ փոխել է բառի նշանակությունը. անգլերենում այն ածական է և ունի **մեծ** իմաստը:

Կարծում ենք՝ կա մի հանգամանք ևս՝ համացանցում ներկայանալու խնդիրը: Հատկապես վերջին 1-2 տասնամյակում մանր ու միջին ձեռնարկությունները, անհատ ձեռներեցները փոքր գործունեություն ծավալելու դեպքում անգամ նախընտրում են ունենալ իրենց առանձին կայքէջը, որը ստեղծվում, ամրագրվում է բացառապես լատինատառ գրությամբ: Այս դեպքում նույնպես ավելի դյուրին է դառնում ապրանքատեսակի անգլերեն անվան կիրառությունը՝ որպես կայքի հասցե, այսինքն՝ վերանում է հայերեն անվանումը տառադարձելու դժվարությունը: Ուստի և որքան էլ յուրաքանչյուր պետություն իր օրենսդրությամբ ջանում է կարգավորել խնդիրը՝ պահանջելով պահպանել գրական լեզվի անաղարտությունը, այնուամենայնիվ այս դեպքում գովազդային խոսույթը կառուցվում է փոքր-ինչ այլ սկզբունքներով: Խնդիրը դարերի պատմություն ունի և ստեպ-ստեպ քննարկումների, բանավեճերի առիթ է տալիս, որոնք, ցավոք, երբեմն հուզական-սիրողական բնույթ ունեն: Մինչդեռ գրական լեզվի նորմի և գովազդային խոսույթի բախումը էականորեն փոխվում է, երբ ըստ ամենայնի են բացահայտվում գովազդի գործառույթները: Դեռևս 1896 թ. ամերիկյան գովազդի նշանավոր դեմքերից Է. Լևիսը ուղղակի բանաձևում է հաջող գովազդի ստեղծման քառաբաղադրիչ մոդելը՝ **AIDA**, որը կարճ ժամանակում տարածվեց ամբողջ աշխարհում: AIDA-ն նշանակում է՝ attention – **ուշադրություն**, interest – **հետաքրքրություն**, desire – **ցանկություն**, action – **գործողություն**¹⁷: Եվ համաձայն այս մոդելի՝ գովազդն իրականացնողները հաճախ դիմում են այլընտրանքային ինչ-ինչ մի-

¹⁷ Տե՛ս **Ромат Е.** Реклама. История, теория, практика, 5-ое изд., Санкт-Петербург, 2002, էջ 197:

ջոցների: Համենայն դեպս, մի բան պարզ է. գովազդային տեքստի որևէ հեղինակ իր առջև երբեք խնդիր չի դնում լեզվական նոր որակներ ձևավորելու կամ հատուկ խեղաթյուրելու լեզուն: Պարզապես խոսքի ներգործման դերը բարձրացնելու նպատակով երբեմն շրջանցում է ընդունված նորմը: Նրա գերնպատակը հնարավորինս **ազդող, հետաքրքրող, համոզող** այնպիսի լեզվամիջոց (այս դեպքում՝ գրության եղանակ, ձև) գտնելն է, որը կապահովի գովազդի առարկայի վաճառքը կամ սպառումը: Արևմուտքում գովազդային գործակալությունների առաջին հիմնադիրներից, ընդհանրապես գովազդի համաշխարհային արտադրության նշանավոր դեմքերից Դ. Օգիլվին, որը հայտնի է «գովազդի հայր», «գովազդի նահապետ», «Ժամանակակից գովազդային արտադրության հրաշագործ» անուններով, գրում է. «Ես անձամբ գովազդային բիզնեսը դիտարկում եմ ոչ թե որպես զվարճանք կամ արվեստ, այլ տեղեկատվության աղբյուր: Գովազդային արտադրանք ստեղծելիս ինձ պետք չէ, որ սպառողը հիանա ստեղծարար (կրեատիվ) մտքով կամ նկատի դրա հղացման արվեստի մաքրությունը: Ինձ պետք է՝ գնորդը այն աստիճան հետաքրքրվի, որ գնա ու ձեռք բերի գովազդվող ապրանքը»¹⁸:

Այսպիսով, նկատում ենք, որ վերջին տասնամյակներում հայերեն գովազդային խոսույթում գրական նորմից հնչական-արտասանական և գրության շեղումները մեծ մասամբ պայմանավորված են գովազդի նպատակադրմամբ, տեսակով, կիրառման ոլորտով և այլ հանգամանքներով: Եվ հաշվի առնելով գովազդային լեզվաքաղաքականության խնդիրները, նպատակները, որոնք համաշխարհայնացման այս փուլում համընդգրկուն բնույթ ունեն, կարծում ենք, ոլորտում, իրոք, արտասանության և գրության նորմի խախտումների նկատմամբ որոշակի վերապահությունն ուղղակի անհրաժեշտություն է դառնում:

Բանալի բառեր – *գովազդային խոսույթ, բարեհնչություն, շեշտ, հնչյունական գորդրումներ, հանգ, ռիթմ, հոգեբանական գործոններ, բաղարկություն, հակադրության սկզբունք, լեզվական նորմ*

ЛИАНА САРКИСЯН – Фонетические и орфографические особенности рекламного дискурса в современном армянском языке. — В статье рассматриваются некоторые фонетические особенности современного рекламного дискурса. Акцент сделан на такие фонетические элементы, которые привлекают внимание зрителя, слушателя, читателя и способствуют ожидаемому восприятию рекламного текста. На примере ряда рекламных текстов анализируется благозвучность речи, правильные сочетания звуков, ударения, ритм и т. д., подчёркивается их важность.

Армянским рекламным текстам особенно присущи два вида контаминации, а также латиница, посредством которой воспроизводятся названия товаров, банков,

¹⁸ **Огилви Д.** Огилви о рекламе, М., 2011, с. 2 (էլեկտրոնային տարբերակը տե՛ս www.litres.ru/pages/biblio_book/?art=2858265).

магазинов. В статье приведены лингвистические и экстралингвистические причины этого, раскрыты цели и продуктивность обращения к нестандартным формам рекламы, указаны отклонения от норм литературного языка.

Ключевые слова: *рекламный дискурс, благозвучие, ударение, стечение звуков, рифма, ритм, психологические факторы, контаминация, принцип контраста, норма языка*

LIANA SARGSYAN – *Phonetic and Spelling Peculiarities of Advertising Discourse in Modern Armenian.* – This article discusses some phonetic peculiarities of modern advertising discourse. Particular attention is paid to such phonetic manifestations that affect the viewer, listener, reader, attract their attention and contribute to the perception and memorization of the text being advertised. On the example of various texts of RA advertising discourse, different manifestations of euphony of speech, the right combinations of sounds, rhyme, rhythm, and stress are scrutinized, and their importance is emphasized.

There is another peculiarity in the Armenian advertising texts: there are two types of contamination that are typical of modern Armenian advertising text, as well as the names of different products, banks, shops, etc. that are written in Latin letters. The article provides detailed explanations of linguistic and extralinguistic reasons for such manifestations, the objectives, the productivity of turning to non-standard forms, deviation from the norms of the literary language are presented.

Key words: *advertising discourse, euphony, stress, concurrence of sounds, rhyme, rhythm, psychological factors, contamination, principle of contrast, language norm*

**ԱՆՂԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
ԲԱՐԴ ԲԱՌԻ ՈՒ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Անգլերենի բառակազմական հարցերի քննությամբ զբաղվելիս բազմաթիվ լեզվաբանների առջև ծառայել է բարդ բառի և բառակապակցության տարբերակման խնդիրը, քանի որ անգլերենում հաճախ դժվար է տարբերել բարդ բառը բառակապակցությունից, հատկապես վերլուծական բաղադրությունների դեպքում, որոնց բաղադրիչները գրվում են անջատ կամ գծիկով:

Տարբեր լեզվաբաններ բարդությունները բառակապակցություններից տարբերակելիս առաջնորդվում են բարդություններին բնորոշ մի շարք հատկանիշներով՝ հնչյունական, կառուցվածքային, իմաստային և այլն:

Նրանք հիմնականում նկատի ունեն հետևյալ չափանիշները.

1. Բառի մեջ շեշտի դիրքը. բանն այն է, որ անգլերենի բարդությունների ճնշող մասում շեշտն ընկնում է բարդ բառի առաջին՝ ձախակողմյան բաղադրիչի վրա, հատկապես երբ բարդ բառը կազմված է երկու գոյական բաղադրիչներից, ինչպես՝ *'doorway, 'earring, 'football, 'headache, 'newspaper, 'notebook, 'postbox, 'railway, 'raincoat, 'operating system, 'working paper* և այլն: Ըստ Լ. Բլումֆիլդի՝ եթե բառակապակցության մեջ սովորաբար ուժեղ շեշտ ունեցող բառն արտասանվում է թույլ կամ շատ թույլ շեշտով, ապա մենք գործ ունենք ոչ թե բառակապակցության անդամի, այլ բարդ բառի բաղադրիչի հետ, այսինքն՝ *ice-cream* ['ajs- ,krijm] -ը՝ (առաջին բաղադրիչի վրա հիմնական շեշտով) բարդ բառ է, իսկ *ice-cream* ['ajs- 'krijm]-ը (երկու հավասարապես շեշտված բաղադրիչներով)՝ բառակապակցություն, թեև որևէ իմաստային տարբերություն չկա սրանց միջև¹:

Ձախակողմյան շեշտի կանոնը, սակայն, հիմնականում գործում է գոյական բարդությունների դեպքում (այն էլ ոչ միշտ), այնինչ նույնը չի կարելի ասել ածական բարդությունների մասին, որոնց մեջ երկու բաղադրիչներն էլ շեշտված են, ինչպես՝ *,easy- 'going, ,ill- 'tempered, ,hot- 'tempered* և այլն:

Երբեմն էլ նույն բառը կարող է ունենալ տարբեր արտասանութ-

¹ Տե՛ս Լ. Bloomfield, *Language*, Chicago and London, 1984, էջ 228:

յուն, և կախված շեշտի դիրքից՝ փոխվում է նաև բառի իմաստը, ինչպես՝ 'bookcase «գրապահարան» և 'book 'case «գրքի թղթե կազմ»²:

Կան լեզվաբաններ, որոնք հակված են կարծելու, որ անգլերենի բարդ բառերում կարող է լինել երեք տիպի շեշտ³.

• **Միավորիչ կամ հիմնական շեշտ**, որն ընկնում է բարդ բառի առաջին բաղադրիչի վրա. 'honey**moon**, 'door**way**:

• **Կրկնակի շեշտ**. այս դեպքում բառի հիմնական շեշտն ընկնում է առաջին բաղադրիչի վրա, իսկ երկրորդական շեշտը՝ երկրորդ բաղադրիչի վրա, ինչպես՝ 'blood-, vessel, 'mad-, doctor:

• **Հավասար շեշտ**, երբ բարդ բառի երկու բաղադրիչներն էլ հավասարապես շեշտված դիրքում են, ինչպես՝ 'arm- 'chair, 'icy- 'cold, 'grass- 'green և այլն:

Թեև բարդությունը բառակապակցությունից տարբերակելիս հաճախ է օգնում բառի մեջ շեշտի գրաված դիրքը, սակայն դա չի կարող համարվել լիարժեք հիմնավորում՝ պնդելու, որ այս կամ այն բառը բարդ բառ է, իսկ մյուսը՝ բառակապակցություն: Կան բազմաթիվ բարդ բառեր, որոնցում շեշտն ընկնում է բառի երկրորդ բաղադրիչի վրա, և դա բնավ չի նշանակում, որ դրանք դադարում են բարդ բառեր լինելուց: Այսպիսիք են, օրինակ, մի շարք համադասական բարդություններ (coordinative /additive/ copulative compounds)⁴, ինչպես՝ geologist-astro 'nomer, scholar-a 'ctivist, actor-ma 'nager և այլն: Փաստորեն այս տիպի բարդությունները հանդես են գալիս որպես բարդ բառերում առաջնային շեշտի վերաբերյալ վերոնշյալ կանոնի համակարգային բացառություններ:

Այս ամենից բացի՝ բարդ բառերի արտասանությունը կարող է տարբեր լինել՝ կախված նաև որոշ բարբառային առանձնահատկություններից, օրինակ, red light բարդության մեջ սովորաբար շեշտվում է երկրորդ բաղադրիչը, սակայն որոշ տարածաշրջաններում այն արտասանվում է այնպես, որ շեշտված դիրքում հայտնվում է առաջին բաղադրիչը, ինչպես՝ re 'd light⁵:

Ըստ Լ. Բաուերի՝ ոչ միայն տարբեր մարդիկ (խոսողներ) են տարբեր շեշտադրությամբ արտասանում այս կամ այն բարդ բառը, այլև միևնույն մարդը կարող է տարբեր իրավիճակներում տարբեր կերպ արտասանել միևնույն բառը⁶:

Այս ամենով հանդերձ, իհարկե, հնարավոր չէ չնկատել, որ բազ-

² Տե՛ս Ի. Արնոլդ, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 113:

³ Տե՛ս R. Ginzburg, S. Khidekel, G. Knyazeva, A. Sankin, A Course In Modern English Lexicology, М., 1979, էջ 141-142:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 146:

⁵ Տե՛ս M. Ryder, Ordered Chaos. The Interpretation of English Noun-Noun Compounds, Vol. 123, Berkeley, Los Angeles, London, 1994, էջ 13:

⁶ Տե՛ս L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 103:

մաթիվ բարդությունների, հատկապես **գոյական + գոյական** կառույցների մեջ շեշտն ընկնում է բառի առաջին բաղադրիչի վրա, բայց, ինչպես տեսնում ենք, դա բացարձակապես ընդունելի նախապայման չէ և չի կարող որոշիչ լինել բարդ բառի ու բառակապակցության սահմանագատման հարցում:

Անգլերենի բարդությունները բառակապակցություններից տարբերակելիս չպետք է հենվել նաև դրանց գրության ձևի վրա, քանի որ միևնույն բարդությունն անգլերենում կարող է տարբեր տեղերում գրվել տարբեր ուղղագրությամբ՝ *գծիկով*, միասին և անջատ, ինչպես՝ *easy-going /easy going/ easygoing, headmaster/ head-master, air-conditioning /air conditioning, loudmouth/ loud-mouth, word-formation/ word formation* և այլն: Բարդ բառերի գրությունը միատեսակ չէ տարբեր բառարաններում, հաճախ նույնիսկ միևնույն հեղինակը նույն բառը մի դեպքում գրում է միասին, մի ուրիշ դեպքում՝ անջատ կամ գծիկով:

2. Բարդ բառի ու բառակապակցության տարբերակման հաջորդ չափանիշն այն է, որ բարդ բառի իմաստը սովորաբար դրա բաղադրիչների իմաստային միաձուլումն է, համակցումը (*semantic cohesion*)՝ ի տարբերություն բառակապակցության, որը կարող է արտահայտել երկու կամ ավելի առանձին իմաստներ: Օրինակ, *tallboy* բառի ընդհանուր իմաստն է «բարձր կոմոդ (արկղերով պահարան)», մինչդեռ եթե դիտարկենք *tall boy* բառն իբրև բառակապակցություն, ապա այն կունենա երկու տարբեր ինքնուրույն իմաստներ՝ «1. երիտասարդ տղա, 2. բարձրահասակ»⁷: Մյուս կողմից, սակայն, առաջին դեպքում բարդ բառը որևէ առնչություն չունի մարդու հետ. այն կահույքի տեսակի անվանում է, մինչդեռ երկրորդ դեպքում բառակապակցությունը վերաբերում է մարդկանց: Սրանից ելնելով՝ պետք է եզրակացնենք, որ եթե բարդ բառն արտահայտում է ոչ ուղիղ՝ փոխաբերական իմաստ, ապա կարող է համարվել բարդ բառ, իսկ եթե արտահայտում է ուղիղ իմաստ, ապա բառակապակցություն է: Սակայն եթե այս տեսակետը ելակետային համարենք, ապա անգլերենի բոլոր դարձվածային կապակցությունները պիտի համարվեն բարդ բառեր, քանի որ դրանց բաղադրիչների իմաստից չի բխում իրենց արտահայտած ընդհանուր իմաստը: Հետևաբար, իմաստային այս չափանիշը նույնպես չի կարող համարվել լիարժեք ընդունելի բառի ու բառակապակցության տարբերակման հարցում:

3. Բարդ բառը բառակապակցությունից տարբերակելու մեկ այլ չափանիշ է առաջ քաշում Ա. Սմիրնիցկին. նրա կարծիքով դա բարդ բառի ունեցած ձևակառուցվածքային ամբողջականությունն է (*formal*

⁷ См. у Г. Антрушина, О. Афанасьева, Н. Морозова, Лексикология английского языка, М., 2004, т. 2, с. 112:

integrity-цельнооформленность)⁸: Իր դրույթն ապացուցելու համար նա *shipwreck* «նավաբեկություն» բարդ բառը հակադրում է *(the) wreck of a ship* «նավի խորտակում» բառակապակցությանը և նշում, որ չնայած դրանք երկուսն էլ նույն իմաստն ունեն և նույն բառային կազմը, վերաբերում են օբյեկտիվ իրականության միևնույն երևույթին, սակայն միաժամանակ էապես տարբերվում են միմյանցից: *Shipwreck* բառի հոգնակին, օրինակ, կազմվում է ամբողջական բառի վերջում *s* մասնիկի ավելացմամբ, և ստացվում է *shipwrecks* բառը, իսկ *the wreck of a ship* բառակապակցության դեպքում *s* մասնիկն ավելանում է բառակապակցության յուրաքանչյուր բաղադրիչին առանձին, ինչպես *(the) wreck-s of (the) ship-s*, կամ երկրորդ բաղադրիչին՝ *(the) wreck of (the) ship-s*, որը և վկայում է *shipwreck* բառի ձևակառուցվածքային ամբողջականության մասին՝ ի տարբերություն *the wreck of a ship* բառակապակցության: Այլ կերպ ասած՝ մինչդեռ բարդ բառերը հանդես են գալիս գործառական ամբողջականությամբ, բառակապակցության բաղադրիչները, ընդհակառակը, առանձին-առանձին են ենթարկվում քերականական փոփոխությունների: Նույնը երևում է նաև *shipwreck* գոյականին համապատասխան *to shipwreck* բայի դեպքում. քերականական փոփոխության է ենթարկվում բառը որպես մեկ ամբողջություն՝ *shipwreck-ed, shipwreck-ing* և այլն:

4. Լ. Բլումֆիլդը բարդ բառը բառակապակցությունից տարբերակող հատկանիշ է համարում նաև դրա անբաժանելիությունը, անընդհատելիությունը՝ անընդմիջարկելի լինելը (indivisibility)⁹: Որպես օրինակ նա հակադրում է *blackbird* «սև կեռնեխ (թռչնի տեսակ)» բարդ բառը *black bird* «սև թռչուն» բառակապակցությանը: Առաջին դեպքում մենք բարդ բառի բաղադրիչների միջև մեկ ուրիշ բառ չենք կարող դնել, իսկ երկրորդ՝ բառակապակցության դեպքում այն կարող ենք ընդհատել, ինչպես, օրինակ՝ *black and white birds* «սև և սպիտակ թռչուններ»: Սրա հետ մեկտեղ, սակայն, հեղինակը նշում է, որ կան նաև այնպիսի բարդ բառեր, որոնք ենթակա են ընդհատման, սակայն այլ հատկանիշներ հաշվի առնելով, միևնույնն է, դասվում են ոչ թե բառակապակցությունների, այլ բարդ բառերի շարքը:

5. Նույն հեղինակն առաջ է քաշում նաև բարդ բառը բառակապակցությունից տարբերակելու շարահյուսական չափանիշը (syntactic criterion)՝ նույն օրինակի վրա ցույց տալով, որ *black birds* բառակապակցությունում *black* «սև» բառը կարող է ստանալ *very* լրացումը (*very black birds*՝ «շատ սև թռչուններ»), որն անհնար է *blackbird* «սև կեռնեխ (թռչնի տեսակ)» բարդ բառի բաղկացուցիչ մասը կազմող *black* բաղադ-

⁸ Տե՛ս **А. Смирницкий**, Лексикология английского языка, М., 1998, էջ 33:

⁹ Տե՛ս **L. Bloomfield**, նշվ. աշխ., էջ 232:

րիչի դեպքում¹⁰: Այս չափանիշը, սակայն, մյուսների նման չի կարող հաստատապես ընդունելի լինել, քանի որ նույն ձևով *very* լրացումը չեն կարող ստանալ նաև մի շարք բառակապակցությունների առաջին բաղադրիչները:

Այսպիսով, անգլերենի բարդ բառ բառակապակցությունից տարբերակելիս, ինչպես տեսնում ենք, պետք է հենվել ոչ թե մեկ, այլ մի քանի չափանիշների վրա՝ բառի մեջ շեշտի դիրքի, բառի արտահայտած իմաստային ամբողջականության, քերականական ու շարահյուսական, գործառական ամբողջականության վրա: Այսպես, *blackboard* բառի դեպքում շեշտն ընկնում է բառի առաջին բաղադրիչի վրա, բառը հանդես է գալիս միասնական գրությամբ, ունի մեկ ընդհանուր իմաստ՝ «գրատախտակ», նաև հանդես է գալիս գործառական միասնությամբ. քերականական փոփոխությունների է ենթարկվում բառն ամբողջությամբ՝ *blackboard-s* «գրատախտակներ», բառն անընդմիջարկելի է, դրա առաջին բաղադրիչը չի կարող ստանալ լրացում (*very black board*) և այլն: Այս բոլոր հատկանիշները միասնաբար վկայում են *blackboard* բառի բարդ բառ, այլ ոչ թե բառակապակցություն լինելու մասին:

Հայերենում բարդ բառի ու բառակապակցության սահմանները համեմատաբար ավելի հստակ են: Ըստ աբեղյանական բնորոշման՝ «Հայերենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միություն, մեկ բառ մեկ նշանակությամբ: Ամեն տեսակի շարահյուսական կապակցություններից կարող են բարդ բառեր առաջ գալ. բավական է միայն, որ շարահյուսական կապակցությունը որևէ պատճառով այլևս զգալի չի լինում իբրև կենդանի շարահյուսական ձև»¹¹:

Ըստ հեղինակի՝ հաճախ դժվար է լինում որոշել՝ երկու բառի կապակցությունը սովորական շարահյուսական է, թե արդեն բարդ բառ է դարձած: Հետևաբար, հաճախ բարդ բառ չեն համարվում և իբրև մեկ բառ չեն գրվում մի քանի շարահյուսական կապակցություններ, որոնք արդեն մեկ բառի նշանակություն ունեն, որովհետև կան աստիճանավորումներ, մինչև որ երկու բառի շարահյուսական կապակցությունը զարգանա և իբրև մեկ բառ զգացվի: Օրինակ՝ մի ժամանակ աշխարհաբարում գրում էին առանձին «այս օր» (ինչպես այժմ գրում են նման կապակցությունները՝ այս շաբաթ, այս ամիս, այս տարի), իսկ այժմ գրում են միացած՝ «այսօր»¹²:

Ինչ վերաբերում է բառակապակցությանը, տարբեր հեղինակներ

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 232:

¹¹ Մ. Աբեղյան, Երկեր, 2 հատոր, Եր., 1974, էջ 136:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 136:

այն տարբեր կերպ են սահմանում: «Բառակապակցությունն առնվազն երկու բառից կազմված կապակցություն է, որն արտահայտում է բաղադրիչների շարահյուսական հարաբերություն: Ընդ որում բառակապակցությամբ արտահայտվում է մի ամբողջական, թեև անդամազատ հասկացություն»¹³:

Է. Աղայանը սահմանում է բառակապակցությունը հետևյալ կերպ. «Երկու և ավելի բառերի ամեն մի կապակցություն, որի մեջ մեկը գերադաս է, իսկ մյուսը կամ մյուսները ստորադասված են դրան, բառակապակցություն է»¹⁴: Ելնելով բառակապակցությունների բնույթից՝ նա առանձնացնում է դրանց երկու տեսակ՝ **կայուն** և **ազատ** բառակապակցություններ: «Կայուն բառակապակցությունները նրանք են, որոնք մշտապես նույն կազմն ունեն և նույն կառուցվածքը. նրանց անդամները սովորաբար ուրիշ բառերով փոխարինելի չեն: Օրինակ՝ **աշխատանքի բաժանում. – նկատի առնել. – Մեծ Մասիս. – Վերին Չարբախ** և այլն»¹⁵: Հեղինակը սրանք կայուն է համարում, «որովհետև նրանք հենց այդպես, նույն բառերի կապակցությամբ գոյություն ունեն որոշակի իմաստով, և նրանց անդամներից որևէ մեկի փոխարինումը այլ բառով կքայքայի բառակապակցությունն իբրև տվյալ իմաստի արտահայտիչ»¹⁶: Է. Աղայանը կայուն բառակապակցությունների մեջ առանձնացնում է դարձվածային կապակցությունները, ինչպես՝ *առյուծի կաթ, անպոչ գդալ, բաժակի ընկեր, բերանի համ, գայթակղության քար, կրակի կտոր, սատանայի ճուտ, դառնության բաժակ, քարափի գայլ և այլն*: «Դարձվածային են այն կայուն բառակապակցությունները, որոնք իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ, այսինքն՝ նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ և հետագայում, գործածվելով փոխաբերաբար՝ աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ հենց այդ փոխաբերական նշանակությամբ՝ ձեռք բերելով բառին հատուկ անվանողական դեր»¹⁷, - գրում է հեղինակը:

Ի տարբերություն **կայուն** բառակապակցությունների՝ **ազատ** բառակապակցությունները «կազմվում են հաղորդակցման ընթացքում և տվյալ նախադասությունից կամ ասությունից դուրս այլևս գոյություն չունեն»¹⁸: Ազատ բառակապակցությունների օրինակներ են՝ *անկեղծ խոստովանություն, գյուղի դպրոց, տղայի պայուսակը, կանաչ դաշտ, կապույտ երկինք* և այլն: Սրանց կազմի մեջ մտնող անդամները, ի

¹³ Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Եր., 1975, էջ 3:

¹⁴ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 541:

¹⁵ Նույն տեղում, էջ 542:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 237:

¹⁸ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 543:

տարբերություն կայուն բառակապակցությունների, կարող են փոխարինվել նաև այլ բառերով:

Ըստ բառակապակցությունների գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության դրանք լինում են **գոյականական աղմկոտ քննարկում**, *արևի լույս, գարնանային եղանակ, հոր պատգամ, աշակերտի տետր, գայլերի ոհմակ, ածականական՝ անասելի դժվար, ցավին անտարբեր, գործին անգիտակ, խիստ մաքուր, երիցս նզովյալ, ծայրահեղ ամաչկոտ, թվականական՝ ամսի յոթը, ժամը հինգը, Մայիսի մեկը, վերևից հինգերորդը, ներքևից չորրորդը, բայական՝ գիրք ընթերցել, երեկվա բերած, բարիքներ պարզևող, փողոցն անցնելիս, մակբայական՝ ամենից շատ, որքան շուտ, այնքան ուշ, այնպես միամտորեն, զարմանալի դաժանորեն, դերանվանական՝ այս բոլորը, այդ ամենը, այն ամբողջը և այլն:*

Ի տարբերություն բառակապակցությունների՝ բարդ բառերը ներկայացնում են կառուցվածքային ավելի սերտ միասնություն. «Բարդությունները սեղմ ձևի մեջ «գործությամբ» (իմպլիցիտ կերպով) արտացոլում են շարահյուսական հարաբերությունները և համապատասխանաբար՝ խոսքի մասերի հնարավոր զուգորդությունները նախադասության կամ բառակապակցության մեջ: Որքան ակտիվ է տվյալ խոսքի մասը մտնում բառակապակցության մեջ, նույնքան ակտիվ կերպով հանդես է գալիս որպես բարդ բառերի բաղադրիչ, ընդ որում շատ հաճախ պահպանվում է բառակապակցությանը հատուկ շարադասությունը»¹⁹:

Այսպիսով, հայերենում բարդ բառերի բաղադրիչները հանդես են գալիս կա՛մ միասնաբար, կա՛մ անջատ, բարդ բառերն ունեն մեկ ընդհանուր հիմնական շեշտ, գիտակցվում են իբրև բառային մեկ միավոր, իսկ բառակապակցությունը շարահյուսական այնպիսի ուրույն կապակցություն է, որի բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, և որոնց միջև մշտապես կա լրացում-լրացյալի հարաբերություն²⁰: Կայուն բառակապակցությունները նույնպես արտահայտում են մեկ բառային իմաստ, ունեն անվանողական դեր և նախադասության մեջ հանդես են գալիս իբրև նախադասության մեկ անդամ²¹:

Անզլերենում բարդ բառի ու բառակապակցության տարբերակման հիմքում ընկած են մի շարք չափանիշներ, որոնք բոլորը միասնաբար կիրառելու դեպքում միայն կարելի է տարբերել բառը բառակապակցությունից, քանզի առանձին վերցրած դրանցից և ոչ մեկը լիովին վստահելի չափանիշ չի կարող համարվել:

¹⁹ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 150:

²⁰ Տե՛ս Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 110:

²¹ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 236:

Բանալի բառեր – բարդ բառ, բառակապակցություն, չափանիշ, շեշտ, իմաստա-
յին, շարահյուսական, կառուցվածքային, գործարական, ամբողջականություն, հայե-
րեն, անզերեն

**СИРАРПИ КАРАПЕТЯН – О дифференциации сложного слова и слово-
сочетания в английском и армянском языках.** – В статье приводится целый ряд
критериев, лежащих в основе дифференциации сложных слов и словосочетаний в
английском языке (место ударения, семантические, формальные, структурные и
функциональные параметры целостности сложного слова). Однако все вместе эти
критерии могут быть использованы, чтобы обособить то или иное слово от слово-
сочетания, а не друг от друга. В статье проводятся параллели с армянским языком,
где границы сложного слова и словосочетания прочерчены более отчётливо.

Ключевые слова: сложное слово, словосочетание, критерий, ударение, семантиче-
ский, синтаксический, структурные, функциональные, целостность, армянский, англий-
ский

**SIRARPI KARAPETYAN – On the Problem of Differentiation of Compound
Words and Word-Combinations in English and Armenian.** – The article concerns the
problem of differentiating compound words and phrases in English and Armenian. It
states the different criteria according to which many authors differentiate them: the
phonetic criterion (that of the position of stress), the syntactic criterion, the semantic
criterion (that of semantic cohesion), the criterion of formal-structural and functional
integrity, etc. These criteria can serve as sufficient bases to differentiate between
compound words and word-combinations only when taken collectively but not
individually. In the article, parallels are drawn between English and Armenian, in the
latter the borderline between word-combinations and compound words being far clearer.

Key words: compound word, word-combination, criterion, stress, semantic, syntactic,
structural, functional, integrity, Armenian, English

Բանավեճ և քննարկում

ՓՈՒԽԱՌՈՒԹՅՈՒՆ, ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԿՉՈՏԻՉՄ
(տարբերական փորձ)

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ

Հայ լեզվաբանությունը հաճախ է անդրադարձել փոխառություններին ու օտարաբանություններին, սակայն գրեթե չի անդրադարձել սրանց հետ սերտորեն կապված մի այլ երևույթի՝ այսպես կոչված էկզոտիզմներին: Ինչպես գիտենք, փոխառյալ է համարվում այն բառը, քերականական իրողությունը, որը վերցրել ու վերցնում ենք օտար լեզուներից (անմիջական և միջնորդավորված), և որի համարժեքը չունենք: Օտարաբանություն է համարվում այն բառը, որի համարժեքն ունենք մեր լեզվում, սակայն այս կամ այն պատճառով շարունակում ենք գործածել օտար բառը (քերականական օտարաբանությունների մասին այստեղ չենք խոսի, քանի որ մեր նպատակն այլ է): Մակայն դժվար է սովորական փոխառություն համարել, օրինակ, հետևյալ կենդանիների, թռչունների անունները՝ **ագուտի, վոմբատ, տրագուպան**, արևադարձային մրգերից, բույսերից **ռամբուտան, դուրիան, մարուլա, բանկսիա** և այլ բառերը. սրանք հայերենի բառապաշարի մաս չեն կազմում, հանդիպում են խիստ հազվադեպ՝ հիմնականում թարգմանական գրականության մեջ (գեղարվեստական, գիտական): Ուրեմն հարկ է այս կարգի բառերը՝ էկզոտիզմները, տարբերակել սովորական փոխառություններից՝ այն օտար բառերից, որոնք արդեն մտել են հայերենի բառապաշարի մեջ, ունեն համեմատաբար ակտիվ կիրառություն, ծանոթ են լեզվակիրներին մեծ մասին:

Այնինչ «Լեզվաբանական բառարանում» օտարաբանություններն ու էկզոտիզմները նույնացվում են. «Օտարաբանություն - օտարալեզու՝ այլալեզու բառ, դարձվածք, արտահայտություն, արտասանություն..., որ գործածվում է մայրենի լեզվում, և որի օտարամուտ լինելը խոսող հանրության կողմից գիտակցվում է, և կամ որի համարժեք բնիկ միավորը առկա է մայրենի լեզվում: Սրանք գործող **նորմայից շեղվող և խորթ** ձևեր են» (ընդգծումն իմն է - Ա. Ք.), և նույն տեղում. «...օտարաբանությունները հաճախ գործածվում են այլ ժողովրդի կյանքի նկարագրությունը տալիս՝ տեղական կոլորիտ ստեղծելու համար»¹: Այսպի-

¹ «Լեզվաբանական բառարան», Եր., 1975, էջ 313:

սով, մեր լեզվաբանները հաճախ հստակ տարբերակում չեն մտցնում փոխառության և էկզոտիզմի, փոխառության և օտարաբանության միջև, այնինչ տարբերություն, այնուամենայնիվ, կա:

Էդ. Աղայանը շատ հպանցիկ անդրադարձել է այս հարցին. «Փոխառյալ բառերի մեջ յուրահատուկ տեղ են գրավում այսպես կոչված **հատկական փոխառությունները**: Այդպես են կոչվում այն փոխառյալ բառերը, որոնք ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային երեվույթներ, իրեր են»²:

Պ. Պողոսյանն էլ այս բառերը կոչում է **օտարամոծություն**. «Օտարամոծություն են այն բառերը, որոնք առնվում են օտար միջավայրից և տվյալ պահի թելադրանքով գործածվում են խոսքի մեջ՝ միջավայրի անմիջականությունն ընդգծելու կամ տվյալ գաղափարն այլ կերպ արտահայտելու հնարավորություն չունենալու պատճառով»³: Նա նշում է նաև, որ օտարամոծություններն ամենից հաճախ հանդիպում են թարգմանական գրականության մեջ, ինչպես նաև այն հեղինակների գործերում, որոնք գրում են այլ ազգերի, ժողովուրդների, երկրների մասին⁴:

Էկզոտիզմներին բավականին մանրամասն անդրադարձել ու անդրադառնում է ռուս լեզվաբանությունը⁵, թեև այնտեղ էլ երբեմն էկզոտիզմները նույնացվում են բառարանային համարժեք չունեցող բառերի (безэквивалентная лексика) և ռեալիաների (реалии) հետ: Խնդիրն ամենայն հավանականությամբ տերմինների միջև հստակության բացակայությունն է: Խառնաշփոթից խուսափելու նպատակով այս հոդվածում կգործածենք էկզոտիզմ տերմինը՝ որոշակիորեն առանձնացնելով էկզոտիզմները փոխառություններից և օտարաբանություններից: Իհարկե, էկզոտիզմները սերտորեն կապված են այսպես կոչված ազգային ռեալիաների (իրույթ)՝ այլ ժողովրդի կյանքին, կենցաղին, մշակույթին, նաև պատմությանն ու աշխարհագրությանը, լեզվամտածողությանը բնորոշ առարկաների, երևույթների, հասկացությունների հետ: Բայց ամեն դեպքում տարբերություններ կան. ազգային ռեալիաները էկզոտիզմներ են, սակայն ոչ բոլոր էկզոտիզմներն են ազգային ռեալիաներ, ինչպես նաև բառարանային համարժեք չունեցող ոչ բոլոր միավորներն են էկզոտիզմներ:

² Գ. Ջահուկան, Է. Աղայան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 330:

³ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 1, Եր., 1990, էջ 161:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 162:

⁵ Էկզոտիզմների և ռեալիաների մասին տե՛ս, օր., **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе. М., 1980. **Бархударов Л.** Язык и перевод. М., 1972, **Федоров А.** Основы общей теории перевода. М., 1983, **Гарбовский Н.** Теория перевода. М., 2004, **Верещагина Е., Костомаров В.** Язык и культура. М., 1990, **Рецкер Я.** Теория перевода и переводческая практика. М., 2004. **Алексеева И. С.** Введение в переводоведение. М., 2004 ևն:

Էկզոտիզմները, ի տարբերություն սովորական փոխառությունների, մեծ մասամբ այդպես էլ չեն դառնում փոխառու լեզվի ակտիվ բառապաշարի մաս⁶: Ընդգծենք, որ էկզոտիզմների մի մասը հաճախակի գործածվելու հետևանքով ժամանակի ընթացքում կարող է վերածվել սովորական փոխառության, ինչպես այսօր արդեն փոխառություն են (կամ փոխառություն դառնալու ճանապարհին են) **մանգո, կիվի, պիցցա, վիսկի, ռոմ, տեկիլա** և այլ բառերը: Դրան նպաստում են ժամանակակից տեխնոլոգիաները, տարբեր ազգերի, մշակույթների միջև ավելի ակտիվ շփումները, և որոշ ազգային ռեալիաներ դադարում են որպես այդպիսին գիտակցվելուց: Շատ բան կախված է նաև փոխառու լեզվում բառի գործածության հաճախականությունից:

Այս հոդվածում չենք անդրադառնա հին և հնագույն փոխառություններին, քանի որ դրանք վաղուց մերվել են մեր լեզվին և այլևս չեն գիտակցվում իբրև փոխառություն:

Եվ այսպես, արդի արևելահայերենում կա օտար բառերի մի քանի հիմնական խումբ՝ փոխառյալ բառեր, օտարաբանություններ, էկզոտիզմներ և պայմանականորեն օտարամոծություններ կոչվող բառեր:

1. Փոխառյալ բառեր (գիտակցվող փոխառություններ). սրանք վերցրել ենք օտար լեզուներից, քանի որ դրանց հայերեն համարժեքը չունենք կամ դեռ չունենք: Այդ բառերը սովորաբար անվանում են առարկա, երևույթ, հասկացություն, որոնք մտել են մեր կյանքի, կենցաղի մեջ. օր.՝ **անանաս, մանգո, կիվի, նոութբուք, պլանշետ, այֆոն, թրիլեր, բիկինի, խաչապուրի, բիսկվիտ, պելմենի** ևն:

2. Օտարաբանություններ. սրանք օտար լեզուներից վերցված այն բառերն են, որոնց հայերեն համարժեքը ունենք, լեզվակիրների մեծ մասն այդ համարժեքները գիտի, սակայն այս կամ այն պատճառով (հիմնականում սովորույթի ուժով) շարունակում ենք գործածել օտար բառը: Հատկապես շատ են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով վերցրած բառերը, իսկ վերջին տարիներին սրանց ավելացել են նաև անգլերեն բառերը (օր.՝ **սավոկ, վեդրո, շկաֆ, կուխնյա, լիֆտ, կռանտ, քոֆի, պրինտ, սեյվ, քենսըլ, էնթըր** ևն):

Հատուկ ուզում ենք ընդգծել, որ թեև համեմատաբար նոր փոխառած բառերի մի մասի համար ժամանակի ընթացքում ստեղծվում են հայերեն տարբերակներ, սակայն միշտ չէ, որ դրանք համագործածական են դառնում: Ստորև բերվող օրինակները վերցրել ենք տարբեր դասագրքերից, բառարաններից (այդ թվում և էլեկտրոնային), հոդվածներից⁷:

⁶ Տե՛ս, օր., «Словарь лингвистических терминов». М., 2006.

⁷ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, Ալ. Մարգարյան, Ա. Հայրապետյան, Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004, Ռ. Մաքաչե-տոյան, «Նոր և նորակազմ բառեր հայերենում» բառգրքույկ, Եր., 2014, Վ. Սահակյան, Ուղղագրության, կետադրության և խոսքի զարգացման ուղեցույց, Եր., 2014, Հ. Զաքարյան,

Կա մի քանի հիմնական պատճառ, երբ հայերեն թարգմանություններ գրեթե հնարավորություն չունի համագործածական դառնալու (լավագույն դեպքում դրանցից մի քանիսը երբեմն հանդիպում են միայն գրական-գրքային ոճերում, ինչպես այլուրեքությունը, ընկճախտն ու խափանարարությունը): Այդ պատճառներն են.

❖ Հայերեն բառը փոխառյալ բառի համեմատ չափազանց երկար է (**պուլտ-հեռակառավարման վահանակ** (որը հետագայում փոխարինվեց ավելի կարճ՝ **վահանակ, հեռավար** տարբերակներով), **ֆուտուրիզմ-ապագայապաշտություն, կուրիզմ-խորանարդապաշտություն, հակադեպրեսանտ-հակաընկճախտային (դեղա)միջոցներ, մենինգիտուղեղափառատապ, դիվերսիա-խափանարարություն** են):

❖ Անբարեհունչ է, երբեմն նաև զավեշտական (**շոկ-ցնցակաթված, շոկային թերապիա-ցնցաբուժություն, գինեկոլոզ-կնախտաբան, էֆորիա-բերկրաթմբիք, սենսացիա-ցնցադեպ, ֆլումաստեր-թաղքագրիչ, վաֆլի-փրփրահացիկ, կոմա-մահաքուն, սիֆոն-ծծաքաշ** են): Միկրոբը վաղուց թարգմանել ենք **մանրէ**, սակայն բոլորովին վերջերս լույս տեսած բառարանում մանրէի կողքին հանդիպեցինք նաև մեղմ ասած զվարճալի **«կենսիկ»** տարբերակին⁸:

❖ Թարգմանված բառն ամբողջությամբ չի արտահայտում փոխառյալ բառի իմաստը/իմաստները, քանի որ բնագրի լեզվի բառն ունի ավելի լայն իմաստ, իսկ թարգմանության լեզվի բառը թարգմանում է լավագույն դեպքում ընդամենը 1-2 իմաստը: Օր.՝ **կուլտուրա-մշակույթ**, բայց չենք ասի «մարդը խոսելու մշակույթ չունի», **կոլորիտ-գունավորում, երանգավորում**, բայց չի կարելի կոլորիտ ունեցող քաղաքին ասել գունավորում կամ երանգավորում ունեցող, **պրոցես-գործընթաց**, բայց չենք ասում բորբոքային գործընթաց, խմորման գործընթաց: **Աուտիզմն** էլ **ինքնամփոփությունը** չէ, ինքնամփոփ կարող է լինել ոչ միայն աուտիզմով հիվանդ մարդը: **Պոտենցիալը** թարգմանել ենք շատ դիպուկ ու գեղեցիկ **ներուժ** տարբերակով, սակայն դա բառի միայն մի իմաստն է թարգմանում, իսկ պոտենցիալ հանցագործը, պոտենցիալ մարդասպանը ոչ մի կերպ ներուժ ունեցող հանցագործն ու մարդա-

Օտարաբանությունների արտամղման միտումները հայերենում, «ԲԵՇ», 2002, № 1, էջ 133-140, Մայքրոսոֆտի «**Լեզվի սրահ**» (<http://www.microsoft.com/Language/en-US/Default.aspx>), Ռուս-հայերեն բառարան (<http://brn.armenia.ru/ru/brn>), Ռ. Թարումյանի մասնագիտական բառարանները (<http://books.tarumian.am/Grqer/Hamakargich/GirqHam.pdf>), ինչպես նաև՝ **Ա. Ղարիբյան**, «Ռուս-հայերեն բառարան», **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, **ԺՀԼԲ** են:

⁸ Տե՛ս **Ռ. Մաքսպետոյան**, նշվ. բառգրքույկը: Այս բառարանում քիչ չեն արևմտահայերենից վերցրած այսպիսի անբարեհունչ կամ զավեշտական բառերը՝ **մանեկեն-մարդափոխան, խոլեստերին-մաղձետ, շարմանկա-անվաջութակ, կոնտրաբաս-համաբամբ, շոկոլադ-կոլոնաստ** են, որ նույնիսկ արևմտահայերենում չեն գործածվում, և այնքան էլ պարզ չէ, թե ինչու են այսպիսի բառերն ընդհանրապես ընդգրկվել բառարանում: Հանուն արդարության ասենք, որ բառգրքույկի հեղինակն առաջաբանում նշում է, որ որոշ բառերի հետ ինքն էլ համամիտ չէ:

սպանը չեն: **Պրոֆեսիոնալ** արվեստագետին, նկարչին, քանդակագործին էլ չես ասի **արհեստավարժ**, ուրեմն արհեստավարժն էլ պրոֆեսիոնալի համարժեքը չէ: **Աբսուրդն** էլ **անհեթեթությունը** չէ միայն. արսուրդի թատրոնը անհեթեթության թատրոն չէ:

❖ Մի օտար բառի դիմաց ունենք մի քանի հայերեն տարբերակ, ինչը խառնաշփոթի պատճառ է դառնում. **ինֆորմացիա-լրատվություն//տեղեկատվություն//հաղորդատվություն//տեղեկույթ, բրաուզեր-զննիչ/զննարկիչ/դիտարկիչ, տերմին-գիտաբառ//եզր//եզրույթ//եզրաբառ, scanner-ծրիչ/պատկերամուտ, cursor-նշիչ/նշիկ/նշորդ, desktop-սեղան/սեղանակ//աշխատասեղան** են:

❖ Լեզվակիրների մեծ մասը տեղյակ չէ, որ կա հայերեն տարբերակ (**сoвoк- աղբաթի/զոզաթի/-ակ//աղբհանիչ, պլաստիլին-ծեփոն, դիսպետչեր-կարգավար), скрепка-ամրակ, рожок-կոշկաթի/եղջյուրիկ//հագնելաթի** (դարձյալ մեկից ավելի տարբերակներ, որոնցից ոչ մեկն էլ գործնականում գրեթե չի կիրառվում):

❖ Փոխառյալ բառն այնքան տարածված է, որ հայերեն համարժեքն այդպես էլ համագործածական չի դառնում (հիշենք բավականին վաղուց թարգմանված որոշ բառեր՝ **անանաս-արքայախնձոր, կինոնկար//ֆիլմ-շարժանկար, կենգուրու-ագեվազ** են): Ընդ որում՝ երբեմն հայերեն տարբերակը կարող է շատ բարեհունչ, հասկանալի բառ լինել, ինչպես, օր., **սմայլիկ-զմայլիկը, կինոնկար-շարժանկարը** են: Թեև կինոնկարի պարագայում հարցը բարդանում է, երբ փորձում ենք թարգմանել կինոգործիչ, կինոթատրոն բառերը. այստեղ արդեն շարժանկարով բառեր չենք կազմում:

Գրեթե ամեն ինչ թարգմանելու կողմնակիցները հաճախ են ասում, որ օտար բառերի հայերեն համարժեքները ստեղծելը ճիշտ է, քանի որ հայերեն տարբերակները թափանցիկ են իմաստով: Ցավոք, դա միշտ չէ այդպես: Երբ անհասկանալի **օբսիմոռոնը** փոխարինվում է նույնքան անհասկանալի **նրբաբանություն** տերմինով, դրանից ոչ չլեզվակիրն է շահում, ոչ չլեզուն: Օտար **էկզեման** գուցե և անհասկանալի է ոչ մասնագետի համար, սակայն դժվար թե **թրմաքոս** «թարգմանությունը» ավելի հասկանալի դարձնի այն: Կամ էլ արդյոք **ջերմուժ** բառն այնքան թափանցիկ է, որ փոխարինի **կալորիային**: Իսկ կալորիական սնունդը ջերմուժայի՞նն է: Տարիներ առաջ փորձեր արվեցին փոխառյալ **շախմատ** բառը արևմտահայերենում գործածվող **ճատրակով** փոխարինելու՝ առանց հաշվի առնելու, որ ճատրակը նույնպես փոխառյալ է (հնդկերենից): Ուրեմն ո՞րն էր իմաստը ցանկացած արևելահայի համար հասկանալի, համագործածական շախմատը նույնպես փոխառյալ, բայց չգործածվող ճատրակով փոխարինելու: Եվ բնական է, որ ոչ ճատրակը, ոչ ճատրակորդը (շախմատիստ) այդպես էլ տարածում չգտան: Եթե որևէ օտար բառ թարգմանում ենք, նպատակն այն պիտի

լինի, որ թարգմանությունը հասկանալի լինի, իսկ եթե մի բառարան էլ պետք է, որ հասկանա, թե ինչ է նշանակում այս կամ այն «վայ-թարգմանությունը», ո՞րն է թարգմանելու իմաստը: Բժշկական մի հոդվածում հանդիպեցինք **ներբեղմնիկ** բառին, բայց այդպես էլ հնարավոր չեղավ պարզել, թե ո՞ր բառի թարգմանությունն է այն: Ընդհանրապես բժշկության ոլորտում անհաջող ու անհեթեթ թարգմանությունները քիչ չեն. հաճախ բժիշկներին բառարաններ ու հնարամտություն է պետք լինում՝ գլխի ընկնելու, թե որ բառն է այս կամ այն «թարգմանության» տակ:

Թարգմանությունը համարժեք է, եթե այդ բառը իսկապես գործածական է դառնում (կամ գոնե մեծ մասը գիտի այդ թարգմանության մասին), ոչ թե մնում է միայն բառարաններում և երբեմն հայտնվում դասագրքերում ու շտեմարաններում: Ճիշտ չէ օտարաբանություն համարել այն փոխառյալ բառերը, որոնց համար հետագայում ստեղծված հայերեն տարբերակները դեռևս զուգահեռ գործածվում են, ընդ որում՝ փոխառյալ բառն անհամեմատ հաճախ: Դրանք լավագույն դեպքում կարելի է համարել հոմանիշներ. օր.՝ **ռեալիզմ-իրապաշտություն, նովել-նորավեպ, սիմվոլիզմ-խորհրդապաշտություն, կլասիցիզմ-դասականապաշտություն, նատուրալիզմ-բնապաշտություն, պուժե-դիպաշար, կոլորիտ-գունավորում, պոեզիա-չափածո, տեքստ-խոսքաշար** (ի դեպ, երբեմն խոսքաշար են թարգմանում կոնտեքստը՝ համատեքստը, ոմանք էլ խոսքաշարը գործածում են ենթատեքստի (подтекст) փոխարեն) ևն:

Մի՞թե կարելի է հայերեն համարժեք համարել հետևյալ թարգմանությունները՝ **պիկնիկ-զբոսախնջույք, տանկ-հրասայլ, կոմպոզիտոր-երգահան, քիմիա-բնալուծություն (քիմիկոս-բնալուծ), բադմինտոն-փետրագնդակ, բիսկվիտ-կրկնեփուկ** ևն: Սրանցից և ոչ մեկն իրականում նշված փոխառությունների համարժեքը չէ: **Չբոսախնջույք** բառն օգտագործողներ գործնականում գրեթե չկան (ի դեպ՝ **պիկնիկը** ևս): Ռազմական ոլորտում նույնպես **հրասայլը** չի գործածվում, որովհետև **տանկ** բառով կազմվող մյուս բառերի մեջ հրասայլն անհեթեթ է հնչում՝ **հակատանկային-հակահրասայլային, հրասայլորդ, զրահահրասայլային** ևն: **Կոմպոզիտորը** միայն **երգահանը** չէ. դժվար է պատկերացնել, որ Մոցարտն ու Բախը, Բեթհովենը երգահան են: **Սոնետի** համար առաջարկվող **հնչյակը** նույնպես դժվար թե դուրս մղի սոնետ բառը (նույն տրամաբանությամբ պիտի թարգմանենք նաև տրիտլետ, գագել, ռուբայի, թանկա ևն բառերը): Նկատենք, որ վերը նշված բառերի մեծ մասը արևելահայերենը վերցրել ու վերցնում է արևմտահայերենից, սակայն արևելահայերենում դրանք այդպես էլ լայն տարածում չեն ստանում: Որքան էլ ցավալի է, բայց արևմտահայերենը վերջին նվազագույնը 40-50 (եթե ոչ ավելի) տարում գիտության լեզու չէ. արևմտահայերենով գի-

տական աշխատություններ, դասագրքեր, հոդվածներ ևն գրվում են գրեթե բացառապես հումանիտար ոլորտում՝ լեզվաբանություն, գրականագիտություն, պատմություն, արվեստ ևն: Այնպես որ թարգմանված բառերը մնում են սուկ բառարաններում, գործնականում չեն կիրառվում կամ շատ հազվադեպ են կիրառվում, ու արևմտահայերեն խոսող սփյուռքահային, մեղմ ասած, տարօրինակ չեն թվում ո՛չ **բնալուծն ու բնալուծարանը** (քիմիկոս և լաբորատորիա), ո՛չ **անկարգելն ու անկարգելորդը** (պարաշյուտ և պարաշյուտիստ), ո՛չ **հրասայլորդն ու հակահրասայլային ականը**: Եթե **Ֆիզիկան** թարգմանում ենք **բնագիտություն**, ապա ի՞նչ անենք **Ֆիզիկական մեծություն**, **Ֆիզիկապես**, **Ֆիզիկական ուժ** ևն բառերի ու բառակապակցությունների հետ, **քիմիական մատիտը** արդյո՞ք **բնալուծական մատիտ** է: Արևմտահայերենում **ռադիոն** վաղուց թարգմանել են **ձայնասփյուռ**: Գուցե և շատ թափանցիկ, բարեհունչ բառ է, սակայն **ռադիո-արմատով** մյուս բառերի մեջ գործածում են հենց **ռադիոն՝ ռադիոպլիք**, **ռադիոկայան** ևն: Վերջերս մեկն էլ առաջարկում էր **տեխնիկա** բառը «թարգմանել» **գիտույթ**: Իսկ թե ինչ պիտի անենք **տեխնիկապես**, (**գիտա**)**տեխնիկական**, **գյուղտեխնիկա** ևն բառերը, հայտնի չէ՞⁹:

Հատկապես վերջին 2-3 տասնամյակում շատ տարածված է օտարաբանություն՝ անհարկի փոխառություն համարել գրեթե այն բոլոր բառերը, որոնց համար հայերեն տարբերակներ են առաջարկվում՝ անկախ այն բանից՝ այդ հայերեն տարբերակը իրականում գործածակա՞ն է, թե՞ ոչ: Շատ լեզվաբաններ (և ոչ միայն լեզվաբաններ) հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ վաղուց փոխառած բառը ունի ոչ միայն զուտ անվանողական, այլև հուզական, զգացական, արտալեզվական կողմ, որ հաճախ հնարավոր չէ արտահայտել նոր ստեղծված հայերեն տարբերակով: Օր.՝ **բոլշևիկ**, **կոմունիստ** բառերը արևելահայի համար հուզականորեն երանգավորված բառեր են, իսկ դրանց թարգմանությունը՝ **մեծամասնական** և **համայնավար**, որ վերցրել ենք արևմտահայերենից, դուրս են թողնում բառի արտալեզվական ողջ ինֆորմացիան:

3. **Էկզոտիզմների** մեծ մասն, ինչպես արդեն նշել ենք, ազգային ռեալիաներ են: Սրանք այն օտար բառերն են, որոնք արտահայտում են այնպիսի առարկա, երևույթ, հասկացություն, որ գոյություն չունեն փոխառող ազգի, ժողովրդի պատկերացումների, կյանքի, կենցաղի մեջ, և հետևաբար այդ բառերը չունեն համարժեքներ այդ լեզվում: Այս բառերը գրեթե երբեք չեն դառնում փոխառու լեզվի բառապաշարի մաս:

Էկզոտիզմներ շատ են հանդիպում թարգմանական գրականության մեջ: Դրանք ստեղծում են համապատասխան կոլորիտ, միջավայր: Այս բառերը սովորաբար գրադարձվում-տառադարձվում են հաշվի

⁹ Բոլոր բառերը վերցրել ենք արդեն նշված տարբեր բառարաններից, դասագրքերից, հոդվածներից, համացանցից:

առնելով թարգմանության լեզվի առանձնահատկությունները, լեզվական, մշակութային և այլ ավանդույթները: Ավելի հազվադեպ էկզոտիզմները թարգմանվում են բառապատճենման//կիսապատճենման կամ իմաստային պատճենման միջոցով, սակայն նույնիսկ այդ դեպքում դրանք սովորաբար գիտակցվում են իբրև այլ երկրի, ժողովրդի մշակույթին բնորոշ երևույթներ (**House of Lords - Լորդերի պալատ, սակե- քրնձօղի, ռոմ-եղեգնօղի** ևն):

Էկզոտիզմները բաժանվում են մի քանի հիմնական խմբերի՝ 1) ազգային ճաշատեսակներ, համեմունքներ, 2) ազգային նվագարաններ, 3) ազգային պարեր, 4) չափման և դրամական միավորներ, 5) տիտղոսներ, պաշտոններ, 6) տվյալ ազգին բնորոշ կենցաղային իրեր, 7) ազգային տարազի տարրեր, 8) ծեսեր, սովորույթներ, ավանդույթներ, ազգային տոներ, 9) միայն տվյալ երկրին, տարածքին բնորոշ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, 10) հատուկ անուններ՝ անձնանուն, տեղանուն, աշխ. անուն ևն (հազվադեպ հանդիպող, 1-ին անգամ գործածվող), 11) հասարակական-քաղաքական ռեալիաներ, 12) դիմելիքներ ևն:

Նշենք մի կարևոր բան ևս: Գոյություն ունեն այսպես կոչված **փոխարինելի և ոչ փոխարինելի էկզոտիզմներ**: Փոխարինելի էկզոտիզմ առնելով նկատի ունենք թարգմանական գրականության մեջ հանդիպող այն օտար բառերը, որոնք թարգմանության լեզվում թեև ունեն բառարանային համարժեք, բայց օգտագործվում են բնագրի ազգային կոլորիտը, միջավայրը, ժամանակաշրջանը ևն պահպանելու համար: Օրինակ՝ թեև հայերենում ունենք անգլերեն **mister, mistress, miss**, ֆրանսերեն **madame, mademoiselle**, լեհերեն **pan, pani**, գերմաներեն **frau, herr, fraulein**, իտալերեն **señora, señorita, señorina** բառերի բառարանային համարժեքները, սակայն թարգմանական գրականության մեջ շատ հաճախ գործածվում են սրանց տառադարձված-գրադարձված տարբերակները՝ **միստեր, միսիս, միս, մադամ, մադմուազել, պան, պանի, ֆրաու, հերր, սինյորա, սինյորինա, սինյորիտա**: Այս բառերը նույնպես չենք կարող համարել օտարաբանություն՝ անհարկի փոխառություն միայն այն պատճառով, որ դրանց հայերեն համարժեքն ունենք, քանի որ դրանք միանգամայն այլ նպատակներով են կիրառվում. ստեղծում են օտար միջավայրի, օտար մշակույթի «պատրանք»:

Բերենք էկզոտիզմների օրինակներ թարգմանական գրականությունից:

Յո. Տոմանի և Մ. Տոմանովայի «Սոկրատես» վեպում բազմաթիվ էկզոտիզմներ կան. դրանց գործածության նպատակը մեկն է՝ վերականգնել վեպում նկարագրվող դեպքերի ժամանակը, միջավայրը, համապատասխան կոլորիտ ստեղծել: Պարզ է, որ այդ էկզոտիզմները կան նաև թարգմանություններում (և՛ ռուսերենում, և՛ հայերենում): Դրանց

մեծ մասը տառադարձված//գրադարձված է, իսկ տողատակում կամ գրքի վերջում կան համապատասխան ծանոթագրություններ (դրանք կամ թարգմանության միջոց են՝ նկարագրական թարգմանություն)։

արքուններ - Աթենքի՝ մեկ տարով ընտրվող ինը բարձրաստիճան պաշտոնատար անձինք, **դրախմա** - փողի հիմնական միավոր Հունաստանում, **լեկիթոս** - սրվակ, կավե ոչ մեծ աման՝ անուշահոտությունների համար, **կոտիլե** - հեղուկի չափման միավոր (12 կոտիլե=1 խուս, մոտ 3,3 լիտր), **հետերա** - չամուսնացած, ազատ կյանք վարող կին. Հունաստանում այսպես են կոչվել նաև պոռնիկները, **հիմաստիոն** - տղամարդկանց, երբեմն կանանց երկար թիկնոց, **խիտոն** - գոտևորված անթև, երկար վերնաշապիկ, **պեպլոս** - կնոջ շապիկ, նման տղամարդկանց խիտոնին են¹⁰։

Շ. Բրոնտեի «Ջեյն Էյր» վեպի հայերեն թարգմանության մեջ նույնպես կան էկզոտիզմներ¹¹։ Դրանք կամ տառադարձված//գրադարձված են, սակայն ծանոթագրություններ չկան. օտար բառերի իմաստը պարզ է դառնում համատեքստից.

«Իսկ ինչքան է հեռու: - Հիսուն **մդոն, սըր**», «**Միսս** Սմիթը ձեռքս դրեց երկու **յարդ** երկարությամբ մարմաշի մի կտոր», «Լոռուում ստանում էի ընդամենը 15 **ֆունտ**», «Շտապ պատրաստեք մի քիչ տաք **գրոզ**», «Իմ բաժին մի **պինտա պորտերն** ու մի կտոր **պուդինգ** դրեք մատուցարանի վրա» են:

Շատ են էկզոտիզմները հասկապես արկածային գրականության մեջ: Այս գրականության մեծ մասը հայերեն թարգմանվել է միջնորդ ռուսերենից: Բերենք օրինակներ Հ. Ռ. Հագարդի «Մոնթեսումայի դուրսորդ», Մայն Ռիդի «Սեմինոլների առաջնորդ Օգեոլան» և Ժյուլ Վեռնի «Խորհրդավոր կղզին» վեպերի թարգմանություններից¹²:

էկզոտիզմների մեծ մասը տառադարձվել է, սակայն երբեմն թարգմանիչները բառապատճենումներ կամ իմաստային պատճենումներ են արել, երբեմն էլ համադրել են թարգմանության երկու եղանակ՝ տառադարձումն ու հենց տեքստում կամ տողատակում՝ նկարագրական թարգմանությունը: Ընդգծենք, որ այս դեպքերում հաճախ հենց բնագրի հեղինակն է դիմել այս եղանակին՝ տեքստում միաժամանակ տալով իր գործածած էկզոտիզմների բացատրությունը:

«**Սարգաս** կոչվող ուտելու ջրաբույսեր» (Ժ. Վ., էջ 55), «Անտառում կային մի քանի փշատերև ծառեր, այդ թվում և **դեոդարներ**» (Ժ. Վ., էջ

¹⁰ Օրինակները մեջբերում ենք չեխ գրողներ **Յո. Տոմանի, Մ. Տոմանովայի** «Սուրբատես» գրքից, Եր., 1986 (թարգմ. Վ. Վարդանյան): Թարգմանությունը միջնորդ ռուսերենից է:

¹¹ Օրինակները մեջբերում ենք **Շ. Բրոնտեի** «Ջեյն Էյր» վեպից: Եր., 1988 (անգլ. թարգմ.՝ Ա. Բուդալյան):

¹² Օրինակները մեջբերում ենք հետևյալ գրքերից՝ **Հ. Ռ. Հագարդի**, Մոնթեսումայի դուրսորդ, Եր., 1983, **Մ. Ռիդի**, Սեմինոլների առաջնորդ Օգեոլան, Եր., 1984, **Ժ. Վեռնի**, Խորհրդավոր կղզին, Եր., 1985:

36), «Թոշում էին տրագոպանները: Դրանք հավի նման թոշում են և պատկանում են փասիանների ընտանիքին» (Ժ. Վ., էջ 65): «Ոսկե գրահի փոխարեն կրում էին մգդակած բամբակե գրահ՝ **Էսկաուպիլներ**» (Հ. Ռ. Հ., էջ 155), «Որքան էլ խմեի, մեսկալի և **պուլկեի** գոլորշին վայրկենապես ցնդում էր գլխիցս» (Հ. Ռ. Հ., էջ 203): Տողատակի ծանոթագրություններում բացատրվում են վերջին երկու էկզոտիզմները (ոգելից խմիչքների անուններ են): Ժ. Վեռնի վեպում շատ են հատկապես էկզոտիկ բույսերի, ծառերի, կենդանիների անունները՝ **կալուստիան, բանկսիա, ագուտի, վապիտի** ևն: Մի քանի օրինակ էլ բերենք Մ.Ռիդից. «Ոտքերին **մոկասիներ** էին, որոնք ծածկված էին **խուննայով**... Դա նրա միակ հագուստն էր՝ ուլունքներով ասեղնագործված, կանաչ թութակների, վայրի բաղերի փետուրներով ու գիշատիչ գազանների մագիլներով զարդարված» (էջ 163), «**Վամպումները** վառվռուն գույներով գրկում էին գոտկատեղը, նրանց տակ խրված էին երկար դանակներ, **տոմահավկներ**» (էջ 122):

Այս բառերն, իհարկե, չենք կարող համարել սովորական փոխառություններ, սրանք հազվադեպ, մեկ-երկու անգամ գործածվող և հիմնականում թարգմանական գրականության մեջ հանդիպող բառեր են, որոնց մեծագույն մասը անգամ գրանցված չէ հայերենի բառարաններում:

Էկզոտիզմներ հանդիպում են ոչ միայն թարգմանական գրականության մեջ: Բնագրային գրականության մեջ էկզոտիզմները շատ ավելի հետաքրքիր դեր են կատարում, ու այստեղ շատ ավելի դժվար է տարբերել փոխառությունները էկզոտիզմներից և օտարաբանություններից: Կախված այն բանից, թե ինչ նպատակով է գործածվել այս կամ այն օտար բառը, այն կարող է համարվել էկզոտիզմ կամ օտարաբանություն: Փորձենք օրինակներով բացատրել ասածը:

Իսահակյանը «Աբու-Լալա Մահարի» պոեմում գործածել է մի շարք օտար բառեր՝ **քասիդ, սերաբ, իբլիս, վուհադի, սուրահ, ջեննեթ, ջեննեմ, սալամ, քոշք, խալիֆա** ևն, սակայն սրանք սովորական փոխառություն համարելը ճիշտ չէ: Այս բառերը էկզոտիզմներ են, որ ունեն ընդգծված արևելյան երանգավորում, բնորոշ են օտար միջավայրին ու հազվադեպ են կիրառվում այդ համատեքստից դուրս: Մրանց մի մասի համար համարժեքներ հայերենում ունենք՝ **սուրահ-գլուխ, ջեննեթ-դրախտ, ջեննեմ-դժոխք, սալամ-բարև** ևն, սակայն այս բառերն, իհարկե, անհարկի փոխառված օտարաբանություններ նունպես չեն. դրանք գործածվել են խիստ որոշակի ոճական նպատակներով՝ վերստեղծելու համար արևելյան միջավայրը: Օրինակ՝

«Բաղդադն էր նիրհում **ջեննեթի** շքեղ, վառ երազներում», «**Վուհադիներից** զով այուքն էր բերում վառ **քասիդները** այրող կարոտի», «Իսկ **սերաբները** նոր տեսիլներով բյուր պատրանքների», «**Մալա մ** քեզ,

արև՝ **շուքք** բյուրաբյուր», «Հողմերն անհեթեթ **ջինների** նման՝ Արու--
Լալայի խոժոռուն դեմքին, Քրքջում էին»...¹³:

Ադասի Այվազյանը 20-րդ դարի մեր ամենահետաքրքիր արձակագիրներից է: Ծնունդով թիֆլիսեցի գրողը հաճախ է անդրադարձել իր ծննդավայրին, և բնավ զարմանալի չէ, որ նրա ստեղծագործություններում ևս հանդիպում են էկզոտիզմներ, որոնք օգնում են վերստեղծելու թիֆլիսեցու կերպարը, թիֆլիսյան յուրօրինակ միջավայրը, այն առանձնահատուկ կոլորիտը, որ բնորոշ է միայն այդ քաղաքին:

«Դիպլիպիտո» ժողովածուի պատմվածքներում հին Թիֆլիսն է՝ իր պատմությամբ, ավանդույթներով, յուրահատուկ գեղագիտությամբ, բազմազգ ու բազմալեզու բնակիչներով¹⁴: Ուստի բնական է, որ հեղինակը գործածում է նաև վրացերեն բառեր՝ միջավայրը, թիֆլիսյան կոլորիտը վերականգնելու, հերոսներին անհատականացնելու համար: Վրացերեն բառերը հանդիպում են ոչ միայն հերոսների խոսքում. երբեմն հեղինակի խոսքն էլ է համեմված վրացերեն էկզոտիզմներով:

Հենց ժողովածուի վերնագիրը էկզոտիզմ է. **դիպլիպիտոն** վրացական ազգային երաժշտական գործիք է:

Էկզոտիզմներ են վրացական ազգային պարերի անվանումները. «Ու պարում է Ակոփը **բաղդադուրի, կինտաուրի**» (13): Էկզոտիզմներ են ազգային տարազի տարրերի անվանումները. «Թիֆլիսեցի Միսգարը՝ շալով ու **չիքիայով** պարուրված, պապական սնդուկի մեջ յոթ վերմակի տակ պահած իր պատիվն ու նամուսը ոսկե քորոցի նման **չիստիկոպիի** ճակատին խրած...» (6):

Զիքիլան երկար քող է, շղարշ, որ երիտասարդ կանայք զցում էին գլխներին, չիստիկոպին կրում էին ամուսնացած կանայք. դա գլխին դրվող թասակի պես բան էր՝ փոքրիկ քողով, որի տակից կախված էին արհեստական կամ բնական խոպոպներ:

Էկզոտիզմ է նաև **կինտո** բառը. «Էլ ի՞նչ **կինտո**, որ ինքն իրեն չհեզնի» (10):

Այդպես էին Թիֆլիսում անվանում ամենաաղքատ խավի ներկայացուցիչներին, որոնք հիմնականում զբաղվում էին ձկնորսությամբ, նաև տնից տուն, թաղից թաղ շրջելով՝ ձուկ, միրգ ու բանջարեղեն վաճառում: Սունդուկյանի «Պեպո»-ի շնորհիվ այս բառը մտել է հայերենի բառապաշարի մեջ, գրանցված է բառարաններում, սակայն այն չի դադարում էկզոտիզմ լինելուց, քանի որ հստակ կապվում է միմիայն Վրաստանի հետ (փակագծում նշենք նաև, որ եթե մեզ համար կինտոն դրական երանգավորում ունի, ապա վրացերենում այն բացասական է-

¹³ Օրինակները մեջբերվում են ըստ **Ավ. Բսահակյան**, Երկերի ժող. 2 հատորով., հտ. 2:

¹⁴ Օրինակները մեջբերվում են **Ա. Այվազյան**, Դիպլիպիտո (Եր., 1985) ժողովածուից (փակագծում նշվում է էջը):

րանգավորում ունեցող բառ է. հիմնական նշանակությունից բացի՝ ունի նաև անկիրթ, գռեհիկ, անտակտ իմաստներ):

Պատմվածքներում հանդիպում են նաև վրացերեն

.այլ բառեր, որոնք մտել են Թիֆլիսի բարբառի մեջ, սակայն միջին վիճակագրական հայ ընթերցողը այդ բառերը չի հասկանում, այնպես որ դրանք ևս էկզոտիզմներ են՝ օտար մշակույթին, միջավայրին բնորոշ հասկացություններ, օտար մշակույթի պատրանք ստեղծող տարրեր.

Լամազ Գեուրք (սիրուն) (էջ 4), «Չախալ Լադոն խում հայտնի **լոթի** էր» (խմող, հարբեցող) (էջ 14), «Տո հողե մ գլուխդ, **դամբլա**» (անդամալույծ, փխբ. իմաստով՝ շմամ, էշի ականջում քնած կն) (էջ 5), «Էսպես էին խմում Գլախոյի կենացը **դարաչոխելի** համբարները» (բառացի՝ սև չուխայավոր. այսպես էին անվանում լավ արհեստավորներին, նրանց նկատմամբ մեծ էր հարգանքը՝ ի տարբերություն կինտոների) (էջ 18), «Տո՛, ի՞նչ տղամարդ, որ էդ հասարակ բանը դարդ է դարձրել... **Տուտուցություն**» (տուտուց-ցանցառ, թերևստլիկ մարդ) (էջ 20) են:

Ինչպես տեսնում ենք, այս բառերը հայերեն մոտավոր կամ բացարձակ համարժեքներ ունեն, սակայն Աղասի Այվազյանը գործածել է հենց օտար՝ վրացերեն բառերը՝ Թիֆլիսի շունչը, ոգին, կոլորիտը պահպանելու համար:

Ժողովածուում կան նաև օտարաբանություններ, որ հիմնականում ռուսերեն բառեր են: Ինչպես արդեն նշել ենք, գեղարվեստական գրականության մեջ հատկապես դժվար է օտարաբանությունը էկզոտիզմից տարանջատելը. շատ բան կախված է օտար բառի գործածության նպատակից, ընթերցողին հասկանալի լինելու աստիճանից կն: Աղասի Այվազյանի այս ժողովածուում ռուսերեն բառերը, ի տարբերություն վրացերեն բառերի, չեն անվանում օտար երկրին, մշակույթին բնորոշ առարկա-երևույթ-հասկացություն. դրանք հատուկ են ոչ միայն Թիֆլիսի բարբառին, այլ կան/եղել են նաև խոսակցական արևելահայերենում, մեր մյուս բարբառներում: Դրանք «էկզոտիկ» չենք կարող համարել. «Լամազ Գեուրքին **կուտուզկա** են գցել: Էս նոր **նաչալնիկը** պատիժ դարձավ Թիֆլիսի գլխին» (էջ 4), «Միմզարը գնաց **Տիֆլիսկայա գուբերնսկայա սյուրմա**» (էջ 5), «**Գուբերնսկոյե ժանդարմսկոյե ուպրավլենիեն**» սկի դուռ չուներ» (էջ 5), «Ուզո՞ւմ ես **բոմբ** գցեմ **գուբերնսկի** բերդի վրա» (էջ 5) են:

4. Օտար բառերի մեջ թերևս կարելի է առանձնացնել նաև մի այլ խումբ կամ ենթախումբ, որ պայմանականորեն անվանում ենք **օտարաբանություններ**, քանի դեռ որևէ ընդունված տերմին չկա: Մրանք բառեր են, արտահայտություններ, թևավոր խոսքեր, որ սովորաբար ոչ թե գրադարձվում//տառադարձվում են, այլ փոխառու լեզվում գրվում են փոխատու լեզվի այբուբենով (թեև երբեմն կարող են նաև գրվել փոխառու լեզվի այբուբենով): Լ. Կրիսինը սրանք կոչում է **ИНОЯЗЫЧНЫЕ**

вкрапления¹⁵, Շանսկին՝ **варваризм**¹⁶: Այստեղ ևս տերմինների ճշգրտման, հստակեցման խնդիր կա, քանի որ նույն տերմինի տակ հաճախ տարբեր բաներ նկատի ունեն, կամ հակառակը՝ տարբեր տերմիններով կոչում են նույն երևույթները: Թե՛ հայ, թե՛ ռուս լեզվաբանության մեջ սրանք հաճախ դրվում են օտարաբանությունների (варваризм) տակ՝ տարբեր անվանումներով՝ լատինաբանություն, գաղիաբանություն, անգլիաբանություն ևն (латинизм, галлицизм, англицизм ևն): Թերևս տերմինների հարցում ավելի հստակություն կմտնի, եթե օտարաբանություն ասելով հասկանանք անհարկի փոխառությունները (**խալաձէլնիկ, ծիլիվիզո, կռանտ, պիլասոս** և նման բառերը), իսկ օտարամուծություն (լատինաբանություն, անգլիաբանություն, ռուսաբանություն ևն) ասելով նկատի ունենանք հենց այն թնավոր խոսքերը, արտահայտությունները, որ հաճախ չենք էլ թարգմանում, ու նույնիսկ գրում ենք օտար լեզվի այբուբենով:

Գրական-գրքային ոճերում հատկապես շատ են լատինական թնավոր խոսքերը: Հայերենում դրանք հանդիպում են մի քանի ձևով.

❖ լատինատառ - post factum, de jure, de facto, O, tempora! O, mores! Terra incognita, persona non grata, Veni, vidi, vici, tabula rasa, alma mater ևն.

❖ հայատառ - դե յուրե, դե ֆակտո, պոստ ֆակտում, պերսոնա նոն գրատա, ալմա մատեր ևն.

❖ թարգմանաբար - O, tempora! O, mores! - Օ՛, ժամանակներ, օ՛, բարքեր, persona non grata - անցանկալի անձ, post scriptum - հետգրություն ևն:

Սրանց շարքին կարելի է դասել նաև եվրոպական տարբեր լեզուներից վերցրած հետևյալ արտահայտությունները, որոնք հայերենում երբեմն գրվում են լատինատառ, երբեմն նաև հայատառ.

ֆրանս. **tête à tête**//տետ ա տետ, **Cherchez la femme**//շերշե լա ֆամ, **C'est la Vie**//սե լա վի, **Déjà-vu**//դեժավյու,

անգլ. **happy end**//հեփփի էնդ, **OK!**-օ՛քէյ,

իտալ. **finita la commedia**//ֆինիտա լա կոմեդիա, **dolce vita**//դոլչե վիտա,

իսպ. **No pasaran!**//նո պասարան, **Hasta la vista!**//հաստա լա վիստա ևն:

Այս խմբի մեջ են մտնում նաև այն օտար հատուկ անունները՝ թերթերի, ամսագրերի վերնագրերը, երաժշտական խմբերի, ֆիրմաների ևն անվանումները, որոնք երբեմն գրում ենք հենց փոխատու լեզվի տառերով՝ **CNN, BBC, Le Monde, Le Figaro, The Beatles, Queen, Cacharel, Chanel**, երբեմն նաև հայատառ՝ **Մի-էն-էն, Բի-Բի-Մի, Ֆիգարո, Բիթլզ, Շանել** ևն:

¹⁵ Տե՛ս «Иноязычные слова в современном русском языке». М., 1986, էջ 46-47:

¹⁶ Տե՛ս **Шанский Н. М., Иванов В. В., Шанская Т. В.** Краткий этимологический словарь русского языка. М., 1971, էջ 245:

Այս խմբի մեջ թերևս պիտի դնենք նաև խորհրդային ֆիլմերից, մուլտֆիլմերից հայերենին անցած ռուսերեն բազմաթիվ թևավոր խոսքերը, որոնք շատ հաճախ ենք գործածում առօրյա-խոսակցական, նաև հրապարակախոսական, գեղարվեստական ոճերում, սակայն դրանք մի տեսակ դուրս են մնում հայ լեզվաբանների ուշադրությունից համարվելով մերժելի: Բերենք օրինակներ.

Птичку жалко; учись, студент! убую, студент! надо, Федя, надо! все, кина не будет, электричество кончилось; Ларису Ивановну хочу; такие вопросы задаете, неудобно отвечать; такую личную неприязнь испытываю, что кушать не могу; все побежали, и я побежал; и тебя вылечат! ևն:

Այսպիսով, արևելահայերենում օտար բառերը կարելի է բաժանել մի քանի խմբի՝ **փոխառություն, օտարաբանություն, էկզոտիզմ**, իսկ չորրորդ խումբը պայմանականորեն անվանենք **օտարամուծություն**, թեև հարկ է այս բառերի համար առանձին անվանում ստեղծել՝ խուսափելու համար խառնաշփոթից: Սրանց միջև անխորտակելի պարիսպներ չկան իհարկե, սակայն տարբերությունները ևս ակնհայտ են: Մեր լեզվաբանության մեջ այս բառերի միջև քիչ թե շատ հստակ տարանջատում չկա, անմիօրինակություն է նկատվում նաև տերմինների հարցում:

Վերջում նշենք, որ վերը ասվածից բնավ չի հետևում, թե թարգմանելու փորձեր չպիտի արվեն. մենք ունենք համարժեք թարգմանված բազմաթիվ բառեր, որոնք բավականին արագ տարածվել և դարձել են գործածական, կամ գոնե լեզվակիրների մեծ մասը գիտի այդ բառերը՝ **ամնիստիա-համաներում, ալտերնատիվ-այլընտրանք, ժայռուզի-շերտավարագույր, էքսպորտ-արտահանում, իմպորտ-ներմուծում, վայրուտա-արտարժույթ//տարադրամ, կուրս(դրամի)-փոխարժեք, ինտերվյու-հարցազրույց, դիագնոզ-ախտորոշում, միքսեր-հարիչ, USB-կրիչ, կարդիոլոզ-սրտաբան, ինտերնետ-համացանց, միտինգ-հանրահավաք, անտիսեպտիկ-հականեխիչ, ռեյտինգ-վարկանիշ, գրանտ-դրամաշնորհ, էմբարգո-բեռնարգելք** ևն: Սակայն ամեն մի կոնկրետ բառ պիտի թարգմանվի՝ հաշվի առնելով թարգմանության բոլոր նրբությունները, հայերենի առանձնահատկությունները, լեզվական ու մանավանդ արտալեզվական գործոնները: Մենք շատ քիչ ենք օգտագործում նաև ներքին փոխառությունները. եղած բառին նոր իմաստ տալու միջոցով կարելի է ահագին նյարդեր ու ջանք խնայել, ինչպես **mous-մկնիկի** դեպքում: Լավ թարգմանությունները հարստացնում են լեզուն, բայց վերջին տարիներին նկատվող ծայրահեղ մաքրամոլությունը, ամեն օտար բառ անհարկի փոխառություն համարելու միտումը մեր բառարանները կվերածի արհեստական, ոչ կենսունակ, անհեթեթ ու զավեշտական բառերի շտեմարանների:

Բանալի բառեր – *օտար բառեր, փոխառություն, օտարաբանություն, էկզոտիզմ, ազգային ռեալիաներ, թարգմանության խնդիրներ, օտար բառերի թարգմանություններ*

АРЕВИК КАМАЛЯН – *Заимствования, варваризмы и экзотизмы (опыт дифференциации)*. – В статье даётся классификация иноязычных слов в современном восточноармянском языке. В армянской лингвистике до сих пор нет чётких разграничений между обычными заимствованиями, экзотизмами и варваризмами. Мало исследованы, в частности, экзотизмы. В статье сделана попытка разграничить иноязычные лексические единицы, проникшие в восточноармянский в последнее время. Отмечено также, что заметна тенденция переводить иноязычные слова, хотя подчас эти “переводы” трудно назвать эквивалентами, так как не были учтены многие лингвистические и экстралингвистические аспекты и тонкости. Объяснено, почему многие переведённые слова так и остаются в словарях и научных статьях и не становятся общеупотребительными.

Ключевые слова – *иноязычные слова, заимствования, экзотизмы, варваризмы, национальные реалии, проблемы перевода, перевод иноязычных слов*

AREVIK KAMALYAN – *Loanwords, Barbarisms and Exotisms in Eastern Armenian (an attempt of differentiation)*. – In this article, the author gives a classification of foreign words in the modern Eastern Armenian language. In Armenian linguistics, there is still no clear distinction between ordinary borrowings, exotisms and barbarisms. In particular, exotisms are little studied. The paper attempts to distinguish between foreign-language lexical units, penetrated into Eastern Armenian lately. It is also noted that there is a tendency to translate foreign words, although sometimes these “transfers” can hardly be called equivalents, as many linguistic and extra-linguistic aspects, subtleties of translation are not taken into consideration. The article presents the reasons why many translated words remain in dictionaries, scientific articles and are not generally used.

Key words: *foreign words, loanwords, exotisms, barbarisms, national realia, translation problems, translation of foreign words*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
АШОТ АБРААМЯН – кандидат филологических наук, доцент кафедры общего языкознания ЕГУ
ASHOT ABRAHAMYAN – PhD, Assistant Professor of the Chair of General Linguistics, YSU
Էլ. փոստ abrahamyan.ashot@yahoo.com
2. **ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
САРГИС АВЕТЯН – кандидат филологических наук, доцент кафедры общего языкознания ЕГУ
SARGIS AVETYAN – PhD, Assistant Professor of the Chair of General Linguistics, YSU
3. **ԱՐՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ** – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ապիրանտ
АРМИНЕ ГЕВОРГЯН – аспирантка кафедры общего языкознания ЕГУ
ARMINE GEVORGYAN – PhD student of the Chair of General Linguistics, YSU
4. **ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (ասիստենտ), ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող
ГАРИК МКРТЧЯН – кандидат филологических наук, ассистент Иджеванского филиала ЕГУ, научный сотрудник Института языка им. Р. Ачаряна НАН РА
GARIK MKRTCHYAN – PhD, Assistant Professor at the Ijevan Branch of YSU, Researcher at the Institute of Language after H. Acharyan NAS RA
Էլ. փոստ garik_mkrtyan@mail.ru
5. **ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ապիրանտ
ЛИАНА САРКИСЯН – кандидат филологических наук, ассистент кафедры армянского языка ЕГУ
LIANA SARGSYAN – PhD, Assistant Professor of the Chair of Armenian Language, YSU
Էլ. փոստ sargsyanlian@mail.ru
6. **ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ապիրանտ, ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի դասախոս
СИРАПИ КАРАПЕТЯН – аспирантка кафедры общего языкознания ЕГУ, преподавательница кафедры германских языков АГПУ
SIRARPI KARAPETYAN – A Research student of the Chair of General linguistics, YSU, lecturer of the English language at the chair of Germanic languages, ARMSPU
7. **ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ապիրանտ
АРЕВИК КАМАЛЯН – кандидат филологических наук, ассистент кафедры армянского языка ЕГУ
AREVIK KAMALYAN – PhD, Assistant Professor of the Chair of Armenian Language, YSU
Էլ. փոստ arevikik1@rambler.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

<i>Աշոտ Աբրահամյան</i> – Ներակայություն և հավելորդայնություն. լեզվական արտահայտման երկու բևեռները	3
<i>Ashot Abrahamyan</i> – Имплицитность и избыточность: два полюса языкового выражения	
<i>Ashot Abrahamyan</i> – Implicity and Redundancy: Two Poles of Linguistic Expression	
<i>Մարգի Ավետյան</i> – Հին հայերենի <i>ւո</i> (<i>uo</i>) երկբարբառի ծագման հարցի շուրջ	14
<i>Саргис Аветян</i> – К вопросу о происхождении дифтонга <i>ւո</i> (<i>uo</i>) в древнеармянском	
<i>Sargis Avetyan</i> – On the Question of the Origin of the Diphthong <i>ւո</i> (<i>uo</i>) in Old Armenian	
<i>Արմինե Գևորգյան</i> – Հին հայերենում երկակի թվի դրսևորումներն ըստ Անտուան Մեյլի	25
<i>Армине Геворгян</i> – Проявления двойственного числа в древнеармянском языке по Антуану Мейе	
<i>Armine Gevorgyan</i> – The Expression of Dual in Old Armenian According to Antoine Meillet	
<i>Գարիկ Մկրտչյան</i> – Հայերենի Ը հոդի ծագման և գործառության հարցի շուրջ	35
<i>Гарик Мкртчян</i> – К вопросу о происхождении и функционировании артикля ր в армянском языке	
<i>Garik Mkrtchyan</i> – On the Origin and Function of the Armenian Article ր	
<i>Լիանա Սարգսյան</i> – Փոփազդային խոսույթի հնչյունական և գրության յուրահատկությունները արդի հայերենում.....	44
<i>Лиана Саргисян</i> – Фонетические и орфографические особенности рекламного дискурса в современном армянском языке	
<i>Liana Sargsyan</i> – Phonetic and Spelling Peculiarities of Advertising Discourse in Modern Armenian	
<i>Սիրարիի Կարապետյան</i> – Անգլերենում և հայերենում բարդ բառի ու բառակապակցության տարբերակման հարցի շուրջ.....	58
<i>Сирарпи Карапетын</i> – О дифференциации сложного слова и словосочетания в английском и армянском языках	
<i>Sirarpi Karapetyan</i> – On the Problem of Differentiation of Compound Words and Word-Combinations in English and Armenian	

Բանավեճ և քննարկում
Дискуссии и обсуждения
Dispute and Discussion

<i>Արևիկ Գալաթյան</i> – Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ)	66
<i>Արևիկ Կամալյան</i> – Заимствования, варваризмы и экзотизмы (опыт дифференциации)	
<i>Arevik Kamalyan</i> – Loanwords, Barbarisms and Exotisms in Eastern Armenian (an attempt of differentiation)	
Տեղեկություններ հեղինակների մասին	81
Сведения об авторах	
Information about the Authors	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 07. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: